



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



18171


m.s

w w h

14




~~310~~





3869



ՅԵՒՀ

ԳԵՂԱԿԱՆ  
ՄԱՏԵՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

Ու Եղը ի՞նչ է : Ե՞նդէզ մարդի հանգեցյեալ  
աշխարհին մէջ խոսունի պըտմութեան մէջ  
ի՞նիոծ՝ պիտի մարդուն իրենց մէկը բուն քը-  
րոյ : Խոզմագունք : Եղադոգութութեան : 16 :

ԳՐԱԴԱՐԱՆ

Եղանակ գործազութեան : ԱՌԵՊԵՆ է՞նչ ըլլո-  
ւո՞ն բացադրութեանը մեջմուլ : Ի՞նպահել  
երջանիութեան : Տուն մը իտք ընդունիք իւ  
ովերի սանենոց գլուխ մը՝ և օրենքներ :  
Է՞նչ է անյնուիցութեանը : 31:

## ԳԼՈՒԽԸ. Դ

Ե՞նինասիրութեան վըայով աւ եմբէւք բացառ-  
քութիւնն ուլ : Ե՞նինասիրութեան շորժա-  
ռիլները : Ե՞նինասիրութեան ակագիլը , “  
Երանուծոյ իշխանութեանը պէտք իւնալ իւ-  
ստաջնորդէ” : 46.

## ԳԼՈՒԽԸ. Ե :

Տպաւ ինչը են նուտն Երանուծոյ թէլ քանի օ-  
րէնքը իւմանան , բայս զանց իւնեն անոնք :  
Արևոն մէռք ըլլոծ ըլլոտք անոնք՝ լիւ և պա-  
խտին ծանօթութիւնն ունաւ իշխանութեան  
Երանուծոյ վըայ : Այնուշը՝ սրուն համար որ  
պատշաճ չպատշաճ , մըս շատ նաև վըայ է : 62:

## ԳԼՈՒԽԸ. Զ :

Համաստու իւնենութիւն ուլ մէռքին վըայ : Բան-  
տին մէջէ գոտուն օրինակը : Այնուշի համար  
պարագանելիւթեանը՝ որ սոսի պատահիմին վախեն-  
իւլույ , ճշմարիս օպջաւմ չէ :

ԳՐԱԴԱՐԱՆ

93 :-

Digitized by Google

“ առ անդամ մշպահ ի լուսագով վանելը, և առ ը-  
րած բանին յանցանք ըւլտը իմանալը՝ ու  
առնց ճշմընի զարմուն եղած իւլտը :  
Ճշմընակն եղած զարմուն՝ մշպահ մէ-  
տի չի չի ելու, և ու լուսագով մշպահ մէ-  
տի հանդի ելու՝ ու անոր հանդանդի ելու՝ ու անոր  
հանդանդի ելու՝ հասագութ առաջարկութե-  
նէն է լու լու բան իւն է :

112:

ԳՐԱԴԱՐԱՆ

իւն մէկը մշխարդառեւ իւղացաց մէկ մէպէտ բա  
զւայ առնելիս բուռը մէպէտը վայ աւղա-  
ջում աղեղուկ ընե : Անյնանախառնակնեա : ՅՅու-  
րացէ օլովեանելլ : 127 :

127

М. С. КОНОПЛЕВЪ. 1914.

१०२४६०० दिसंबर, १९७७ तक

143:

ԳՐԱԴԱՐԱՆ

ՊՇՀԱՐԵԴ ՕՂՋՈՒՄ ՀԱՍՏԱԾՆԱԿԱՐԵ ԽԱՐԴԱՐԱ  
ՆՈՐ ՔԵՐՈՐԴՆ Լ ԱՌԱՊՈՒ-ԾՈՎ ՎԵՐԱ ՆԱՐԵԼՈՒ, Խ-  
ՎԵՆ, Ա ԲՈՎՈՎՆ ՎԵՆ Ա ԵՐԵԼՈՒ-Ն Ա- ԱՆՈՐ ՀԱ-  
ՎՈՆԴՐԵԼՈՒ-Ն ԱՐԱՐԱՊՈՒ-ԾՈՎՆ Ա ԵԽՆԱ-  
ՐՈՒ. ԽՈՎՈՒ-ՆԻ ԳՐԱԳՈՒ-ԾՈՎՆ Ա ԽՆԵԼՈՒ ԱՌԱՊՈ-  
ԾՈՎ ԳԵԼԵՐՈՎ Ա ԳԵԼԵՐՈՎՆ Ա ԵԽՆԵԼՈՒ-Ն ՀԱԽԱՐ.  
ՆՈՐ ՔԵՐՈՐԴՆ Լ ԱՌԱՊՈՒ-ԾՈՎ ԾՐԵՆՆԵԼՈՒ-Ն ՆԱ-  
ՐԵԼՈՒ, Խ ԱՆԱԽ, Խ ԱՐԱՐԵԼՈՒ-Ն ՀԱԽԱՐ ԷՐ ՅԱՆ-  
ՎՈՎՆ Ա ԵՐՈՐԴՆ Ա ԵԽՆԵԼՈՒ :

159:

## ԳԼՈՒԽՆ. ԺԲ:

Աղոթշնորհը նոր ինքնառվա է և մեղքելուն զբաց  
իւնայի լւէ առնոնք ինչը լուսաւծոց պէտ  
գործեր է : Խաչը զօդաւոր ինքնառվա մեղքը

իտակ . իր մեղքերը Աստիճայ իւնասարազո-  
նէ : Իր յանցանահին զբայ իողբայ ինուը՝ ո-  
րեշներուն ազէիւլիւն ընել չուզէլուն  
համար . 174 :

### ԳԼՈՒԽ . ԺՂ :

Ճշմարիտ ապաշխարովը իւ գրադակին  
զբայ սր սուրէշներուն գեշտլիւն ըրտա :  
Անոր հարացացամը իւնէ . իր խորհած և  
ներսիրին զգացած մեղքերուն զբայ իող-  
բայ , և իւցանիայ մաստր ըլուտ սրբավը :  
Իր բնութեանը սուրծ մեղքերուն գետ  
իւնունի սու իւհայաստանին : 189 :

### ԳԼՈՒԽ . ԺՂ :

Ճշմարիտ Օքջույ ընողը Աստիճայ շնորհա-  
զը իւնիւնի Շուլբովնէն մէկ բարեկարգու-  
թիւն իւ ընել իր վարչին : Ինուը սուրէշնե-  
րուն առ Քըիւդաս աստաղնորդելու գոր-  
ծիւ ըստունիշտիւնի իր իւնունին մէջը : 206 :

Գ. Լ. Ա. Խ. Խ. :

Ա՞ն սր Օ զատու սիւ ե՛ շաբանակ Օ զատու  
վըսյ պէտք ըւլոյ : Ասրբ Ն ո գին պէտք  
ապաւինի տնիկոց օգնաւթիւն ու պըստթիւն  
խնդրելու՝ սր Ա պատաժ սիրե ու անոր ծա-  
ռայի : Բալըրովկն ինչը Քրիստոն առշաբ-  
արդարութեանը վըսյ իր յոյու պէտք դնէլ ,  
սր ներողութեան գոտնոյ Ա պատաժ և սի-  
րանելու պըսյ անոր :

221 :

Գ. Լ. Ա. Խ. Խ. Օ. :

Ա բանի ժամանակի մեջ մէջ մարդ և Օ զատու պէ-  
տք սիր : Ինչ բանի սր եր իւյդէ մասարու  
Օ զատու սիրելուն :

237 :

Գ. Լ. Ա. Խ. Խ. Ժ. :

Ե հապաշտու մաղարէ և իւլոյլո Ա պատաժ  
խնդրելու սր Ա պատ Ն ո գին իւլո-  
լոյ սր Ն ո գին Ա պատ մաղարը իւլու-  
նորդէ պարա սիրելու , և անոնիով պայտ-

七

Են ան ին պատճ զաքարտ ին յադուի գովածու-  
զաքարտ ին ու սլույզ : Ս' եղանակ ընկած օպա-  
կա համար ցորդութեան : 252

252

ԳԱՅԻՆԻՑ ՃՐ:

Եղանակութեար իորդուց զեղաք գուլու յարդու-  
շելու համար հարցի հունէլը : 264 :

264.

Job 10:1-12, 14-15

10

$\approx 1.6 \times 10^{-10} \text{ J} \cdot \text{s}^2$

၁၃၈၂ ၁၃၉၀ ၁၄၀၀ ၁၄၁၀ ၁၄၂၀ ၁၄၃၀ ၁၄၄၀ ၁၄၅၀ ၁၄၆၀

# ԵՊԵԾՅԵԲԵՑՈՅՑ :

.....

## ԳԼՈՒԽ. Ե:

Տրամավեն առշվարտ պահապահն ունառինեցը :

ԽԱՄ Փոքրիկ բարեկամներս՝ որ աս  
գիրքը կըկարդան , կամ որոնք որ  
կըլսեն աս գիրքին կարդացվածքը ,  
կարելի է որ կողեն խմանալ թէ ին-  
չու ես աս գիրքը մէկ մօր մը իր տը-  
զոցը հետ խօսակցութիւն ընելու  
կարգովը կապված շիներ եմ : Եսիկա  
ես շինեցի՝ որ բանը էվելօք հաճելի  
կարենամ ընել . նաև կըխորհիմ որ՝  
աս կերպովս էվելի գիւրին հասկըց-  
վելու կրնամ ընել աս գիրքը :

Հիմայ ան բարեպաշտ կնկանը վը-  
րայ՝ որ իր տղոցը հետ հետեւալ  
խօսակցութիւնները կընէ , պէտք է  
գիտնալ , որ անիկա շատ անգամ իր

տղոցը համար՝ և անոնց հետն ոլ մէկ  
տեղ աղօթք կընէր . և ինքը կը փա  
փաքէր՝ որ ան տղաքը ամէնը հիսուս  
Քրիստոսի բարեկամները ու հե  
տեղոները ըլլան : Աս կնկանը անունը  
Գրամարիս էր , և տղոցը անուններն  
էին Գրիգոր՝ տաններկու տարվան ,  
Եղիսաբէդը տարվան , ու Երմոդ՝ վեց  
տարվան :

Աս կնկանը սովորութիւնն էր՝ ոք  
իր տղոցը ազատութիւն կուտար իրեն  
հետ շատ համարձակ խօսելու . և ա  
նոնք ալ ասանկ կընէին , որովհետե  
ղիտելին թէ որչափ մարելնին զիրենք  
կըսիրէր , և կուղէր ինքը՝ որ իրենց  
մէկ պիտանի վարժութիւն մը տայ :

Հիմայ Երմոդը՝ որ ամէնէն պըզ  
տիկն էր , սկըսեց զըուցել . Ո՞յշ  
ըիկ , ես չեմ գիտեր որ աղէկ մը հաս  
կընամ թէ ինչ պիտի ըլլայ Վեղքի  
վըայ ապաշխարելը կամ զլջալը .  
կըկամի՛ս հրամանքդ ինծի աս բանը  
մեկնել :

Անցը . Եւյ՛ զաւակս . Թէպէտ ես  
ատ բանին վրայ շամ զըռուցած եմ ձեւ  
զի ամենուղ : Շ ատոնցվընէ իմ մտքիս  
մէջը կայ , որ էվելօք ժամանակ գըտ  
նամ ու հոդ տանիմ՝ որ դուք բաւա  
կան կարող ըլլաք պայծառ կերպով  
ու կատարելապէս հասկընալու ան  
Եպաշխարիւլը , թէ ի՞նչ էլնշանակէ :

Երկառ . Ո՞յլը՝ ես դիտեմ Եպաշխա  
րանքին ի՞նչ նշանակելը . ըսել է  
թէ Ո՞եր մեղքին վրայ Տրոմիլ :

Դռեժոր . Քոյլը իմ՝ ատիկա ընդ  
հանրապէս մենք ամենս ալ դիտենք :  
Բայց ես կուրախանամ որ՝ Երմոգը  
ատոր վրայով մօրս հարցուց . ի՞նչու  
որ ես պիտի զըռուցեմ՝ որ շատ անդամ  
իմ վրայովս անանկ մը կիմանամ որ  
տակաւին չե հասկըցածի պէս եմ ան  
Զողումին կամ ապաշխարանքին ի՞նչ  
նշանակելը :

Անցը . Ե՞խ զաւկըներս , բոլորովին  
ատիկա հասկընալը և ի՞նչ նշանակե  
լը սրտերնուղ մէջը իմանալը դիւրի

բան չէ : « Եախնիք » և շատ էվելօք  
բարեպաշտ մարդիկներն ալ ասանկ  
կըզըուցեն ձեզի . Առւրբ Հոգիին կը-  
կարօտինք մենք՝ որ մեզի հասկըցու-  
նե և իմացունէ թէ ինչ է Շշմարիտ  
Օղջումը : Եւ քանի որ ես կը ջանամ  
ձեզի ատ բանը աղէկ մը հասկըցու-  
նել , Վմենակարող Կատուծմէն խըն-  
դիրք կընեմ Քրիստոսի միջնորդու-  
թեամբը՝ որ ձեզի իր Առւրբ Հոգին  
տայ , որպէս զի կարող ըլլաք ան  
Օղջումին կամ Վպաշխարանքին ինչ  
ըլլալը հաստատուն ու շատ աղէկ  
կերպով մը իմանալ , ինքնիրէննուդ  
ձեր սրտին մէջը զգալով ան Օրլ-  
ջումը :

Ծիտակ ես դուն Եղիսա , որ զը-  
րուցեցիր թէ Օղջալը կըցուցընէ  
մեղքերնուս վրայ տրտում ըլլալ :  
Իսայց դուք ամէնքնիդ ալ գիտցէք՝ որ  
Տրտմութիւնը զանազան տեսակներ  
ունի : Ո՞եզի պէտք է որ մեր մեղքե-  
րուն վրայ տրտմութիւն ընելու ճըշ-

մարիտ կերպը միայն ունենանք ներ-  
սիդինիս . քանզի ուրիշ տեսակ տըտ-  
մութիւնով չե' կրնար ըսվիլ որ մեղ-  
քերնուս վրայ զղջում կընենք :

Եղբայր . Այսոյ միտքդ կուգայ հը-  
րամանքիդ , որ ինտոր տըտում էի ես  
երբոր անցած շաբաթ օրը անձրե-  
կուգարնէ , որ մեղարգիլեց ան ժուռ-  
գալէն որն որ հըրամանքդ մեզի խոս-  
տացեր էիր :

Երբայր . Հապա ես ինտոր տըտում  
էի երբոր կորաընցուցի իմթուուցի-  
կըս , որնոր Ուափայէլ իմքեռիս շե-  
ներ ու ինծի տըվեր էր :

Անյա . Եղէկ . Հիմայ քիչմը խօսինք  
տըտմութեանը զանազան տեսակնե-  
րուն մէկ քանիին վրայ , և տեսնանք  
թէ ինչ են անոնք : Եղիսա , մե-  
ղագրըվելու մէկը կար մի , որ մենք  
անցած շաբաթ օրը չե կըցանք ժուռ-  
գալ :

Եղբայր . Չէ մայրիկ . Աստուած էր  
որ ան անձրելը բերել տըւաւ : Իմ

միտքս ալ կուղայ՝ որ հրամանքդ անատենը մեղի զըռւցեցիր թէ, պէտքը չէ որ մենք սըրդողինք բարկանանք կամ գանդատ ընենք . ինչու որ Աստուած՝ ինչպէս որ ինքը աղեկ կըսես պէ, մեղի ասանկ եղանակ մը կուտայ . և ինքը ինչ որ ընէնէ աղեկ է ու շետակ :

Այս . Հիմայ՝ անանկ է նէ պիտի ըսենք որ, ասիկա է մէկ տեսակ տրտմութիւն մը՝ որ մենք կընանք ունենալ . քանդի անատենն ալ երբոր ոչ մենք և ոչ ուրիշ մէկը մէկ սխալքան մը գործած ըլլայ, կընանք որ տրտմինք՝ և ուղենք որ ան պատահած բանը տարբեր եղած ըլլար քիչ մը :

Գարեգոր . Այս մայր, ես աս կերպ տրտմութիւն իմ վրաս իմացայ անատենը, երբոր Արմողին ոտքը սառին վրայէն սահեցաւ՝ և գետինը ինկաւ, ու այսափ վնասեցաւ իր անձը : Անիկա յանցանք մը չունէր, ինչու որ

Հըամանքդ իրեն հըաման ըլուր էիր  
որ երթայ պարտէղին մէջը քիչ մը  
ժուռ գայ : Խնծի շատ տրտմութիւն  
եղաւ երբոր անոր քաշած ցաւը տե-  
սայ , և ուզեցի՞ որ իրեն վնաս մը ե-  
ղած ըըլլայ :

Մայ . Եպքիս տղաս . հիմայ ձեզմէ  
մէկն ալ կընայ տալ ինծի ոս տեսակ  
տրտմութեանը մէկ ուրիշ օրինակ մը  
կամ նշան մը :

Երես . Աս ալ ներսիդիս տրտմու-  
թիւն խմացայ մայր , երբոր սառին  
վրոյէն դետինը լինիայ . հիմայ անի-  
կա միտքս լիյնալու ատենը տրտմու-  
թիւն կըզգամ քիչմը : Չեմ մտմտար  
որ ես միշտ բոլոր իմ կեանքիս մէջը  
առաջուց հետէ ասանի դէշ կերպով  
վնասներու հանգըլած էի :

Մայ . Դիցուք թէ Նըմոզ , ես քեզ  
արգելած ըլլայի՞ որ չերթաս ժուռ  
դաս պարտէղին մէջը . և անատեն ատ  
բանը դլխուդ դալու ատենը դուն ինչ  
կերպ զգացում պիտի ունենայիլ ներ-  
սիլիդ :

ԵՐԻՒԴ · Կալթեմթէ՞ ան ցաւը քաշելէս ետքը , ու երբոր Գրիգոր եղանայրո իմ առջիս ինկաւ իս տուն բեշելունէ , պէտք էր որ ան իմ անհնաղանդութեանս համար տրտմութիւն մը զգացած ըլլայի :

Ո՞յս . Ինչու ատ անհնաղանդութիւնը քուներսիդիդ ցաւ կամ տրտմութիւն պիտի պատճառէք :

ԵՐԻՒԴ · Ենոր համար որ՝ կըվախնայի ես թէ հըամանքդ իս պիտի պատժես :

Ո՞յս . Ուրեմն կերևայ որ՝ ուրիշտեսակ տրտմութիւն ալ կայ եղեր և Ես ան տրտմութիւնն է՝ որ մենք կիմանանք , երբոր յանցանք մը գործած կըլլանք՝ ու երբոր բան մը քաշելու կըլլանք , կամ բան մը քաշելու երկիւղ կունենանք՝ մեր ըրածյանցանքին պատճառաւը :

Գրէտո՞ք . Ո՞յս կերևայ որ ես ատեն ատեն տրտմութիւն կըքաշեմ , չէ թէ որ ես յանցանք մը ըրած եմ ,

Հապա որ կըտեսնամ տղոցը յանցանք  
ընելը , ու գիտեմ որ ան ըրածնին  
հրամանքիդ չուղած բանն է :

Եռկա . Այս իրաւ է , որ անատենը  
հրամանքդ մեղ կըչեխես ան բանին  
համար անանկ մեկ կերպով մը որ-  
պէս թէ դուն ես մեր մայրը :

Անյը . Աղջեկս , անվայել է ատ  
խօսքը որ եղբօրդ կըզրուցես դուն :  
Անիկաքեղմէն ու Երմողէն ալ մեծ  
է . և թէ որ ինքը ձեր յանցանք ը-  
րած ատենը ձեղ կըյանդիմանէ որ  
ատեն որ ես ձեր քովը եղած չըլամ ,  
անիկա տղէկ կընէ . թէպէս պէտք  
է իրեն ալ որ սիրով յանդիմանէ :  
Ես կուրախանամ որ տեսնամ թէ իմ  
տղոցմէս մէկը տրտմութիւն կըքաշէ  
մէկալներուն յանցանք մը ըրած ա-  
տենը : Անդի պէտք է ամէն իժիր  
տրտմութիւն քաշել , երբոր տես-  
նանք մէկը որ յանցանք մը կըգործէ .  
և պէտք է որ ջանանք ցուցընել ան  
մարդուն թէ ան ըրած բանը արժան

չէր իրեն որ ընէր : Ասոր համար կըր-  
նաճք ընել թէ աս ալ մէկ ուրիշ  
կերպ տրտմութիւն մըն է :

Ասկէց՝ ի զատ, ատեն ատեն մենք  
չենք մի տրտմիր մեղի պէտք եղած  
բանը որ պիտի ընենք, զանց ընել-  
նուս համար :

Եռևան . Այս հրամերես մայր .  
միտքս կուգայ որ անցած շաբթու-  
երբոր հրամանքնիդ ժուռ գալու կեր-  
թայիք, ինձի զրուցեցիր որ ես աղէկ  
աղջիկ մը ըլլամ, ու հանդարտնը  
տիմ և սերտեմիմ համարն : Ես առ  
ըսածդ ըրբ, ու քեզի անհնազանդ  
եղայ . և հրամանքդ տուն գալէն ա-  
ռաջ սկրսեցի տրտմութիւն ունե-  
նալ ան ըրած բանիս վրայ, բայց  
ալ ատենն ալ անցել էր համարս  
սերտելու :

Երմակ . Օք մը ես ալ տրտմութիւն  
քաշեցի որ ձեր խօսքին մտիկ ըրբ  
մայր, և կանչվատուք ընելէն չի  
դադրեցայ երբոր Գրիգոր հիւանդ  
էր : Հրամանքիդ միտքը կուգայ որ

իմ պղտիկ կառքս ձեռքէս առիր , և  
թող չի արւիր որ նորին անիկա ձեռ  
քըս առնեմ իրեք օր . որ անիկա ին  
ծի շատ տրտմութիւն քաշել տրւաւ :

Այս . Տայց ինչու համար տրտ  
մութիւն քաշեցիր Նղիսա՞ երբոր  
դուն ինծի անհնաղանդութիւն ըրիր,  
և քու դասդ չի սերտեցիր նէ :

Եղես . Հրամանքդ պիտես մայր .  
Հրամանքդ ինծի զրուցեցիր որ եթէ  
ես դասըս չի սերտեմ նէ , հետեւեալ  
օրը ձեր հետը չի պիտի երթամ ժուռ  
դալու կառքով . ու ես եղածին չափ  
իմարութիւն ըրի՞ որ ան աղլոր ժուռ  
գալը կորսընցուցի մէկ քիչեճիկ մը  
խաղալուս համար :

Այս . Անանկ է նէ կընանք հիմայ  
ասանկով ուրիշ տեսակ տրտմու  
թեան մը . վրայ խօսիլ : Ան է մէկ  
տրտմութիւն մը՞ որ մենք կըքաշենք  
մեզի պէտք եղած ընելու բանը զանց  
ընելնուս համար կամ ( որ նոյն բան  
է ) մեր պարտաւորութիւնը չի կա  
տարելնուս համար , և քիչ մը նեղու-

թիւն կըքաշենք կամ նեղութիւն քաշելու երկիւղ կունենանք ան բանին համար :

Գրեթո՞ւ . Ես ալ կըկարծեմ մայր ,  
որ ուրիշները իրենց պարտքը զանց  
ըրած տեսնալնուս ատենը տրտմութիւն կընանք ունենալ , ճիշտ ինտոր  
կընանք տրտմիլ երբոր կըտեսնանք  
անոնք որ յանցանք մը կըգործեն :

Այս . Խըալ է՝ տըղաս , և ասոր ալ  
կընանք ըսել թէ մէկ ուրիշ տեսակ  
տրտութիւն մըն է : Ուեղի պէտք է  
որ զանց չընենք ան նոյն ժամանակը  
ան որ մեր պարտքն է , ամեն կերպ  
յարմար ճամբաներով ջանք ընել  
յորդորելու ուրիշներն ալ իրենց  
պարտաւորութեանը :

Երկու . Ուայր՝ աս մեր զրուցած  
տեսակ տեսակ տրտմութիւններուն  
ըըն է՝ որ ան մեղի պէտք է ունեալ  
ալ մեր ապաշխարելու ատենը :

Այս . Ենտարակոյս պէտք է ըլլալ  
ը անոնցմէ մէկն ալ չէ Ճշմարիտ

տրտմութիւն : Աէկ մարդ մը որ զըդ  
ջում կընէ՝ միայն իր մեղքելուն վր  
լայ կըզդ ջայ : Աւ ասանկով անիկա  
չի կընար ուրիշ մարդոցը մեղքելուն  
վրայ զզ ջում ընել : Խնքը գուցէ  
տրտմութիւն կունենայ՝ որ ուրիշները  
յանցանք ըրած են կամ իրենց պարտ  
քը զանց ըրած են, բայց ասիկա ան  
տրտմութիւնը չէ ինչ որ օղջում  
ըսելով կիմացվի նէ :

**Կ**առուած ձեզմէ կըպահանջէ՝ որ  
զզ ջում ընէք, անո՞ր համար որ դուք,  
դուն Գրիգոր, դուն Եղիսա, դուն  
Նումոդ, անանկ բաներ ըրած ունիք  
որ յանցանք են . և անանկ բաներ  
զանց ըրած ունիքորն որ ձեր պարտ  
քըն էր ընելու : Եւ չէ թէ մենք պիտի  
տի ըսենք որ այս ինչ բանը ընելնուս  
կամ չընելնուս համար զզ ջացինք, որ  
անոնք մեղք մը չեն ըլլըվելովը կամ  
ըլլըվելովը : Յո կերպ բաներուն  
վրայ կըլայ որ տրտմութիւն ունենանք, բայց չենք կընար ըսել թէ

Օղջում ունեցանք : Միտքդ կուգայ  
 ան , որ երեկ Գրիգորը երբոք դուռը  
 կը բանար , Երմոգը հոն կայնած ըլ  
 լալով դուռը անոր գլխուն զարկաւ ,  
 ու անանի վնասեց անոր որ կանչ  
 վը ուսուքով լալ սկրսեց : Բայց  
 Գրիգոր աս բանիր ընելուն համար  
 մեղաղը ելի չէր . ինչու որ անոր միտ  
 քը չէր որ Երմոգը այնչափ մօտ կայ  
 ներ էր դուանիր : Խնքը շատ տրատում  
 եղաւ աս ըրած բանին համար . բայց  
 պատշաճ չէ որ ըսվի թէ ինքը Օրդ  
 ջում ըրաւ ան բանին վրայ : Այսպէս  
 ես ալ չէի գիտեր մինչև աս առառու ,  
 որ Գրիգորը հիւանդ է եղեր գի  
 շերը : Օձ որ առաջմանէ ես գիտ  
 յած ըլլայի ան , պիտի զգայի որ իմ  
 պարտքս է երթալ քովը ու հոգալ  
 անիկա : Կըցաւիմ որ չիմացայ ան  
 սոյն ժամանակը , որ երթայի քիչ մը  
 իրեն համար պէտք եղածը ընէի :  
 Բայց աս բանին վրայ Օղջում չեմ  
 ունենար . ինչու որ ամենևին չէի կըր

Նար մեղադրը վիլ . և պատճառ չու-  
նէի խորհելութէ Գրիգոր հեւանդ  
էր մի :

Հիմայ մենք ըստ բաւականին խօ-  
սեցանք մինչև աս առեն աս նիւթին  
վրայ . վաղը նորէն պիտի խօսակցինք  
աս նիւթին վրայով :

Գրիգոր բե՛լ ինձի Աստուածա-  
շունը , ու Աարիամին զըռւցէ որ  
ներս գայ : Երիկվան աղօթքին ժա-  
մանակն է :



## ԳԼՈՒԽ :

ԱՇԵՂՋ է նշ է : ԱՇԵՂՋ նաև ի հանդեպ յաջման  
աշխարհին մէջ խորսունի աղքամութեան մէջ  
ինչտե՛ աղքամ մահլ տան երենց մէջ յաջման  
վրայ : Խորմանուն : Ապա գործադրութեան :

ՀԵՏԵԼԵՎ իրիկունը Պամարիս  
տիկինը և տղաքը նորէն մէկտեղ  
ժողվրդեցան , և ուրիշ կերպ խօ<sup>ւ</sup>  
սակցութիւն կընէին Ըպաշխարու<sup>թ</sup>  
թեան վրայ , ինչպէս իրենց սովորու<sup>թ</sup>  
թիւնն էր ամէն իրիկուն , մինչև որ  
Պամարիս տիկինը լրմբնցուց աս օդ<sup>ւ</sup>  
տակար նիւթին վրայով զրուցելու իր  
խօսքերը :

Մայր . Աիրելի՛ զաւկընէրս , կը<sup>ւ</sup>  
յուսամ որ մեր ջանք ըստած ատենը  
որն ըլլալը ճշմարիտ զղջումը զտնա<sup>ւ</sup>  
լու համար , բոլոր զրուցված խօսքե<sup>ւ</sup>  
ըուն դուք ալական ջկընէքիոր : Օքէ  
և աս խօսքերը ձեզի զրուարձութիւն  
քերելու մը պէս ըրլան ալ մէկ պատ<sup>ւ</sup>

մութեան մը ըրածին պէս , սակայն  
ասոնք հասարակօրէն շատ պիտանի  
են մէկ պատմութեան մը պիտանի  
ըլլըվելէն աւելի : Օրուցած խօսքս  
Ճշմարիտ ասանկ է՝ աս հետևեալ  
կարծու յայտնի պատճառին համար .  
Պատճառն որ , եթէ դուք մեղքեր  
նուգ համար Ճշմարիտ զզջում մը  
ըլլգգաք սըրտերնուգ մէջը և ան  
զզջումը դուրսէն ձեր վրայ ալ ցու  
ցընելու ըրլուք նէ , ամենսեին չէք  
կընար երթալ Երկինքը :

Երբ . Ապա՞յլ Երկինքին մէջը  
եղող հրեշտակները Օղջում ըրած  
են մի :

Առաջ . Ի՞նչ բանի վրայ անոնք պիտ  
տի զզջան Երմոգ : Ախտքերնիդ չի  
դար , որ երէկ իրիկուն ձեզի ըսի թէ  
մէկը միայն իր մեղքին վրայ կընայ  
զզջում ընել : Գանք որ Երկինքի  
մէջի հրեշտակները ամենսեին մեղք  
չեն դործեր . և անոր համար չեն կըր-  
նար զզջում բնել : Ախայն մեղքի

Համար մենք կը բնանք դղջալ . միայն  
մեր ըրած մեղքերուն համար , միայն  
Յստուծոյ ուղածին պէս մեր սուրբ  
ըրլալուն համար , և մեզի ընելու  
պարտք չեղած բանը ընելնուս հա-  
մար , կամ մեզի պարտք եղած բանը  
ընելնուս համար :

Երևան . Մայր , ի՞նչ է առ քու  
զրուցածդ , ի՞նչ պիտի ըլլայ մեղքը ,  
կուզեմոր հասկըցունես :

Մայր . Վպրիս աղջեկս , որ հար-  
ցուցիր դուն ատիկա . բարի , հիմայ  
զրուցեմատոր վրայ . որովհետեւ ան  
մեզի կը բնայ օդնել , որով մենք աղեկ  
մը հասկընանք ետքէն թէ ի՞նչ է ձըշ-  
մարիտ զղջումը : Օրինակով պիտի  
հասկըցունեմ . Կայէ սա ժամացոյց .  
կէս ժամ զըեթէ առաջ է . երէկ ան  
նոյնչափ կամաց կերթարկոր . շա-  
բաթ մըն էոր ասանկ սխալ կերթայ .  
և չեմ կը բնարկոր գիտնալ թէ ի՞նչ  
է ատոր պատճառը :

Երևան . Մայր , կարծեմ շատ աղեկ

կընես հրամանքդ՝ որ Գրիգորին տաս  
անիկա, որ ժամագործին տանի :

Առյօն · Ձեւ · Դիցուք Ձեւ էս հիմայ  
աս ժամացուցին քիչ մը բան խօսիմ,  
ու ջոնամցուցընել իրեն իր պար-  
տաւորութիւնը՝ որ շիտակ երթայ :

Երեսուն · Առայր՝ ինտոք ատիկա մէկ  
շիտակ բան մը ինքիրմէն կընայ ը-  
նել : Ժամացոյցը ոչ շիտակը գիտէ  
ոչ ալ սխալը :

Առյօն · Ճշմարիտ է տըղաս ատ զըու-  
ցածդ · ինչու որ ժամացոյցը ոչ կըր-  
նայ խորհիլ՝ ոչ ալ կընայ իմանալ ·  
անիկա բանական հոգի չունի : Ենկա-  
րելի բան է անոր հասկըցունելը՝ Ձեւ  
ինչ է շիտակը ու ինչ է սխալը :

Գրեթոր · Կեցիր մայր՝ հրամանքիդ  
բան մը պիտի հարցունեմ · Շատ ան-  
գամ կերևայ որ շուն մը խորհուրդ  
կընէ զանազան բաներու վրայ · անի-  
կա չի գիտեր մի մայր, աղէկ ընելը  
ու գէշ ընելը · ուրեմն կընայ մի անի-  
կա զղջալ եր ըրած մէկ բանին վրայ :

Առաջ · Կարծեմ թէ չէ Գրիգոր ·  
 դուն շունի մը կրնաս որ հասկրցուն  
 նես թէ՞ այս ինչ բանը պիտի չընէ ,  
 կամ ուրիշ մէկ բան մը պիտի ընէ .  
 և ան բանին թէ որ ինքը անհնազանդ  
 գտնըվե նէ՞ կրպատժըվէ : թէ որ մէկ  
 շուն մը ատեն ատեն ծեծ ուտէ կա-  
 տու մը հալածելուն համար՞ որն որ իր  
 հետը նոյն տանը մէջ կըքնակի , ալ  
 վերջը անիկա ան բանը ընելէն ետ  
 կըկենայ , և անոր հետ սիրով կըվար-  
 վի : Ինքը ցաւ մը կիմանայ իր ծեծ  
 կերած ատենը , և ան ծեծին վախը  
 կըդպուշացունէ զինքը կատուն հալա-  
 ծելէն : Իայց անիկա իր ըրած բանը  
 միտքը բերած ատենը մէկ տրտմուն  
 թիւն մը չունենար իր ներսիդին : Ա-  
 նիկա չիմանար՞ որ իր ըրածը յան-  
 ցանք էր , և ան՞ որ ինքը մեղադրը-  
 վէլու արժանի է : Եւ աս բանս ընա-  
 կանաբար ճշմարիտ է ուրիշ ամէն ա-  
 նասուններուն վրայով . ինչու որ ա-  
 նոնք կարող չեն՞ որ հասկրնան թէ

՞ըն է աղէկը , և ո՞րն է գէշը : Ասոր  
 համար բոլորովին աննըման են մար-  
 դոց՝ կնիկներուն և տղաքներուն :  
 Յէ որ դուք ամէն կերպով աշխատիք  
 ալ որ կարենաք անոնց սորվեցունել  
 քիչեցիկ մը Աստուծոյ վրայ կամ Աս-  
 տուածաշունչին վրայ , բոլոր ան աշ-  
 խատութիւնները պարապ են : Անոնք  
 բան մը չեն գիտեր Աստուծոյ վրայով ,  
 կամ պարտաւորութեան վրայով , Եր-  
 կինքի՝ կամ Դժոխքի վրայով : Անոր  
 համար անոնք մեղք չեն կրնար դու-  
 ծել , և հետեւապէս չեն ալ կրնար  
 օդջում կամ ապաշխարանք ընել :

Դռէտու . Ա՛յր , ես ամեննեին ա-  
 ռաջ չէի մտմըտացեր աս կերպովը  
 որ հիմայ կըխորհիմ , թէ մենք ո՞րչափ  
 տարբեր ենք անասուններէն . քանզի  
 մենք կրնանք գիտնալ ո՞րն է աղէկը  
 և ո՞րն է գէշը :

Խռէստ . Ա՛յր , ասանկ կուգայ ին-  
 ծի՝ որ երբեմն գուցէ շատ գէշ մար-  
 դիկները շունի մը նման ըլլալ պիտի  
 ուզեն :

Անյը · Ինչու ասանկ կուզայ քեզի  
աղջիկս :

Եղբայր · Վանդի մէկ մարդուն իր ը-  
րած յանցանքին վրայ տրտում ըլ-  
լալը այնչափ գէշ կուդոյ որ ինձի  
կերեայ թէ, անոնք որ շատ գէշ բան  
մը կընեն նէ՞ կարելի է որ պիտի ու-  
զեն անասունի մը պէս ըլլալ, որ ի-  
րենք իրենց սրտերնուն մէջ տրտմու-  
մութիւն ըրպան, և չի զրդան իրենց  
յանցանքին վրայ :

Անյը · Ես աղջիկս · շատ գէշ  
մարդիկներ ասանկ ըստածիղ պէս ըլ-  
լալ ուղեցին որ մեղքերնուն վրայ չի  
խորհին, բայց պարապ տեղը : Ենոնք  
որ մեղք կրգուծեն պէտք է որ իրենց  
մեղքերնուն վրայ մտմրտան : Եւ թէ  
որ իրենք աս աշխարհիս մէջ ան ը-  
րած մեղքերնին չի մտմրտալո՞ և ա-  
նոնց վրայ անհոգ ըլլալու ճամբայ մը  
գտնան ո՛ և իցէ կերպերով, բայց  
հանդերձեալ աշխարհին մէջը հար-  
կաւ ան մտմտուքը պիտի ունենան ի-

ըենք : Ե՞ստեղը՝ անոնք որ իրենց  
մեղքերուն վրայ չե զդաշած և իւ-  
լենց յոյսը Տէր Յիսուս Քրիստոսին  
վրայ չե դրած մեռած են նէ, աւ պի-  
տի մտմրտան բոլոր իրենց մեղքերնուն  
վրայ, և ան մեղքերը վրանին առ-  
նենուն պատճառաւ իրենց յիմար ու  
յանցաւոր ըլլանուն վրայ : Անոնք  
աս բանիս վրայ ամեն իժիր պիտի  
մտմրտան : Ասոր վրայ պիտի մտմր-  
տան ներսիդինին էվելօք կոկիծ իմա-  
նալով : Իրենց ըրած բաներուն վրայ  
պիտի դառնան նային ամօթով ու դո-  
դով . և ան իրենց գլխուն դալու ու  
քաշելու բաներուն վրայ պիտի նային  
անպատմելի յուսահատութիւնով մը :

Մտմրտացէք դուք աս բաներուն  
վրայ սիրելի գաւկըներս, ու երբոք աս  
կերպով մենք առաջ երթալով աղէկ  
մը ձաննչալու կրլանք մեղքին ինչ  
ըլլալը նէ, մատքերնիդ բերէք որ  
գուք մեղաւոր էք . որ անկէ ետեւ չէք  
կընար մեղքերնուդ վրայ խորհելն

Ետ կենալ . և թէ որ դուք աշխատիք  
 որ աս կեանքերնուդ մէջ ան մեղքերը  
 մոռցը վիճն , և այնպէս թէ որ ան մեղք  
 երնուդ վրայ ամենելին զզ ջում ըը  
 նէք նէ , ձեր մեռնելին ետքը՝ ալ ան  
 մեղքերուն վրայ մտմբտուքի մէջ պիտի  
 ըլլաք մէկ հոգւոր տրտմութիւնով  
 մը , որուն ինչպէս ըլլալը դուք հիմայ  
 չէք կրնար իմանալ : Դուք հիմայ չէք  
 կրնար խորհիլ թէ ինտոր աղետալի  
 և վշտալից պիտի ըլլայ ան մտմբտու  
 քը : Շիտակ զրուցեց Գրիգոր , որ  
 մենք շատ տարբեր ենք անասուննեւ  
 րէն . ինչու որ մենք կրնանք դիտնալ  
 ո՞ւն աղէկ է և ո՞րը գէշ է : Կաև շատ  
 տարբեր ենք անանցմէ , որ մենք ան  
 անկ հողի մը ունինք , որ մեղքին  
 պատճառաւը յաւիտեանս թշուառ  
 ըլլալու ընդունակ է և էվելօք սոս  
 կալի նեղութիւններու դիմանալու :  
 Անասունները կրնան դիմանալ մեծ  
 մեծ մարմնաւոր պատիժներու , ան  
 անկ ալ մենք . բայց ինչ օգուած .

ան դանազան մարմնաւոր նեղութիւն  
ները բնաւ չեն կրնար համեմատիլ  
հոգիին քաշելիքին, թէ որ անիկա  
հանդերձեալ աշխարհը երթալու  
ըլլայ իրեն աններելի ու անապաշխար  
մեղքերովը նէ :

**Ա**ստուած էր՝ որ ասանկ շատ տար  
բեր ըրաւ ձեղ անասուններէն. ինքն  
է՝ որ ձեզի բանական հոգի տըւաւ. և  
ինքն է՝ որ ըրաւ ան հոգին ընդունակ  
իմացողութեան թէ ո՞րն է աղէկ, և  
ո՞րը գէշ. և զիտնալու, որ երջանիկ  
պիտի ըլլաք՝ երբոր աղէկը ընէք, և  
թշուառ պիտի ըլլաք՝ երբոր գէշը  
ընէք նէ :

**Ա**սանկ ձեր կարող ըլլալովը ա  
ղէկն ու գէշը ճանչնալու ան երջա  
նիկ զգացումներուն հետ մէկտեղ որ  
դուք կունենաք ձեր աղէկ կիրքեր  
նուդ ու ըրածներնուդ վրայ նայելու  
ասեննիդ նէ, և ան թշուառական  
զգացումներնուդ հետը՝ որն որ կու  
նենաք երբոր գէշ կիրքերնուդ և

գործքելնուդ վրայ կընայիք, աս աւ  
մէնուն վրայ խօսելով մէկ խօսքով,  
կընայ ըսվել թէ դուք մէկ խղճմը-  
տանք մը ունիք :

Գ. Ե. Է. Վ. · Ա. պղտըտիկ տղաք-  
նելն ալ խղճմտանք ունի՞ն մի :

Վ. Ա. · Տըղաս շատ դժուարին  
բան է գիտնալ Ճիշտ ան ժամանա-  
կը, երբոր անոնք պինտ առաջ կըզ-  
գան թէ իրենց ըրածը կամ աղէկ է  
կամ գէշ : Եսանկ զգացումներ կընան  
ունենալ անոնք իրենց վարքին վրայ  
յայտնի կերպով անոնք ցուցընելէն  
շատ առաջ :

Բայց ձեզի ալ ինձի ալ հարկա-  
ւոր չէ գիտնալ բոլորովին պղտի տը-  
ղոցը խղճմտանքներուն վրայ :

Թէ որ ես կընամ հասկըցունել  
ձեզի թէ ինչ է բուն ձեր խղճմըտան-  
քը, և ան որ դուք Եստուծոյ առջեր  
մեղաւոր մըն էք : Թէ որ ես ձեզի  
մեկնելու ըլլամ թէ ինչ է Ճշմարիտ  
զղջումը, և ան զղջումը սրտեքնուդ

մեջը զգալը ցուցընեմ ձեզի : Օձէ որ  
ասանկ՝ շոգտոյն Արբոյ օգնութիւնու  
վը կընամ ձեզի ցուցընել ձեր յան-  
ցանքը՝ ու գլխունուդ գալու վտան-  
գը , և ձեզ յորդորելու ըլլամ՝ որ  
յոյսերնիդ Վրիտոսի ձեր մէկհատիկ  
Փրկիչին վրայ դնէք . ամենելին հոգս  
չի պիտի ըլլայ՝ թէ կընամ պատաս-  
խան տալ Գրիգորին ինձի ըրած  
հարցմունքին պէս բանի մը , թէ չէ :

Բոլոր ասանկ խիստ ու դժուարին  
նիւթերը Էստուծոյ կըճգեմ , որ ին-  
քը ստեղծեց պղտի տղոցը հոգիները ,  
և ինքը գիտէ ինտո՛ր գործածելը ա-  
նոնք մեծ մեծ ողորմութիւններով և  
առաւել Ճիշդ արդարութիւնով :

Ե՛ղիսա , ես քեզի հիմայ աս պիտի  
հարցունեմ . դուն անատենը երբոր  
ինձի անհնաղանդութիւն ըրիլ՝ հա-  
մարդ չի սերտելով նէ , ներսիդիէդ  
առանկ զգացում մը ունենալով և ա-  
նով անհնաղանդութիւն ընելու պար-  
տաւորեցար մի ինքիլմէդ : Եւ կամ

Ետքէն առ անհնաղանդութեանդ հա-  
կառակ տարբեր կերպով ուրիշ զգա-  
ցում մը և ներգործութիւն մը կրցար  
մի ունենալ ներսիդիդ , որով և հը-  
նաղանդ աղջիկ մը ըլլալ , և հան-  
դարտ կենալ ու սորվիլ համարդ :

Երդու . Կարծեմ մայր , առ ետքի  
ըսածիդ պէս թէ որ ուղելու ըլլայի ը-  
նել կընայի :

Մայր . Ընանկ է նէ Ճիշդ ո՞րն որ  
ուղեցիր և ինտոր որ յօժարեցար ը-  
նել նէ ըրիր նոյն բանը . կամ թէ  
ինքիրմէդ դուն աղատաբար ներգոր-  
ծութիւն մը ունեցար . ուրեմն ասկէց  
կերեայ որ դուն մէկ աղատ ներգոր-  
ծող մըն ես ինքիրմէդ :

Երդու . Մայր՝ ե՞ս ալ մի աղատ ներ-  
գործող մըն եմ :

Մայր . Տեսնանք եթէ դուն ալ ես  
մի . Ծե՛ր ինձի տա զիրքը : ( Երդու  
ելու գերը եր յօրը բերան ) :

Տե՛ս ինչպէս որ քեզի զըուցեցի նէ  
դուն ըրիր . դուն ինձի հնաղանդե-

ցար և մեկ աղեկ տղայ մը եղար :  
Հիմայ կընայի՞ր մի դուն ինծի ան  
հնազանդութիւն ընել :

Երնդ . Այս' անանկ կըկարձեմ  
մայր . ժամանակ եղեր է որ հրաման  
քիղ անհնազանդ գոնըվեր եմ . և թէ  
որ հիմայ ալուղելու ըլլայի , կըրնա  
յի անհնազանդ ըլլալ հրամանքիդ :

Առյօն . Բայց Ե՛րմոդ , թէ որ ես  
քեզի զըուցելու ըլլայի՞ որ դուն դէպ  
՚ի վեր ձեղունը թուչես , կընաս մի ը  
նել անիկա :

Երնդ . Չէ մայր . ինչու որ ես  
փետուր չունիմ :

Առյօն . Եւ պիտի խորհիս դուն  
ներսիդիէդ որ առ բանը չընելուդ  
համար պատիժի կամ յանդիմանու  
թեան արժանի ես :

Երնդ . Չէ չի պիտի խորհիմ :

Առյօն . Բայց թէ որ քեզի զըուցելու  
ըլլամ՞ որ ելլաս վերի սենեակը եր  
թաս , դուն ալ չընելու ըլլաս նէ ան ,  
պիտի խորհիս ներսիդիէդ որ դուն  
մեղաղը ըվելու արժանի եղար :

Երեսուն . Անշուշտ ասանկ պիտի  
խորհիմես . ինչուոր կընամվեր երա-  
թալ՝ թէ որ ուզեմնէ . բայց թուչել  
չեմ կըրնար՝ թէ որ էվելօք ալ ջա-  
նամ որ ան բանը ընեմ :

Ո՞յս . Ուրեմննայէ տղաս , որ դուն  
ալ մէկ քանի բաներուն մէջ աղատ  
ներգործող մըն ես , բայց չէ թէ ու-  
րիշ կերպ բաներուն մէջ :

Ալ վաղը պիտի խօսինք քիչ մը-  
էվելօք՝ առ ձեր աղատ ներգործող  
ըլլալուն վրայ :



Եաւու գործողութիւն : Ա մեղքն է նշ ըլլու-  
սուն բացադրութիւնը մէջաւ : Ո նպանէ  
երջանիութիւն : Տուն մը իստ ընդունիր, ճը  
ողիուկ ունենայ գլուխ մը՝ և օրէնքներ : Ի նշ  
է անյնասակըութիւնը :

Ա նյը . Շ ատ աղէկ տըղաքս, կը  
տեսնամ որ զուք ամենքդ աղատներ  
զործութիւն ունիք : Ես ձեզի զըուցե-  
ցի որ՝ աս առտու ժամը երկուքին աս-  
տեղ իմքովս գաք . և զուք շատ հող  
տարիք ան նոյն ժամին հոս գտնըվիլ:  
Ճիմայ աստեղ շատ կեցաք մի զուք :  
Գ րէ Ե ռ պ . Զ է մայր . միայն թէ քա-  
նի մը ըուղէ :

Ա նյը . Բ այց կընայիք՝ որ ձեր առ-  
ջե տեղը կենայիք՝ ու ինծի չի գայիք .  
և ինծի անհնաղանդ գտնըվէիք՝ թէ  
որ անանկ ընել ուղէիք նէ :

Ե ր բ ո գ . Խ մ սիրտս քիչ մը ուղեց  
մայր, որ իմ տեղս կենամ քիչ մը ա-

տեն, ու տեսնամ ան պատկերները՝  
որ Վարիամ ինձի պիտի ցուցըներ :

Անյը . Հապա ինչու չըրիր անանկ .  
թէ որ դուն ուղեիր ան բանը ընել՝  
կընայիր անանկ ընել :

Երման . Այս . բայց չուղեցի որ ը-  
նեմ :

Անյը . Ինչու համար չուղեցիր առ-  
տեղգալէդ էվելի Վարիամին քովը  
կենալ :

Երման . Վտմըտացի՝ որ հրամանքդ  
պիտի սրդողիս ինձի, և որ՝ ես ալ-  
ետքէն պիտի խորհիմ ներսիդիս՝ որ  
գէշ բան մըն էր հրամանքիդ հնա-  
գանդ չըլլալս : Ասկէց ’ի զատ, թէ  
պէտ սիրտս կուղէր ան պատկերներն  
ալ տեսնալ, բայց շատ ուղեցի հրա-  
մանքիդ խօսքը մտիկ ընել :

Անյը . Ահա ասոր պէս դուք ամենքդ  
շատ անգամ կըլլայ որ կուղէք բան  
մը ընել . և նոյն ժամանակը կըմտմը-  
տաք թէ պէտքը չէր՝ որ ան բանը ը-  
նէիք դուք : Կամ թէ կըլլայ որ՝ չէք

ուզեր դուք անանկ մէկ բան ընել, և  
ետքը կըխորհիք թէ պէտք էր որ ան  
բանը ընէիք : Աս բաները մտմբտա-  
լէն ետքը՝ վերջապէս կըհաստատէք  
ան երկու կերպ բաներէն որն որ պի-  
տի ընէք նէ : Թէ որ աղէկ բանը ը-  
նելու ըլլաք՝ անիկա ըրած տոեննիդ  
երջանկութիւն մը կիմանաք ներսի-  
դինիդ . բայց թէ որ գէշը ընէք՝  
թշուառութիւն մը կըզգաք ներսիդի-  
նիդ :

Երկու . Ապայլ , ինտո՞ր աղէկ մը  
մեր ներսի զգացումներուն վրայով  
տեղեկութիւն ունիս : Աս հրամանքիդ  
մեզի զրուցածին պէս ճիշտ ես հա-  
րիւր անդամ զգացում ունեցեր եմ :

Գրեթու . Անանկ ալ ես :

Երմակ . Ես ալ, որ երբ սիրտս կու-  
զէր ծառն՝ի վեր ելլալ թուչուննե-  
րուն բոյնը, ու գիտէի որ պէտքը չէ  
ան բանը ընել, որովհետեւ մայրս  
հրաման չունի :

Ապայլ . Գուն ծառն՝ի վեր ելլալ մի :  
5 ա

Երմագ . Չելայ , և անկէ ետև շատ  
ուրախութիւն զգացի ներսիդիս՝ որ  
հրամանքիդ անհնաղանդ չի դանըլեցայ :

Անյը . Կըտեսնաքեկոր տըղաքս , որ  
շատ բաներու մէջ դուք անձնիշխան  
ու աղատակամ էք : Դուք գիտէք ո՛րն  
է աղէկը և ո՛րն է գէշը . և զուք  
ինչպէս որ ուղէք կընաքեկոր ընել ,  
թէ աղէկ և թէ գէշ : Հիմայ պատասխան  
տըլէք ինծի աս ըրած հարց  
մունքիս : Երբոր դուք ներսիդինուդ  
պէտք եղածին պէս խորհեցաք և ա  
ղէկը ըրիք , ու անկէ ետև երջանկութիւն  
որ զգացիք , կամ ինչպէս որ  
պէտք էր նէ չի խորհեցաք ու յան  
ցանք ըրիք , և անկէ ետքը թշուա  
ռութիւն որ զգացիք նէ , դուք չիմացաք  
մի որ Ճիշտ ձեր սրտին ուղածին  
պէս էր ըրածնիդ :

Տուրք . Եյյո' , Եյյո' , Եյյո' :

Անյը . Չեղի տնանկ երեցաւ մի ,  
որպէս թէ մէկ մարդ մը կամ մէկ բան

մը ձեզ պարտաւորելու կամ ստիպելու վրայ էր՝ այնպէս ընել կամ խորհուրհիլ, ինչպէս որ ըրիք :

Դռեժոր . Չէ մայր . միայն թէ երբեմն ինծի կերեայ՝ որ շատ դժուարին է պէտք եղածին պէս խորհիլ ներսիդիս, ու անանկը ընել :

Մայր . Եյդչափ շատ դժուարին ընել տըւողը նր քանն է :

Դռեժոր . Մայր՝ ատիկա դժուար հարցմունք մըն է : Երբոր ես աղէկ տղի մը պէս կըխորհիմ և կըսիրեմ ձեզ, ու կուզեմ ձեր կամքը ընել և սիլել Եղիսան ու Երմոգը, ու կուզեմ որ անոնց ալ աղէկ ընեմ, անաշտեն ալ շատ դիւրին է ինծի աղէկը ընել : Տայց երբեմն ատանկ չեմ խորհիր . կուզեմ որ իմ կամքս կատարեմ : Հոգ չեմ ընել ամենելին ուրիշներուն վրայով . և անատեն ինծի շատ դժուար է աղէկը ընել :

Մայր . Չէս մտմըւար որ, երբոր ատանկ խորհիլու ըլլաս նէ՞ մեղադըւանքի արժանի ես :

Գրեթե՞ք . Կըխորհիմ . և աս խորհեւ  
լովս թշուառ կըլլամ ես :

Այս . Եղէկ տըղաքս . դուք ամենդ  
գիտէքկոր ու կիմանաք աչ որ դուք  
Եզատակամ էք :

Խելքերնիդ ալ կըհասնիկոր շատ  
բաներու նայելով թէ ո՛րն է աղէկը ,  
և ո՛րն է գէշը : Ու որ դուք խորհիք  
ու աղէկը որ ընէք , ատ բանը ձեզմէ  
կընէքկոր աղատ կամքով : Եւ թէ որ  
խորհիք ու գէշ բան մը ընէք , ան  
ալ ձեզմէ կընէք աղատ կամքով : Եր  
բոր դուք կըխորհիք ու աղէկը կը  
նէք , ձեր խղճմտանքը բարեհած է  
մնատեն . և ան պատճառաւ դուք ալ  
երջանիկ էք : Բայց երբոր գէշ բան  
մը կըխորհիք ու մեղք կընէք , խղճ  
մտանքնիդ դատախաղ կըլլայ ձեղի  
մնատեն . և ան պատճառաւ դուք  
թշուառ կըլլաք :

Հիմայ կըտեսնաքկոր որ դուք մեւ  
դաւոր էք եղեք : Ինչու որ շատ ան  
գամ խորհեցաք ու մեծ մեծ յան

յանքներ դործեցիք : Զեզի պէտք  
չեղած բանը ընելը խորհեցաք՝ ու ը-  
րիք . և ձեզի պէտք եղած բանը ը-  
նելը չի խորհեցաք՝ ու չըրիք :

Եղէսամ . Մայր , ամէն մարդ ալ մե-  
ղաւո՞ր է մի :

Անց . Այս' աղջիկս , ամէնն ալ .  
բանզի ամէնն ալ մեղք դործած են .  
պէտք է ան ամէնուն ալ՝ որ իրենց  
մեղքին վրայ զղջան , և յոյսերնին  
· Քրիստոսի վրայ դնեն՝ որ իրենց  
մեղքերուն թողութիւն ըլլայ և անկէ  
ետև փրկութիւն :

Բայց ես կուզեմ որ՝ դուք , սիրե-  
լի՝ տղաքս՝ ուրիշներուն վրայ չի մըտ-  
մըտաք աս մասին մէջ , միայն թէ ին-  
քըզինքներնուդ վրայ : Ես կուզեմ  
որ՝ դուք մտմըտաք՝ ու իմանաք թէ  
մեղաւոր էք . ինչու որ եթէ աս բանը  
ձեր վրայ չի մտմըտաք՝ դուք չէք ու  
զեր մեղքերնուդ վրայ զղջալ , ու  
փրկութեան համար · Քրիստոսի վրայ  
յոյսերնիդ դնել :

Գրեթոք . Ես գիտեմ որ ես մեղք  
զործած եմ , և անոր համար ալ պիտի  
դատապարտը վիմ . սակայն մայր  
իմ , կուղեմ որ աղէկ մը իմ գիտցա-  
ծէս եվել հասկընամ թէ ինչ է  
մեղքը :

Մայր . Ետիկա ես ձեզի եվելօք կա-  
տարելապէս պիտի բացայայտեմ հի-  
մայ . բայց խօսած առենա՞ կուղեմ որ  
դուք ամենդ աղէկ ականջ կախէք ինչ  
որ ես պիտի զըուցեմնէ :

Ինչ կըկարծես՞ Գրիգոր , որ կը  
պատահի մեր պզտիկ դերդաստանին ,  
թէ որ ես քեզ մէկալ տղաքը ու Մա-  
րիամը թող տամ՞ որ ուղածնիդ ը-  
նէք , և ձեր վրայ ես մէկ տեսակ կա-  
ռավարութիւն մը որ չունենամնէ :

Գրեթոք . Գիտեմ մայր ինչ ըլլալը :  
Ենանկ պիտի ըլլայ ինչպէս որ ան օ-  
րը եղաւ , ո՞ր օր դուք մեր մօրաքոյ-  
րին Սարային տունը գացեր էիք , եր-  
բոր մենք այնչափ հակառակութիւն  
ըրինք և իրար անցանք ու տակնու  
վրայ եղանք :

Եղիսամ . Աղբէկ Գրիգոր , բոլոր ա՛տ  
բաները անոր համար եղաւ որ դուն  
վարժապետ ըլլալ ուղեցիր :

Երիտ . Չէ՞ ատանկ չեղաւ Եղիսա .  
առաջ դուն սկըսեցիր Ամարիամին  
վրայ հրամայել . և Գրիգորը զրու-  
ցեց քեզի՝ թէ առ կերպ ըրած բանդ  
յանցանք է :

Առաջ . Կեցիք տղաքս . դուք զիւ-  
տէք՝ որ ես տուն գալու ատենս ձեր  
ըրած դործքերը քննեցի , ու քանի  
մը շաբաթ առաջ բանին ինչ ըլլալը  
իմացվեցաւ : Պէտքը չէ որ նորէն ան  
բանը յայտնի ընենք : Ինձի ցաւ կը լ-  
լակոր՝ որ դուք տակաւին առ բանին  
վրայով հակառակութիւն ընելու յօ-  
ժարութիւն մը ունիք : Հիմայ առ  
բանը կը ցուցընէ աս ատենն ալ՝ թէ  
ինտոր հարկաւոր բան մըն է՝ որ մէկ  
տուն մը գլուխ մը ունենայ , և որ՝ ան  
գլուխը պէտք է որ կառավարէ ան  
տունը՝ և կարգին պահէ անիկա :

Դրէժոր . Ամայր՝ ես առ բանին վրայ

կըխնդամ, որ հրամանքդ կըկառաւ վարես մեղ ամենքս : Շուտով մենք էվելօք խուվութիւն պիտի ունենայինք մէջերնիս՝ թէ որ հրամանքդ մեղ չի կառավարէիր նէ :

Անյը . Ի՞նչ բանը պիտի պատճառէր աս խուվութիւնը :

Գրեգոր . Ո՞ր բանն որ հրամանքիդ դաշտ օրը պատճառեց նէ՝ Ճիշդ նոյնը : Ա՞նք իրարու հետ չի պիտի միաբանութիւն ընենք . ինչու որ մէկը պիտի ուզէ մէկ բան մը ընել, և մէկալը՝ մէկ ուրիշ բան մը : Կըվախնամ որ ամեն մէկը պիտի ուզէ՝ որ կառավարէ ուրիշ մնացածները . և ասանկով կարդ կանոն չի պիտի ըլլայ, հապա ամենն ալանկարդութեան մէջ պիտի ըլլան :

Անյը . Օքաւկըներս, աս բանին Ճշմարիտ պատճառը աս պիտի ըլլայ որ՝ ամեն մէկը կուզէկոր ինքը ընքը առաջ դնել՝ կամ իր երջանկութիւնը, և մէկալ մընացածներուն վրա-

յով կամքիչ մը կըհողակոր , կամ  
ամենե ին հոգը ըլլարկոր :

Դիցուք թէ միշտ ամէն օր ես մի  
այն խորհելու ըլլամ իմ անձիս եր  
ջանկութեանը վրայ , և ձեր մինիթա-  
լութեանը ու աղէկութեանը վրայով  
որ ամենե ին հոգ ըընեմնէ ի՞նչ պի-  
տի պատահի արդեօք ձեզի ամէնուդ :

Երնու . Ալ անկէ ետև ես չեմ կար-  
ծեր՝ որ կունենանք առտրվան նախա-  
ճաշեկը կամ ցորեկվան հացը՝ կամ  
երիկվան կերակուրը վայելուչ կեր-  
պով : Ու երբոր լաթերնիս պատը-  
տի նէ նվ պիտի կարէ անոնք :

Երնու . Խրամէ . նաև մեզի համար  
պէտք եղածները նվ պիտի ընէ , լա-  
թերնիս լրւայ ու չորցունէ :

Գրեթոք . Կաև նվ պիտի մեզդըպ-  
րատուն խրկէ , ու մեզի համար գիբ-  
քել պիտի առնէ , և մեզի Վատուածա-  
շունչին վրայով տեղեկութիւններ  
պիտի տայ :

Առաջ · Տայց դիցուք թէ ալ ես  
Ճեղի թող տամ, որ ամէն մէկելնիդ  
Ճեր ուղածին պէս ընէք · ու չի պա-  
հանջեմ Ճեղմէ թէ ո՞ր բանն որ մեր  
բոլոր ընտանեաց վայելչութեանը ու  
աղէկութեանը կընայի նէ, անիկա ը-  
նէք դուք :

Գրէժոր · Առայր ես կըվախնամ որ  
մէնք հիմակվան եղածնուս կերպէն  
շատ տարբեր մէկ ընտանիք մը կը-  
լանք անատեն :

Առաջ · Իրաւցընէ անանկ կըլլանք ·  
անատեն շուտով կիմանաք դուք՝ թէ  
ինտո՛ր հարկաւոր է՝ որ մէկ տանը  
վայելչութեանը համար պէտքը չէ որ  
ամէն մէկը իր անձին օգուտին միայն  
նայի : Շ ուտով կըհասկընաք դուք՝  
որ ամէն մէկուն ըրածը պէտք է որ  
բոլորին աղէկութեանը համար ըլլայ :  
Ե՞ս ալ պիտի տեսնաք՝ որ մէկ բան մը  
թէ որ մէկն որ կըխոըհի իրեն մաս-  
նաւո՛ր բարութեանը համար, որ ան  
բանը բոլորին աղէկութեանը համար

չէ հապա անոնց դէմէ , նոյն բանը  
պէտք է որ ինքը մէկ դի ձգէ . և թէ  
որ կամովին անիկա մէկ դի չի ձգէ նէ  
մէկաները բռնութեամբ ձգել պիտի  
տան իրեն ան բանը : Պիտի տեսնաք  
որ պէտք է եղեր մէկ տան մը մէջ  
կառավարութիւն ըլլալ ու կանոններ  
կամ օրէնքներ . որ անոնց պիտի  
հնազանդին ամէնքը . և պատիժ ալ  
պիտի ըլլայ անոնց համար , որ օրէն  
քը չեն բռներ . և մէկ գլուխ մը պէտք  
է ըլլալ , որ նայի թէ օրէնքին հընա  
զանդ ըլլան , և օրինազանցները պատ  
ժըլին , ու ասանկով ընտանեաց եր  
ջանկութիւնը և բարեկարգ կանոնը  
պահվի :

Դրէժո՞յ . Ա՞յլը , ես առաջ բոլոր  
աս բաներուն վրայ ամենեին չէի  
խորհեր . հիմայ կըտեմնամկոր՝ որ  
ինչ մէկ անձնասէր ու անհնազանդ  
տղայ մը եղած եմ ես շատ անգամ , և  
որչափ հրամանքիդ նեղութիւն տր  
ւած եմ իմ դէշ վարմունքովս :

Անյը · Օաւակս , ուրախ եմ քեզմէ  
ասանկ խօսքեր լսելուս վրայ . և կը  
ցանկամ որ դուք ամէնքդ ալ կա-  
րող ըլլաք տեսնալու և էվելօք իմա-  
նալու ձեր գիտցածէն առելի՝ թէ  
անձնասիրութիւնը և անհնապանու-  
թիւնը ի՞նչ գէշ բան է ու մեղք է :  
Երժուտ · Անյը ի՞նչ է անձնասէր  
ըլլալը :

Անյը · Միտքդ չի՞ գար ան երէկ  
վան բանը , որ երբ Լզիսան քեզմէ  
կտոր մը խնձոր ուղեց նէ՞ դուն անոր  
քիչ մը չի տրւիր :

Երժուտ · Եղէկ , բայց ի՞նքն ալ առ-  
ջե օրը իր ունեցածէն կտոր մը չի  
տրւաւ ինձի :

Անյը · Ուրեմն դուք երկրուքդ ալ  
անձնասէր էք եղեր , և երկուքդ ալ  
գիտէք թէ ասանկ ընելը ի՞նչ կըցու-  
ցընէ : Երբոր դուք ուղելու ըլլաք  
մէկ աղէկ բան մը ընել միայն ինքը  
զինքներնուդ համար , կամ միայն ձեր  
միսիթարութիւնն ու վայելչութիւնը

նայելու ըլլաք , և չի կամիք կամ չե  
ցանկաք որչափ որ կը նաք նէ էվելօք  
նոյն բարութիւնը ուրիշներուն ալ ը-  
նել , և անոնց ալ ձեր անձերնուղ  
ըրածին պէս օգտակար ու երջանկա-  
ւէտ բարիք ընել նէ , գիտցած եղիք  
որ դուք անձնասէր էք : Դուք ամէն  
քըդ կըհասկընտք աս զըռցածներս .  
բայց ես կուզեմ աս բանին վրայով  
ձեզի էվելօք բացատրութիւն մը ը-  
նել մեր հետեւալ խօսակցութեանը  
մէջ :



Անյնոսիրութեան ծըսցավ ու հաւըք բոցա-  
դրութեան մը : Անյնոսիրութեան շորժ-  
առիլները : Անյնոսիրութեան ախտերը ,  
որ Աստուծոյ իշխանութեանը ուկա իւնու-  
թագուղնութե :

Մայր . Տըղաքս երեկ մենք անձ  
նասիրութեան վրայ խօսեցանք . բոյց  
հիմայ պէտք է որ աշխատինք էվելօք  
աղեկ մը քննելու անձնասիրութեան  
ինչ ըլլալը , որ ասանկով էվելի  
պայծառ պիտի տեսնանք մեղքին ինչ  
ըլլալը :

Գրիգոր , դուն բան մը զըռուցած  
կամ ըրած ատենդ շատ անդամ չե՞ս մի  
խորհիր՝ թէ ի՞նչ պատճառի համար  
ան բանը կըզրուցես կամ կընեսկոր :  
Ենիկա խօսելովդ կամ ընելովդ չե՞ս  
մի ուզեր որ՝ մէկ բան մը առնես  
իքը վարձք կամ քեզի համար կամ  
ուրիշներուն :

Գրեթոք . Այս մայր . երբոք մէկալ  
 առատու ան գիրքերը կարդաւ գրա-  
 տունին մէջը շարած ատենս այնչափ  
 շուտով կաշխատէի նէ , անատենը  
 հրամանքիդ ինձի զըռւցած խոստ-  
 մունքը կըմտմըտայի : Քանզի հրա-  
 մանքդ ինձի ըսիր , թէ որ կէս ժամու-  
 մը մէջ ընելու ըլլամանիկա , իս ձեր  
 հետը պիտի առնէք կառքով տեղ  
 երթալու : Եւ իմ անանկ շուտով  
 գործելուս պատճառը ան էր , որ ես  
 շատ ուղեցի ան զըռւաճալի կառքին  
 մէջը նստիլ զքօսանքի ելլալ :

Անցք . Դուն ալ Եղիսա , ինչու  
 համար այնչափ շուտով հուսեցիր  
 զուրպան առ օրհասրակին :

Եղէսա . Անոր համար որ հրաման-  
 քըդ ինձի զըռւցեցիր որ ան պզտի  
 աղքատ աղջեկը որուն համար որ ես  
 կը հուսէիկոր ան , շատ շուտով կու-  
 զէր ինքը ան զուրպան . ես ալ ուղե-  
 ցի որ կըցածիս չափ շուտով լմընցու-  
 նեմ անիկա :

Առաջ . Ուրեմն ան բաները որոնց  
համար որ բան մը կընենք , կամ ա-  
նոնց համար բան մը ընելին ետ կը-  
կենանք նէ , կըսվին Շարժառիթներ :

Թէ որ մենք բան մը խօսած կամ  
ըխած ատեննիս զիտնանք որո՞նք ըլ-  
լալը ան բանին Շարժառիթները նէ ,  
զիւրութեամբ կընանք հետեւցունել-  
ու ըսել թէ՝ մենք անձնասէր ենք  
կամ չենք ան բանը խօսելովնիս կամ  
ընելովնիս :

Թէ որ ան պատճառները միայն  
ինքը զինքներնուս մէկ օգուտ մը ձեռք  
բերելու համար ըլլան , և թէ որ  
մենք կամք չունենանք՝ կամ ամենելին  
հոգերնիս չըլլայ ուրիշներուն ալ  
աղէկութիւն ընելու նէ , անատեն  
մենք անձնասէր ենք :

Երեստ . Տայց մայր՝ պէտք չէ որ  
մեր անձին օգուտը ու երջանկու-  
թիւնը փնտըրուենք :

Առաջ . Խրաւ է աղջիկս , շխտակ է  
ատ , որ դուն ասանկ պէտք է որ ընես՝

միայն թէ որ դուն ան բանը կուզես՝  
որնոր խակապէս քեզ երջանիկ պիտի  
ընէ , չէ թէ Ճիշտնոյն առենը եր-  
ջանիկ հապա միշտ ու միօրինակ  
երջանիկ . և չէ թէ սոսկ աս աշխար-  
հիս մէջը երջանիկ , հապա մինչեւ  
յաւիտեանս երջանիկ : Բայց թէ որ  
դուն քու երջանկութիւնդ ան կեր-  
պով ուզելու ըլլաս՝ որ ուրիշներուն  
աղէկութեանը արգելք ըլլաս , կամ  
թէ կրցածիդ չափ էվելօք հոգդ չը-  
լայ՝ որ ուրիշները այնչափ բարութիւն  
ունենան՝ ու այնչափ երջանկութիւն  
վայելեն՝ որչափ որ դուն կրվայլես ,  
անատեն դուն քու սրտովդ ու դործ-  
քովդ անձնասէր ես :

Պատեր . Այս հրամանքդ ո՞րչափ  
աս բաները մեզի բացատրեցիր նէ ,  
ես այնչափ կրվախնամ՝ որ մէկ անձ-  
նասէր տղայ մը եղայ : Կիմանամ  
թէ ի՞նչ կըցուցընեն ան շարժառիթ-  
ները . ու երբոր կըխորհիմ ան պատ-  
ճառներուն վրայ՝ որոնց համար որ

բան մը զրուցեցի կամ ըրի , պէտք է  
որ խոստովանիմ թէ ուրիշներուն  
բարութեանը համար միայն թէ քիչ  
մը հոգ ըրի , և զբեթէ բոլորովին  
միայն իմ աղէկութիւնս փրնտըռեցի :

Անյը . Երաւ ես զաւակս . ես ալ  
կըվախնամոր ամէն իժիր դուք ասանկ  
կընէք . պէտք է որ ես ձեր քովը շատ  
համարձակ ըլլամ՝ տըղաքս , և ձեզի  
զրուցեմ որ տակաւին չեմ կրնարկոր  
տեսնալ ձեզմէ մէկուն վրայ անանկ  
ընաւորութիւն մը ունենալ , որուն  
պէս Վատուած մեզմէ կըպահանջէ :  
Վատուած Առւրբ Գիրքին մէջը կը-  
զրուցէ թէ՝ Պէտք է որ մենք ուրիշ-  
ները մեր անձերնուս պէս սիրենք :

ԱՌ իմ սիրելի՝ զաւկըներս , ԵՌը  
պիտի ըլլայ՝ որ դուք զգաք աս սէրը .  
ԵՌը պիտի ըլլայ՝ որ դուք փնտըռեք  
ձեր ճշմարիտ երջանկութիւնը , ջանք  
ընելով՝ որ ուրիշներն ալ երջանիկ  
ընէք :

Կըտեսնաք դուք՝ որ անձնասիրու-

Թիւնը ի՞նչ ախտեր առաջ կըքերէ  
նաև մեր պզտի գերդաստանին մէջը ,  
Թէ որ ամէն մէկը՝ մանչ կամ աղջիկ ,  
ջանայ իր ուղածը ընելու , և թէ որ  
գլուխ ըլլայ՝ և ոչ օրէնքներ :

Դրէժոր . Ա՞այր , մէկ օր մը վար  
պետնիս դպրատունէն երկու իրեք  
ժամ որ հետուցաւ՝ չէք գիտեր հրա  
մանքնիդ թէ ի՞նչ խառնակութիւն և  
խռովութիւն եղաւ անտեղ : Ե՞ն  
օրը մէկ շատ ցուրտ օր մը ըլլալով՝  
տղաքը կրակարանին քովը բոլորեւ  
էին , ու մէկը մէկ անանկ կըհըմըշ  
տըկէին , որ վերջը գրեթէ սկըսեցին  
կուր ընել : Ե՞ս բանս մէկ քանիները  
ըրին՝ որ չէ թէ իրենք կրակին շատ  
մօտ ըլլալ կուզէին , հապա միայն թէ  
մէկ ձանձրութիւն մը տան :

Ա՞այր . Տըղաս , ան ամէն մէկը որ  
կուզէր էվելօք կրակին մօտ ըլլալ ,  
իրեն մասնաւոր մխիթարութեանը  
կընայէր՝ ուրիշներուն հանգըստու  
թեանը համար իր հոգը ըլլալով ,

կամ հասարակութեանը աղէի ըլլաւ  
լուն չի նայելով : Եւ ահա ան տղաքը  
անձնասէր եղան իրենց վարմունքովը  
ու գործքերովը , և ան գործքերը ը  
րին իրենց մեղանչական բնաւորու  
թիւնը ու չարասէր բաղձանքը բերկ  
բեցունելու համար :

Դիցուք թէ՝ ասանկ ալ մեր քաղ  
քին մէջի ըոլոր մարդիկը միօրինակ  
անձնասէր ըլլային , և օրէնքներ ե  
ղած ըրլար՝ որ անոնք բարեկարգու  
թեան մէջ պահվէին :

Դիցուք թէ՝ անոնք ալ հակառա  
կութիւն ու կուլ ընելու ըլլային ,  
ինչպէս որ ան տղաքը կրակարանին  
ըոլորտիքը նստած ըրին նէ . ամեն  
մէկը ջանար որ բան մը էվելօք ձեւք  
բերէ իր մխիթարութեանը ու հան  
գըստութեանը յարմար , կամ որ իր  
չար կամքը հաճեցունէ , և հոգը ըրլ  
լար աս բանին մէջ ուրիշներուն հա  
մար նէ , որչափ արդեօք անով մէկալ  
մնացածները թշուառական կըլլայինք

Գրեթոք · Առայլ ի ըստ որ ես չե պիւ  
տի ուղեի ասանկ տեղմը կենալ ·  
քանզի անիկա շատ գէշ մէկ տեղմը  
պիտի ըլլար ինծի մեր դպրատունէն  
էվելի որ ատեն որ վարժապետը հեւ  
ուուցած էր անկէց :

Առաջ · Տըղաքս հիմայ քիչ մը է  
վելի մտմըտացէք դուք : Դիցուք թէ  
աս կերպ բան մը ճշմարիտ եղած էր  
նաև աշխարհիս մէջի բոլոր մարդոցը  
վրայ · դիցուք թէ մէկը չըզգուշանար  
Վստուծոյ կամ մարդու վախովը անձ  
նասէր ու մեղանչական շարժառիթ  
ներով օրինակներ ձեւացունելէն իր  
մտքին մէջը՝ և անոնք դործելէն, և  
իր անձին համար ամենէն մեծը ու  
շատ աղէկը նայելու ջանալէն, ամե  
նեին հոգը ըլլալով թէ աս ընելովը  
ինքը ո'րչափ թշուառ պիտի ընէ իր  
ընկերները :

Գրեթոք · Առայլ հրամանքիդ տունը  
չեղած օրը մինչև անդամ մեր փոքրիկ  
ընտանեացը մէջ ունեցած նեղու-

Թիւններնուս կընամ մակաբերել թէ  
ո՞րչափ խառնակութիւն ու թշուառու  
թիւն պիտի ըլլայ աշխարհիս մէջը :

Այս . Տայց պէտքը չէ որ կայնինք  
մնանք առ խօսքին վրայ . իմ սա՛ ըւ  
սածներս մոտիկ ըրէ : Են ժողովուրդ  
ները՝ որ աս աշխարհիս մէջը կըբը-  
նակին , Վատուծոյ ստեղծած բոլոր էւ  
ակներուն մէկ պղտի մասն են : Քան-  
զի ո՞րչափ ուրիշ աշխարհներ կան որ  
բնակիչներով լեցուն են , որոնց հա-  
մար որ Վատուած մեզի չէ զրուցեր :  
Գիտենք որ Երկինքը սուրբ ու եր-  
ջանիկ բնակիչներով լեցուն է . Դը-  
ժոխքը չար ու թշուառ բնակիչնե-  
րով : Եւ հաւանական է որ՝ ան ուրիշ  
աշխարհներուն մէջն ալ հազարաւոր  
ու միլենաւոր ստեղծուածներէն շատ  
աւելի կան :

Հիմայ զիցուք թէ՝ բոլոր ան արա-  
բածները որ եղած են , ալ ասկէ ետև  
Վատուծոյ կաւագարութեանը տակը  
չի կենան , հապա ամեն մէկը թող

ուրբվի իր ուղածին պէս ընելու մէկ  
պատիժի մը վախ չի քաշելով : Եաւ  
դիցուք թէ ամէն մէկը անձնասէր ու  
մեղք գործող ըլլայ էվելօք՝ ուրիշնե-  
րուն աղէկ ըլլալուն ու հասարակու-  
թեան բարութեանը չի նայելով . ոչ  
աւ հոգը ըլլայ՝ թէ ինքը ասանկով  
ուրիշներուն անիրաւութիւն ըրած  
կըլլայ . արդեօք ի՞նչ մէկ սոսկալի ու  
քնդհանրական թշուաւութիւն մը  
պիտի ըլլայ անատեն :

Դրէժո՞ր . Խրա՞ւ որ ուրախ եմ՞ որ  
աս կերպը չէ հիմայ :

Սայր . Դուն պատճառ ունիս զա-  
ւակս ուրախ ըլլալու . դուն իրա-  
ւունք ունիս ուրախանալու՝ որ Աս-  
տուած մեր վրայ կըթագաւորէ . ոք  
ինքն է բոլոր իր ստեղծած էակներուն  
դլուխը . և որ՝ իր օրէնքները սուրբ  
են՝ արդար և բարի : Անիկա չունի  
մէկ մեղանչական քնութիւն մը . և ոչ  
անձնասիրութիւն : Անիկա կըցան-  
էայ՝ որ իր արարածները երջանիկ ը-

նէ : Անիկա մեղի ամեն ատեն հաղաւ  
բաւոր կերպերով կըցուցընէ թէ ին  
տո՛ր ինքը բարերար է :

Աստուածաշունչը մեղի կըզըռուցէ  
թէ ինքը բոլորովին սէր է : Անխ' որ  
չափ մեծ էր ան իր սէրը մեր վրա  
յով, որ իր մէկ հատիկ սիրելի Որ  
դին տըւաւ որ մեղի համար մեռնի :  
Եւ որչափ մեծ էր Յիսուս Քրիստո  
սին սէրը մեր վրայ, որ ինքը երկին  
քէն իջաւ, ու մէկ տրտմալից կեանք  
մը վարեց, և չարաչար ու անարդա  
կան մահով մը մեռաւ, որ անով մեղ  
խալըսէ ան պատիմէն որուն որ ար  
ժանի էինք մեր մեղքերուն համար :

Երբոր մենք Քրիստոսի ասանկ  
սիրոյն վրայ որ խորհեշու ըլանք,  
ալ ան մեր ունեցած անձնասիրու  
թիւնը ինտոր անարդ ու ատելին և մե  
զանչական բան մը պիտի երևայ մե  
ղի : Տայց մենք՝ որ մեղի համար  
Քրիստոս մեռաւ, կըխորհինք մեր

պըստըտիկ երջանկութեանը համար ,  
ու ջանք կընենք որ մեր բարութիւնը  
զարդացունենք՝ ուրիշներուն աղէկ  
ըլլալուն չի նայելով , և մինչեւ ան-  
դամ կուղենք՝ որ ուրիշները նեղու-  
թիւն քաշեն . և շատ էվելօք նեղու-  
թեան մէջ իյնան միայն թէ մենք մեր  
ունեցած մխիթարութեանը ու վա-  
յելչութեան մէկ մասը չի ձղենք ա-  
նոնց համար : Եւ ասկէց ՚ի զատ ան-  
որ ամէնէն գէշն է՝ ուրիշներուն անի-  
րաւութիւն կընենք անանկ բանի մը  
համար , որով մեր բուն երջանկու-  
թիւնն ալ չենք կընար ձեռք ձղել :

**Վ**հա սիրելիներս , աս անձնասի-  
րութիւնն էր՝ որ այս չափ թշուաւու-  
թիւն պատճառեց (ինչպէս որ Գրի-  
գորը մեղի զըուցեց ) մեր տանը մէջը  
ան օրը՝ որ ես հեռուցեր էի ձեռմի :

**Վ**իյն անձնասիրութիւնն էր տը-  
լաքս , որ պատճառեց մեր ընտա-  
նեացը մէջ ունեցած թրշուաւու-  
թիւններուն մեծ մասը . ան էր ձեր ի-  
8 ա-

բարու հետ ըրած հակառակութեան  
նը ու կոլիներուն պատճառը : Աստեն  
մը ատ անձնասիրութիւնը ձեզի ա-  
ռաջնորդ եղաւ, որ անանկ զգացում  
ունէիք՝ որ չէիք ուզեր իմ իշխանու-  
թեանս հնազանդ ըլլալ : Ատ անձնա-  
սիրութիւնը ձեզի առաջնորդեց ալ  
որ ինձի անհնազանդ ըլլաք ան բանը  
ընելով որ ես ձեզի կըհրամայեմ չը-  
նելու, կամ չընելով՝ որն որ ես ձեզի  
պատուիրեցի որ ընէք :

Ա յս, ատ անձնասիրութիւնը ձեզի  
առաջնորդեց անհնազանդ ըլլալու  
ալ իմինէս աւելի ան ծայրագոյն իշ-  
խանութեանը Աստուծոյ :

Աստուծ կուզէ՝ որ դուք ուրիշնե-  
րուն երջանկութիւնը բուն ձեր ան-  
ձին երջանկութեանը պէս ուզէք .  
կուզէ որ դուք ուրիշները բուն ձեր  
անձին պէս սիրէք : Բոլոր ան պատ-  
ուէլները՝ որոնք որ ինքը տըւաւ մեզի  
Աուրը Գիրքին մէջը, անոնք սուրբ  
արդար ու բարի են : Արժան է՝ որ ին-

քը մեր վրայ կառավարութիւն ընէ :  
 Քանզի ինքը ստեղծեց մեղ, ու մեզի  
 տըւաւ բոլոր մեր մխիթարութիւննեւ  
 ըը ու բարութիւնները, ու իր յատուկ  
 ողորմութիւնները : Մենք կըպարտա-  
 ւորինք՝ որ իրեն մատուցաննենք մեր  
 սրտերուն ու մեր մարմիններուն կա-  
 տարեալ հնազանդութիւնը :

Ինքը մեր վրայ կառավարութիւն  
 կընէ նաև մեր բարութեանը համար՝  
 թէ որ մենք զինքը սիրելու ըլլանք՝ ու  
 իրեն հնազանդինք : Եր օրէնքները  
 իրեն ստեղծած արարածներուն բա-  
 րութեանը համար դրված էն : Յժէ որ  
 մենք և ուրիշ ամէն արարածները իւ-  
 րեն հնազանդելու ըլլանք, ալ ամէն  
 տեղ հաստատուն ու կատարեալ եր-  
 ջանկութիւն մը պիտի ըլլայ :

Բայց աւաղ՝ իմ սիրելի՝ զաւկը-  
 ներս, որ դուք Աստուծոյ աս օրէնքը  
 ները չի բռնեցիք : Եւ աս բանը դուք  
 ձեր անձնասիրութեամբը ըրիք,  
 ինչպէս որ Ճիշդ իմ պատուերներս  
 ալ ան պատճառաւը զանց ըրիք :

Ուստի ահա Աստուծոյ օրէնքնելը  
որոնք որ Աստուած մեղի Սուրբ  
Գիւքին մէջը խօսելը է՝ կամ որոնք  
մարդ մը իր բնական լուսովն ալ կը ը-  
նայ իմանալ, անոնք զանց ընելը ու  
չի բռնելը մեղք է :

Հիմայ միտքելնիդ բերէք ան իրեն  
երկու մեծ պատուելնելը, որոնք ու-  
րիշ ամէն մնացածները իրենց մէջը  
կը պարունակեն . մէյմը որ, Կրու-  
Տէր Աստուածդ պիտի սիրես քու բո-  
լոր սրբառվդ ու քու բոլոր հոգիովդ,  
ու քու բոլոր զօրութիւնովդ, ու քու  
բոլոր մտքովդ : Երկրորդ՝ Կրու ըն-  
կերդ այ քու անձիդ պէս պիտի սի-  
րես :

Սակայն ձեր անձնասէր ու մեղա-  
ւոր սիրտը ձեզի ճամբայ կը ցուցընէ՝  
որ չէք ուղէր հնազանդիլ աս պա-  
տուելներուն, և հետեւապէս ան մէ-  
կալ պատուելներուն՝ որ ասոնց մէ-  
ջը կը սըղմին : Չեր կամքը չի հաճիր  
ան պատուելներուն հնազանդ ըլ-

լու, հապա կը մերժէք անոնք՝ ու ան-  
հնաղանդութիւն կը նէք դուք : Եւ  
ահա աս ամենը՝ որ դուք ընելու կը լ-  
լաք՝ մեղք է :



ԳԼՈՒԽԸ. Ե:

Տղաւը էնուիլհնաւոն Աստուծոյ մէի սանի ո-  
ւենաւ վիմանան, բայց պանց իւն նշանաւու :  
Կրնան մշչ ըրած ըլլար անոնք՝ լու և պա-  
հանին ծանօթութիւն մըն աւ շունկնան  
Աստուծոյ վրայ : Ա' եղը որուն համար որ  
պաջում շպար, մշլ շարանաւը վրայ է :

Գրեժոր . Ամայլ երեկ հրամանքդ  
մեզի խօսեցար որ Աստուծոյ օրէնք-  
ները զանց ընելը մերը է :

Ես մեղք գործեցի՛ մի երբոր  
պատիկ էի՛ ու Աստուծոյ կամ անոր օ-  
րէնքներուն վրայով բան մը չէի գի-  
տեր նէ :

Առյ . Օաւակս Աստուծած մեզի  
Սուրբ Գիրքին մէջը սորվեցուցեր  
է, որ դուք մեղքի մէջ ծնած էք,  
որ դուք մոլորեր էք շիտակ ճամբէն  
և մէկ մեղաւոր մը եղած էք ձեր աւ-  
ջի օրերնէդ ՚ի վեր . և թէ ձեր սիր-  
ուը մինչև որ Սուրբ Հոգիովը չի նո-

ըոգվինէ, անիկա ամեն բանէն աւելի  
խարեքայ ու անյոյս չար մըն է: Նիւ  
մայ՝ աս բանին Ճշմարիտ ըլլալը ձեզի  
ցուցընելու համար ձեզի ամենուդ  
մէկ խնդիր մը պիտի հարցունեմ:

Երբոր դուք շատ պղտի տղաք էիք՝  
այնչափ պղտիկ որչափ որ խելքեր  
նիդ կըհասնէր նէ, արդեօք շատ ան-  
դամ դուք ներսերնիդ չիմացաք մի՞ որ  
պատժընելու արժանի էք :

Դրեժոր · Ես իմացայ մայլը :

Եղջառ · Ենանկ ալես իմացայ :

Երմուտ · Ես ալ :

Դրեժոր · Սակայն մայլը հրամանքդ  
մեզի զրուցեցիր որ՝ Աստուծոյ օրէնք  
ները զանց ընելը մեղք է: Ու տակա-  
վին ինծի չերեարկոր՝ թէ ինչպէս  
կընանք մեղք դործել, երբոր ան օ-  
րէնքներուն վրայով մենք բանի մը  
տեղեկութիւն չունինք նէ :

Անոյր · Են իմ երէկվան զրուցածս  
Ճշմարիտ է՝ որ ըսի թէ, Աստուծոյ օ-  
րէնքները՝ որոնք ինչպէս որ Աստուծած

Առւրբ Գիրքին մէջը մեղի խօսեր է ,  
կամ (ասսն Տագէն Շք) անոնք որ ուրիշ  
կերպով՝ այսինքն բնական լուսով  
մարդս կընայ խմանալ նէ , անոնք չի  
բռնելը մեղք է :

Ան օրէնքները կըպահանջեն՝ որ  
մենք սռւրբ ըլլանք , այսինքն էվելօք  
զԱստուած սիրենք , ու ամէն բանի  
մէջ իրեն հնազանդ ըլլանք , և ու  
րիշները անձերնուա պէս սիրենք :

Ուստի զանազան ճանապարհներ  
կան , որոնց մէջը Աստուած մեղի իր  
օրէնքները կըճանչցունէ :

Իրաւցընէ ինքը մեղի Առւրբ Գիրքին մէջը ամէնէն էվել պայծառ ու  
աղէկ կերպով խօսեցաւ իր վրա-  
յովը , և ան ամէն բաներուն վրայով  
որ մեր պարտաւորութիւններն են :  
Եւ ահա ան օրհնեալ Գիրքին մէջն  
է՝ որուն մէջը մենք գլխաւորապէս  
իր օրինացը վրայով տեղեկութիւն  
պիտի ստանանք :

Կաև իրեն շինած բաներուն մէջ

մեղի կըցուցընէ զինքը . և անոնք ին  
քը կըկառավարէ մէկ քանի օրէնքնեւ  
ըով , որոնցմէ շատերը մենք կընանք  
գտնալ :

**Մ**ենք աս բաները գտանքոր արեւը  
կելլայ ու կըմտնայ որոշեալ ժամանա  
կին , և որ՝ ամառը ու ձմեռը իր ժա  
մանակին կանոնաւոր շըջաններովը  
կըդառնայ : « Յամանապէս պէտք է՝ որ  
մեր գործքերուն ալ յարմար ժամա  
նակը նայինք : Քէ որ մարդիկ ու  
զեն բոլոր օրը քնանալ , և բոլոր  
զիշերը բանիլ , և միայն ձմեռվան  
մէջը սերմ տնկելնէ , անոնք ան գոր  
ծը չէ թէ միայն յիմարաբար ըրած  
կըլան , հապա նաև չարաչար : Եհա  
աս կերպ բաներուն համար դրված  
Աստուծոյ օրէնքները թէ որ մենք  
խանդարենքնէ մեղը կըլայ , ինչպէս  
որ Առւրբ Գիրքին մէջը մեղի տրված  
Աստուծոյ օրէնքներուն զանցաւու  
թիւնը մեղք է :

**Ա**սանի թէ որ մէկ մարդ մը գիտ  
9 ա-

նայ՝ որ մէկ մասնաւոր բան մը ուտեց  
լովը կամ խմելովը իրեն վնաս պիտի  
ըլլայ մէկ թիւնաւոր դեղի մը պէս, որ  
իր առողջութեանը ու զօրութեանը  
կը վնասէ, ինքը կը գտնայ Աստուծոյ  
անանկ մէկ օրէնքը՝ որ ան բանը ընեւ  
լու արդելք եղած ըլլայ : Եւ թէ որ  
ինքը աս գիտնալովը՝ սովորութիւն-  
ընէ ան բանը գործածելու, ալ ինքը  
Աստուծոյ ան կերպ օրէնքը կոտրած  
կը լլայ, ու անոր դէմ մեղք գործած  
կը լլայ :

Դրէժո՞ւ . Ատիկա չէ՞ մի պատճառը՝  
մայր, որուն համար որ մեղք պիտի  
ըլլայ զօրաւոր ըմպելիքներ գործա-  
ծելը հասարակ խմելիքի մը պէս :

Այս . Այս զաւակս . ես ալ ուրախ  
եմ որ աս իմ ձեղի դրուցած բանս  
այսչափ աղէկ հասկըցար, որ դուն  
աս ընդհանուր սկզբունք եղած խօս-  
քէս աղէկ հետևութիւնով մը մասնա-  
ւորապէս միտքդ ան խմելիքին վրայ  
քերիր :

Եղբայր . Անցը ինչու համար մեղք  
է մեր առողջութեանը ու զօրութեանը  
վնասող մէկ բան մը գործածելը :

Անցը . Ենո՞ր համար որ՝ եթէ մեր  
մասմինը հիւանդոտ ու տկար ըլլայ  
նէ անով մեր միտքն ալ կըտկարաւ  
նայ : Եւ ան տկարութեանը պատճառ  
ուաւ նոյնչափ քիչ կարողութիւն պիտի  
ունենանք զլցատուած սիրելու մեր  
բոլոր հոգիովը ու զօրութիւնովը՝ ու  
միտքովը . և ուրիշներուն աղէկու  
թիւն ընելու : Եւ նոյնչափ քիչ պիտի  
կրնանք մեր պարտքը կատարել շատ  
կողմերէն :

Ասանկով դուք կըտեմնաքկոր որ՝  
ինտո՞ր Աստուծոյ օրէնքներուն մէկը  
կոտըելը , որն որ թէ՛ Ասւը Գիր  
քին մէջ մեզի զըուցված է , կամ թէ  
մէկ ուրիշ կերպով մը գըտնըված է ,  
Ճամբայ կըբանայ մէկալ օրէնքներն  
ալ կոտըելու , կամ մեղ կարգիլէ  
անոնց հնագանդելու պէտք եղածին  
պէս :

Եւ աս է մեղքին մեծ չարիքնելուն  
 մէկը : Քանզի մէկ մեղքին յանձնա-  
 ռութիւնը միշտ ճամբայ կըբանայ  
 ուրիշ մեղքերու գործածութեանը :  
 Անիկա՞որ Յստուծոյ մէկ օրէնքը կը-  
 կոտրէ՞ շատ անդամ նոյնպէս ուրիշ  
 օրէնքներն ալ կըկոտրէ , կամ թէ  
 շուտով պատրաստ կըլլայ անոնք կոտ-  
 րելու : Յստուծոյ օրէնքներուն մէկ  
 քանին պղտի տղաքն ալ գիտեն՞ մէկն  
 ալ անոնց չի սորվեցունելովը : Ին-  
 քիրէննուն շատ բաներ աղէլ եղեր՞  
 գէշ եղեր , կըդրտնան անոնք : Շու-  
 տով կըսկըսին տեսնալ՞ որ իրէնց  
 զըուցած կամ ըրած շատ բաները  
 կընան ուրիշները երջանիկ ընել կամ  
 թշուառ : Իրէնք կիմանան որ աղէկ  
 բան է ուրիշները երջանիկ ընելը ,  
 ու գէշ բան է թշուառ ընելը ա-  
 նոնք :

Կըտեսնան անոնք՞ որ մէկ հայր մը  
 կամ մայր մը՞ որ իրէնցմէ մեծ է ու  
 իմաստուն , իրէնց ընտանեացը դը-

լուխն են : Ենոնք կիմանան որ՝ աղէկ  
 է հօրն ու մօրը հնազանդ ըլլալը , և  
 որ՝ անոնց անհնազանդ ըլլալով պա-  
 տիժի արժանի կըլլան : Կըտեսնան  
 եղբայրնին ու քոյրերնին իրենց բո-  
 լորտիքը , և կիմանան որ՝ աղէկ է ան-  
 եղբայրները ու քոյրերը սիրելը , և  
 բարեբարոյ ըլլալ անոնց , և ընդու-  
 նել անոնք՝ ինչպէս որ իրենք անոնց  
 ընդունելի ըլլալ կուղեն նէ : Կիմա-  
 նան՝ որ գէշ բան է աս կերպ աղէկ  
 բաներ չընելը իրենց հօրն ու մօրը  
 ու եղբայրներուն և քոյրերուն :

Ուստի Աստուած է՝ որ տղոցը աս-  
 բաները ճանչնալու ընդունակ միտ-  
 քեր կուտայ , ու աս բաները զգալու  
 ընդունակ սիրտեր կուտայ . ուրիշ  
 կերպով խօսիմ , Աստուած է որ ա-  
 նոնց խղճմտանքներ կուտայ :

Նաև ինքը այնպէս կարգադրեր է՝  
 որ տղաքը իրենց վրայ կամ ուրիշ  
 մարդոցը վրայ տեսած բաներէն ան-  
 շուշտ սորվին ու զգան աղէկը ու գէշը

բնական լուսով : Ուստի տղայոց աշ-  
սաննկ սորվելը և աս բաները զգալը  
Աստուծոյ բնական օրէնքն է կընայ-  
ըսվել :

Ու թէ որ տղաքը իրենց խղճմը-  
տաքին Աղէկ է զրուցած բանին դէմը  
գործելու որ ըլլան , Աստուծոյ օրէնքը  
կընառեն . և անատեն կիմանան  
որ պատիժի արժանի են իրենք :

Աստուծած անոնք ասանկ ստեղ-  
ծեց՝ որ իրենց յանցաւոր ըլլալը ե-  
մանան աս կերպով : Հիմայ աս պատ-  
ճառաւ յատկապէս կընայ ըսվել թէ ,  
Տղաքը մեղք կըդործեն՝ Աստուծոյ օ-  
րէնքները կոտրելով , թէ և տակա-  
ւին Աստուծոյ վրայով բան մը գիտ-  
նալու կարող աւ չըլլան : Աս բանը  
ընելովնին՝ կրցուցընեն սրտին ան  
կերպ գէշութիւնը , որն որ իրենց  
Ճամբայ կըբանայ Աստուծոյ որ և իցէ  
օրէնքը կոտրելու , թէ որ իմանալու  
կարող ըլլային՝ որ Աստուծած իրաւցը-  
նէ ան օրէնքը տըւած է անոնց , և թէ

որ միտքերնին զար՝ որ ան օրէնքը իւ  
լենց կամքին ու վայելմունքին դէմէ :

Եռագ . Ապայը՝ ես պղտի տղայ մըն  
եմ, բայց գիտեմ որ՝ ինչ որ հրա  
մանքդ զրուցեցիր նէ՝ աղէկ է : Ինչ  
պէս որ հրամանքդ ըսիր թէ՝ Տղաքը  
կիմանան մէկ բանի մը աղէկ ու գէշ  
ըլլալը, Ճիշտ այնպէս՝ կըսիշեմթէ,  
ես ալ խորհեր ու զգացեր եմ :

Ապայ . Այս՝ ամէն տղայ ատ բանը  
գիտէ . և գիտէ ալ, որ իր հայրն ու  
մայրը և վարժապետը շատ անդամ  
իրեն յայտնի կիմացունեն՝ թէ ո՞ր բա  
նը աղէկ է, և ո՞ր բանը՝ գէշ : Եւ իր  
խղճմտանքն ալ ան իրենց զրուցած  
բանին վրայ կըվկայէ, թէպէտ և ին  
քը այնչափ պղտիկ ալ եղած ըլլայ  
որ տակաւին Լուտուծոյ վրայով շատ  
բան սորված չըլլայ, հապա քիչ մը  
բան միայն :

Ինքը կըտեսնայ՝ որ իր հայրը ու  
մայրը և վարժապետը իրմէն ծայրա  
գոյն են . և ինքիրմէն կիմանայ որ

տղեկ է անոնց հնազանդ դտնըվելը :  
Եւ աս չընելովնին՝ ան օրինաւոր հեղինակութեանը մէկ ընդդիմութիւն մը կըցուցընեն, որ անով կերևայ թէ չեն յօժարիլ նոյն Վատուծոյ իշխանութեանը հնազանդելու, թէ որ իրենց անձնասէր ցանկութիւններուն ու բաղձանքներուն դէմ բան մը եղած որ ըլլայնէ :

Ու թէ որ տղաքը իրենց ծնողքներուն և վարժապետներուն տըւած վարժութիւնները անի տեղ չի դընեն՝ ու չի հնազանդին անոնց, արժան է ըսել թէ անոնք Վատուծոյ օրէնքներուն դէմ ալ մեղք կըգործեն, թէ պէտ և քիչ զիտնան Վատուծոյ վրայով, կամ բան մըն ալ չի զիտնան :

Ուրեմն կըտեմնաք զաւկըներս, որ մեղքը ճիշտ Վատուծաշունչին ըսածին պէս Վատուծոյ օրէնքին զանցաւութիւնն է. Վատուծոյ օրէնքին դէմ գործեն է. Վատուծոյ դէմ ապստամը ըստթիւն մըն է մեր զգացումներովը

Աւ վարքերովը . և ան օրէնքը՝ ինչ  
պէս որ մեղմէ կըպահանջէ , անանկ  
ըլլալը՝ և այնպէս չընելն է :

Կըտեսնաք ալ , որ պզտի տղաքը  
մեղք կրնան գործել . և իրաւ մեղք  
կըդործեն՝ իրենք Վատուծոյ և Վա  
տուածաշունչին վրայով բան մը սոր  
ված ըլլալէն ալ առաջ :

Վնոնք շատ կանուխ իրենց վարքին  
մէջ կըցուցընեն՝ թէ Վդամին ու  
Եւային մեղքը՝ որ աշխարհի մէջ  
այսչափ մեղք ու թշուառութիւն բե  
րելու պատճառ եղաւ , իրենց վրայ  
ալ իջած է :

Վնոնք շատ կանուխ կըցուցընեն  
որ իրենց սիրտերը Վատուծոյ վրայ  
սէր՝ ու Վատուծոյ օրէնքներուն հնա  
պանդելու յօժարութիւն չունին . և  
որ՝ ասանկով իրենք մարդկային բո  
լոր ընտանեացը մեղանչող հօրը ու  
մօրը մեղաւոր դաւկըներն են :

Կանուխէկ կըցուցընեն՝ որ իրենք  
իրենց մէջը ունին ան մեղանչական  
10 ա

բնութիւնը , և ան անձնասիրութիւնը  
և ան օրինաւոր իշխանութեան հա-  
կառակութիւնը , որ Աստուծոյ կամ  
քին վէմ կը հակառակի , որնոր Աս-  
տուծածաշունչին մէջը մեղեւ տրւած իք  
օրէնքներուն մէջը յայտնրված է :  
Եւ աս մեղանչական բնութեանը Աս-  
տուծոյ ամէն օրէնքներուն հակառակ  
ըլլալը յայտնի կերեւայ՝ շուտ մը տր-  
դան ան օրէնքներուն մէջ ծանօթ ե-  
ղածին պէս . և ասանկով շարունակ  
ան բնաւորութիւնը կերեւայիք սրաին  
մէջը՝ մինչև որ Հոգևով Սրբով նո-  
րոգվելու ըլլայնէ ան :

Երանդ . Ո՞այր՝ մեղքը շատ դէշ  
բան մըն է եղեր . ես բնաւ առաջուց  
ասանկ չեի խորհեր , որ այսչափ  
դէշ է :

Անյը . Հապա՞ ի՞նչ կըսես դուն .  
Ճշմարիտ ասանկ է : Ո՞եղքը պզափ-  
տղոցը մէջն աւ շատ դէշ բան է .  
դուք աւ գիտէք թէ՞ ո՞րչափ գէշու-  
թիւն կըպատճառէ անիկա : Ո՞եղ-

քը ան տղաքը և իրենց քովի եղողնեն  
քը թշուառ կընէ , մեղքը կըկործանէ  
մէկ տան մը աղէկ կարգը ու վայէլ  
չութիւնը : Մեղքը հայրն ու մայրը  
լացունել կուտայ իրենց տղոցը գէշ  
վարքին վրայ : Մեղքը զիրէնք վա  
խով կըլեցունէ , երբոր խորհին թէ  
տղաքնին մեծնալու ըլլան նէ ինառը  
մարդիկ պիտի ըլլան :

**Ա**յս պզտի տղոցը գէշութիւնին  
մեծ բան ըլլալուն սոսկալի պատճառը  
աս է՝ որ քանի մեծնան իրենց գէշու-  
թիւնն ալ հետերնին կաձի :

**Թ**է որ մեղքին վրայ օղջում ըլլ-  
այ և անիկա չի յաղթըվի նէ , միշտ  
աճելու վրայ է ան :

**Ա**ն պզտի տղան որ յամառութիւն  
կընէ և իր կամքը կուզէ ընել ու կը-  
հրաժարի ծնողացը հրամանին հնա-  
զանուելէն , և ան զէշ բաները որ ծը-  
նողը կարգիլէ ընելու ինքը կըդոր-  
ծէնէ , ալ անիկա մեղքի մէջ էվե-  
լոք կըսառաջանայ թէ որ մէկ մեծ

փոփոխութիւն մը իրներսիդին չըլլայ  
նէ Աստուծոյ Սուրբ Հոգիովը : Աւ  
անոր յամառութիւնը և կամապաշ  
տութիւնը պիտի աճի : Եւ վերջա  
պէս իր շարունակ կենացը մէջ այն  
չափ մեղքի մէջ գուցէ պիտի հաս  
տատի, որ ալ Աստուծոյ ու մարդոց  
օրէնքները պիտի անարգէ, և սոսկա  
լի մէկ մեղք մը պիտի գործէ, և ան  
պատճառաւ իր անիրաւութեանը պա  
տիժը պիտի քաշէ մէկ ամօթալի դա  
տապարտութիւնով մը :

Ասկէց 'ի զատ, մտմտացէք տը  
ղաքս, թէ ինտո՛ր կըսրդողի ան մեծ  
ու ամենասուրբ Աստուծը ձեր վրայ  
երբոր մեղք կըդործէք նէ :

Մեղք գործելով դուք Աստուծոյ  
օրէնքները կըկոտրէք, ու իր իշխա  
նութիւնը կանարգէք : Դուք ինքի  
րէննուդ կըցուցընէք ձեր ապերախտ  
ըլլալը ան Լութեանը դէմ, որ ինքը  
ձեզի այնչափ բարութիւններ ըրաւ,  
և ինքը ձեզ այնչափ սիրեց՝ որ մինչեւ

իր մէկհատիկ ու սիրելի Որդին աշ  
խարհ խըկեց ձեզի համար մեռնելու :  
Դուք կըցուցընէք , որ իր ստեղ  
ծուածները երջանիկ ընելու համար  
իրեն ըրած բաներուն հակառակը  
կընէքոր , որ ձեր հոգը ըստ լարկոր  
ուրիշներուն երջանիկ ըլլալուն վրայ .  
և որ՝ դուք անյարմար էք ան մէկալ  
աշխարհը երթալու , ուր որ ամենքը  
երջանիկ են՝ զլուտուած սիրելով՝ ու  
անոր ծառայելով , և իրենց քովը եւ  
դողները ամենքը սիրելով :

Մտմըտացէք աս բաներուն վրայ  
տըղաքս . և ըլլայ որ Առւրբ Հոգին  
ձեզի առաջնորդէ այնպէս խորհելու  
ու զգալու՝ ասոնց վրայ միտք դնելով ,  
որ իմ ըստածներս ձեզի օդտակար ըլլա .

լայ :

## ՊԱՌՈՒԽ . ԶԵ

առաջաւոս ինչնու-լեն մը թուշին ձրայ : Բառն-  
ովն մէջ գործն օղինուիլ : Մեղքի համար  
արդարու-լեն որ սոսկ պատրիժին զայնեն  
իւլյո , ճշուրիդ օղջում չե :

Գործոր . Վայր , աս իրիկուն մե-  
զի մէկ նոր բան մը զըուցելու սկըսե-  
լէդ առաջ , շատ կըցանկամ որ նո-  
րէն հրամանքդ քիչ մըն ալ խօսիս ան  
մէկ քանի բաներուն վրայով , որոնք  
որ հրամանքդ մեզի սորվեցուցիր :

Վայր . Ուրախութեամբ ատիկա կը-  
նեմ զարակս . ինչու որ ես կուզեմ  
որ դուք ամենքդ պայծառ կերպով  
հասկընաք թէ ինչ է մեղքը , որ ա-  
նանկով դուք կարող ըլլաք իմանալու  
թէ ինչ է մեղքի վրայ զղջալը :

Ուրեմն հաստատ միտքերնիդ ինծի-  
տըւէք :

Ես ջանացի՞ որ ձեղի ցուցընեմ թէ  
դուք դէշ սիրտեր ունիք , և որ դուք  
աղատակամ էք կամ անձնիշնան :

Դառք անանկ միտքեր ունիք՝ որ կընան  
դիտնալ թէ որ բան աղէկ է, և որ  
բան գէշ է : Դառք անանկ սիրտեր  
ունիք՝ որ կարող են երջանկութիւն  
զգալու երբոր աղէկ բան մը ընէք,  
և թշուառութիւն զգալու երբոր գէշ  
բան մը ընէք : Անանկ խղճմտանքներ  
ունիք որ երբ աղէկ բան մը ընէք ձեր  
ըրածին կըհաւնի, ու անով դուք երա  
ջանկութիւն մը կըզգաք . և երբոր  
գէշ բան մը ընէք՝ անհաճոյ կըլլայ  
ձեր գործքերուն, որով դուք թշուա  
ռութիւն կըզգաք անատեն :

Եւ աս բոլոր եղած բաներուն վը<sup>ւ</sup>  
ըայ՝ դուք ներսիղինուդ կիմանաք որ,  
չէ թէ մէկ բան մը ձեղ բոնադա  
տելու վրայ կըլլայ աղէկը կամ գէշը  
ընելու, հապա որ՝ դուք ձեղմէն Վզա  
տաբան կըզործէք աղէկն ու գէշը, և  
Ճիշտ ձեր ուղածին պէս կընէք :

Հիմայ Վստուած ձեղ չի թողուց՝  
որ տղէտ ըլլաք աղէկն ու գէշը ո՞րն  
ըլլալուն : Ինքը շատ հոգ ունեցաւ

Առավեցունելու ձեղի իր օրէնքներուն  
 ինչ ըլլալը՝ աղէկին ու պէշին նայեւ  
 լով։ Ինքը անանկ կարդի դրաւ, որ  
 շատ բաներու մէջ կընաք գտնալ  
 ձեզմէն իր օրէնքներուն ինչ ըլլալը,  
 ո՞ր բանը պէտք է ընել ձեղի, և ո՞ր  
 բանը պէտքը չէ ընել։ Ինքը նաև ձեզ  
 զի համար պատրաստեց ծնողքներ ու  
 վարժապետներ, որ ձեղէվելօք վարժ  
 ժեցունեն ձեր պարտաւորութիւններ  
 ըուն վրայ։ Եւ որ անոնք ալդուք ալ  
 մէկ տեղ էվելօք պայծառ ու կատարելապէս խմանալու համար իր կամքին  
 ո՞րն ըլլալը, ինքը մեղի Առւրբ Գիրքին մէջը ուրիշ իր օրէնքնելն ալ իւ  
 մանալ տրւաւ։

Այս օրէնքներուն մենք հնապանող  
 ըլլալով, շատ ապահով ճամբայ պիտի  
 գտնանք որ աս աշխարհիս մէջ  
 ինքը լինիս իս և ուրիշները էվելօք  
 երջանիկ ընելու կարող ըլլանք։ ու  
 ան գերեզմանէն ետքը մեր յաւիտեւ

Նական երջանկութեանը վրայ ապա  
հով ըլլանք :

**Ա**ստուած տրւաւ իր օրէնքները ,  
որ իր կամքը զիտցունէ իր արարած  
ներուն . և ցուցընէ թէ ինքը ինչ  
մէկ մեծ իմաստուն բարի սուրբ և  
արդար յակ մըն է : Եւ որ ան իր ա  
րարածներուն և իր ստեղծած բանե  
րուն վրայ իրեն գլուխ ըլլալը արդար  
ու ամենէն աղէկ բան մըն է :

**Ա**ստուած դրաւ իր օրէնքները ,  
որ անոնց հնազանդ ըլլալով իր արա  
րածները՝ անոր սէր ու պատիւ ցուցը  
նեն . որ իրեն արժանապէս կրվայլէ  
մատուցանել :

**Ա**ստուած իր օրէնքները դրաւ , որ  
անոնց հնազանդ ըլլալով իր արա  
րածները՝ կարենան իրեն պէս աղէկ  
ու սուրբ ըլլալ :

**Ա**ստուած իր օրէնքները դրաւ , որ  
անոնց հնազանդ ըլլալով իր արա  
րածները՝ ամեն մէկերնին ան ամենէն  
մեծ երջանկութիւնը՝ որուն որ իրենք

ընդունակ են, ձեռք ձգեն Հիմայ ու  
յաւիտեանս ալ :

Աստուած իր օրէնքները պրաւ, որ  
անոնց հնազանդելով իր արարածնեւ  
ըր կարենան մէկ մեծ սիրոյ ընկեւ  
բութիւն մը կազմել . և անանկով բու  
լորը երջանիկ ըլլան՝ սիրելով ու հնա  
զանդելով Երկնաւոր Հօրը, որ ինքը  
ըրաւ ու գոյացուց ու աճեցուց ա  
նոնք . և ուրիշներն ալ սիրելով՝ ու  
անոնք աղէկ և երջանիկ տեսնալով :

Աստուած դրաւ իր օրէնքները, որ  
եթէ իր արարածներէն մէկը, որ իր  
բոլոր բարերարութիւններուն դէմ  
ապերախտ ըլլալով յանձն չառնէ առ  
օրէնքներուն հնազանդիլ նէ, ինքը  
ցուցընէ անոնց և բոլոր Էակներուն  
ալ, որ ան իր իշխանութիւնը պատիւ  
ժով ալ պիտի պահէլ տայ :

Քանդի մենք տեսանք թէ ինչ  
խառնակութիւն ու թշուառութիւն  
պիտի ըլլայ, թէ որ Աստուած չի կա  
ռավարէ բոլոր իր ստեղծած էակնեւ

ԵՐ : Եւ թէ որ թող տայ անոնց , որ  
իր իշխանութեանը հնազանդ ըլլան  
կամ ըրլան , ինտոք որ կուզեննէ :

Սակայն Վատուած իր իշխանութիւնը  
անշուշտ պիտի պահէ . ինքը Ճիշտ  
ինչպէս որ բարի է՝ անանկ աւարդար  
պիտի ըլլայ :

Ինքը իր սոսկալի սրդողկութիւնը  
պիտի ցուցընէ ըոլոր ան էակներուն  
վրայ , որոնք որ չեն ուզեր իր օրէնքներուն հնազանդ ըլլալ :

Ինքը պիտի պատճէ անոնք մէկ աւ  
տառել երեելի ու աղետալի կերպով  
մը իր երեսէն մէկ դի ընելով անոնք  
յաւիտեանս , և թող տալով անոնք  
թշուառութիւններ քաշելու , որ բուն  
իրենց կենցաղավարութիւնը պիտի  
պատճառէ՝ ու արժանի ընէ ան թը  
շուառութիւններուն :

Եւ ահա դուք հիմայ տեսաք զաւ  
կըներս Վատուծոյ մեզի ինչու համար  
օրէնքներ տալուն քանի մը պատճ  
ները :

Աս օրէնքները իրեն պէս սուրբ են՝  
արդար և բարի են : Ենոնց համար  
ձեր խղճմտանքները կըվկայեն թէ  
աղէկ են :

Դուք կիմանաք որ ձեզի պէտք է  
ան օրէնքներուն հնաղանդ ըլլալ :

Ուստի աս օրէնքներուն անհնա-  
ղանդ գտնըլիլը մեղք է :

Երիկ մարդիկնիկ մարդիկ ու տր-  
յաք Եստուծոյ աս օրէնքներուն ան-  
հնաղանդ եղած են իրենք մեղաւոր  
ու անձնասէր սիլտեր ունենալնուն  
համար : Են օրէնքները իրաւցընէ  
հակառակ են աս մեղանչականու-  
թեանը : Ենոնք կըպահանջեն որ  
մենք սիրենք գլուխտուած մեր բոլոր հո-  
գիովը ու զօրութիւնովը ու մտքովը .  
և որ սիրենք ուրիշները ինչպէս որ  
անձերնիս կըսիրենք նէ :

Ես բանը մեղաւորին անձնասէր  
բաղձանքին հետ կըհակառակի , որ  
իր մասնաւոր աղէկութեանը կընայի  
ան կերպովը որ ուրիշներուն բարու-

Թիւնը կըպակսեցունէ՞ ու կաւըէ : Եւ  
ինքը չի նայիր ուրիշներուն աղէկ ըլ  
լալուն , կամ ընդհանուր արարածնեւ  
րուն բարութեանը վրայ , որոնց որ  
Աստուած Հայրը ու Գլուխն է :

Ուստի մեղաւորը չի հաճիր Աս  
տուծոյ աս օրէնքներուն . ինքը չի  
կամիր՝ որ հնաղանդի աս օրէնքնեւ  
րուն : Հանձը չառներ Աստուծոյ ար  
դար ու բարի կառավարութեանը հըւ  
նազանդիլ :

Թէ որ աս ամէն բաները ասանկ են  
նէ , մի՛ տարակուսիք դաւկըներս՝ որ  
դուք մեղաւոր էք : Դուք հիմայ կը  
հասկընաք՝ թէ ինչ բանի համար  
մեղաւոր ըսվելու էք , և ինչ կերպ  
մեղաւորներ էք : Եւ կըյուսամ որ՝ աս  
ձեզի աղէկ ուշադրութիւն ընել տայ  
պիտի ան մեր խօսելու բաներուն՝ որ  
Օղջումին վրայ են : Քանզի ամենէն  
մեծնիւթը աս է , որ դուք աղէկ մը  
գիտնաք թէ ինչ է Ճշմարիտ Օղջու  
մը , և որ ան տեսակ տըտմութիւնը

դուք ձեր սրտերնուդ մէջը ունենաք :  
 Ես է խիստ հարկաւորը . ինչու որ եւ  
 թէ մեղքը ասանկ մէկ գէշ բան մըն է  
 ինչպէս որ մենք տեսանք ասանկ ըլ  
 լալը , պէտք է որ ամեն բանէն աւելի  
 յանկանք անկէց ազատ ըլլալ : Եւ  
 Աստուած մեզի աղէկ հասկըցուցեր է  
 իր խօսքովը , որ առանց Օղջումի  
 դուք բնաւ մեղքէ ազատ չէք կընար  
 ըլլալ :

Հեմայ մենք պիտի ջանք լինենք ,  
 որ գտնանք թէ՝ ո՞րն է Ճշմարիտ  
 Օղջումը : Եւ աս ընելու համար՝  
 մէկ քանի բանէրը որ մեր առջե խօ  
 սակցութեանը մէջ զըռցվեցան , աւ  
 նոնք ձեր միտքը պիտի բերեմնորէն :

Եռէստ . Ի՞նչ է ան մայր . երբոր  
 զանազան տեսակ տրտմութիւններուն  
 վրայ խօսեցանք նէ , անիկան է մի ըւ  
 սածդ :

Անյը . Այս . ու դուք ամենքդ կըր  
 նաք միտքերնիդ բերել ան զըռցված  
 երկու տեսակ տրտմութիւնները :

Վեկը ան տրտմութիւնն է , որ  
մենք յանցանք գործած և անոր հա-  
մար նեղութիւն քաշած ատեննիս ,  
կամ մեր ըրած յանցանքին համար  
նեղութիւն մը քաշելու երկիւղ ունե-  
ցած ատեննիս ներախղինիս կիմանանք  
ան ցաւը : Եւ մէկալը ան տրտմու-  
թիւնն է՝ որ մենք կըքաշենք ներ-  
սիդինիս պէտք եղած բանը չընել-  
նուս համար , և ան բանին պատճա-  
ռաւնեղութիւն մը քաշենուս համար՝  
կամ նեղութիւն քաշելու երկիւղ ու-  
նենալնուս համար :

Երբեք . Վայր՝ հրամանքդ գիտես  
ան մարդը , որ անիկա անցած ամիս  
մեր քեռիկն ըստակ գողցաւ : Անիկա  
հիմայ բանտին մէջն է . ու ես կը-  
մտմտամ որ՝ անիկա շատ ցաւ ու տրտ-  
մութիւն զգայ պիտի :

Վայր . Տըղաս՝ կընամ ըսել որ , ան  
հիմայ տրտմութիւն կըքաշեկոր : Ա-  
նիկա անշուշտ տրտմութիւն պիտի  
ունենայ՝ որ ինքը բանտին մէջն է ,

և որ ինքը մէկու մը հետ չե կընար  
խօսիլ անտեղ : Կըխորհի՞ս որ անիւ  
կտ ստակ գողնալուն վրայ տրտմու-  
թիւն ունի :

Երբ . Կըկարծեմթէ կըտրտմի .  
քանդիթէ որ ինքը գողցած ըրլար նէ  
անիկա , բանտին մէջը չէր դրվեր :

Այս . Արդեօք գիտցըված է մի՞ որ  
առաջ ալ ստակ գողցած ըրլայ :

Գրեթոք . Կարծեմ ինքը խոստովա-  
նած է թէ շատ անգամ ըրեր է աս  
բանը . բայց ան ըրածները առաջ  
բնաւ դուրս չեն ելեր :

Այս . Երմնդ , դուն կըկարծե՞ս որ  
իրեն ստակ գողցած ատենները՝ տրտ-  
մութիւն քաշած ըրլայ , քանի որ կը-  
խորհէր թէ իր ըրածները չե պիտի  
յայտնըլին :

Երբ . Աղէկ չեմ գիտեր մայր .  
բայց էվելօք կըկարծեմ , որ հոգը չե-  
ղաւ . քանդիթէ որ տրտմած ըրլար  
նէ՞ ալ գողութիւն ընելէն մէկ դի  
պիտի կենար :

Մայր · Երբոր անիկա քու քեռիկդ  
տուակը գողցաւ, և ան ստակը իր սըն  
տուկին մէջը որ գտնըվեցաւ, և եր  
բոր իր վրայ կասկածի երթալով՝ ա  
նիկա յանդիմանեցին նէ, կըկարծե՞ս  
ո՞ր՝ ինքը անատեն իր ըրածին վրայ  
ցաւ քաշած ըլլայ :

Երմակ · Կարծեմ թէ ցաւ քաշեց՝  
քանդի անատեն ինքը սկըսեց վախ  
նալ թէ գուցէ բանտը կըճպվի :

Մայր · Ենատենվան իր ունեցած  
տրտմութիւնովը՝ կամ ան տրտմու  
թիւնովը՝ որ կըկարծէ թէ հիմայ ու  
նի, յայտնի կըլլայ մի թէ ինքը իր  
ըրած գողութեանը յանցանքին վրայ  
իրաւցընէ տրտմած ըլլայ :

Յայտնի կըլլայ, որ իր սիրաը կու  
ղէ խոստովանիլ քու քեռիկդ իր ըրած  
չարութիւնը՝ անկէց ըստակ գողնալո  
վը, և իրմէն թողութիւն ինդըիլ :

Անոլ յայտնի կըլլայ, որ ինքը  
կըսօժարի թողութիւն ինդըիլ ըոլու

իրեն մինչև հիմայ գողցած բաներուն  
համար , ան ամեն առաջները նորէն  
ետ դարձունելով՝ որչափ որ պատե-  
հութիւն ունի նէ : Ենով յայտնի  
կըլնի , որ ինքը մէյմալ գողութիւն  
ընէր՝ թէ որ պատեհութիւն ունե-  
նայ , և թէ որ կարծիք չունենայ որ  
իր ըրածը պիտի գիտցըլի :

Երբ . Չեմ կարծեր մայր . ինչու  
որ ես լոեցի թէ՝ բանտին մէջը եղած  
ատենն ալ դանակ մը գողցեր է . որ  
անոր համար իրեն պատիժ տալով  
շղթայակապ ըրեր են :

Անց . Աւրեմն իր ըրած տրտմու-  
թիւնը բանի չաժէր . որովհետև ին-  
քը տակաւին մէկ գող մըն է : Ինքը  
միայն իր պատժը իւն վրայ տըր-  
տումէ : Ինքը չի խորհիր՝ որ ուրիշ-  
ներուն աղէկութիւն ընէ : Իրեն հո-  
գը չէ օրէնքին վրայով : Ենիկա նո-  
րէն պիտի կոտրէ ան օրէնքը , թէ որ  
կընայ ընել անանկ մէկ բան մը՝ որ  
յայտնի չըլլըլի :

Գրեթոք . Այսից կարծեմ որ ան  
մարդուն ունեցած առ տեսակ տրտ  
մութիւնը ճշմարիտ օղջումի նման  
բան մը չէ :

Ո՞յզ . Տըղաս , Ճիշտ ես ալ նոյն  
բանը խօսելու վրայ էի . և ուրախ  
եմ որ դուն ինքիրմէդ խորհեցար ա  
նիկա՞ առանց իմ զրուցելուս :

Այս քու ըստածիդ պէս ճշմարիտ  
օղջումը մէկ շաբ տարբեր տրտմու  
թիւն մըն է մեղքի վրայով :

Թէ որ ան տրտմութիւնը որ դուք  
ներսիդինիդ կունենաք Աստուծոյ ար  
գիլած բանը ընելնուդ կամ պատուի  
ըած բանը ընելնուդ համար , միայն  
Աստուծոյ ան օրէնքները կոտրողնե  
րուն դէմ սպառնացած պատիժին ու  
քատաղարտութեանը վախուն համար  
է նէ , դուք անատենը մեղքելնուդ  
վրայ ճշմարիտ օղջում չունիք :

Ան կեսպ տրտմութիւնը չի ցուցը  
նէր թէ դուք ըստ յանցանքնուդ  
վրայ կրղջաք . ան չի ցուցընէր որ

դուք Արտուծոյ վրայ սէք մը ունիք ,  
 և որ դուք կը ցանկաք պատուել զի՞ս  
 պուած իր պատուէրնելուն հնազանդ  
 բլալով : Ան չի ցուցնէր որ դուք  
 կամեցող էք , ուրախութեամբ յօժար  
 էք բոլոր սրտէ հնազանդիլ իր իշխա-  
 նութեանը :



## ԳԼՈՒԽԸ. Եւ

Նոյն նիւթեն վրայ եւ մշտական լիւն հը ։  
Հյանացածք չէ ապագայ պատրիժեն կանչըլու-  
ցանիուս։ ԽՇԱԴ աղջո անյնառել պարագա-  
լետնը օքենուն։

Մայր ։ ՏԵՂԱՔ, անցած իրիկուն  
մենք ուստանք որ մէկ տեսակ տրա-  
մութիւն մը կընացիոր ըլլալ, որ մե-  
րին մեղք ունենախուս վրայ կըդդանք,  
բայց ան տակաւին մեր սրտին մէջը  
ճշմարիտ օդջում չ'։

Աս կերպ տրամութեանը նոյելով,  
կուղեմ հարցունել Վրիդութին քանի  
մը խնդիրներ։

ԳԵՐԵՄ ։ Ի՞նչ են անոնք մայր։

Մայր ։ Օանաղան ժամանակիներ ե-  
ղած է որ դուն ինձի անհնաղանդ  
զանըլելուդ համար տրամութիւնքա-  
ջեցիր ։ անանկ չէ մի։

ԳԵՐԵՄ ։ Եյն մայր։

Մայր ։ Հեմայ ինձի զրուցի ՝ ի՞նչ

պատճառի համար դուն ան տըսմու  
թիւնը ունեցար :

Դռէժոր . Կարծեմ անոր համար էք  
որ՝ իմացայ թէ յանցանք էք ըրածս .  
և վախցայ որ հրամանքու կըսրդողիս  
իմվրաս և գուցէ իս կըպատժես :

Անյը . Եղէկ , ատ քու վախցածիդ  
պէս տեսար՝ որ ես քեզի սրդողեցայ .  
կամ երբեմն իմ քեզի սպառնացած  
պատիժս դուն քաշեցիր , քու անհնա  
զանդութեանդ համար . ուստի իմ քե  
զի սրդողելէս ու պատիժ տալէս ետ  
քը՝ անատեն ինչպէս զգացում ունե  
ցար դուն ներսիդիդ :

Դռէժոր . Ել անատեն իմ տըսմու  
թիւնս ալ անցաւ . և երբեմն շատ  
շուտով մոռցայ իմ անհնազանդու  
թեանս վրայով ու ձեր սրդողկութեա  
նը ու պատիժին վրայով եղած բալոր  
բաները : Երբեմն ալ եղած է օր՝ ա  
նոնց վրայ քիչ մը ատեն խորհած ըլ  
լամ , և նորէն անանկ բան մը մէյմալ  
չընելու համար առաջադրած ըլլամ :

Առաջ . Կնչու խորհեցար որ նորէն  
անսանկ քան մը մէ յմալ չընես :

Դռէժոր . Ենոր համար որ՝ գիտցայ  
թէ ետքը նորէն ես ձեր սրդողկութիւ-  
նը կամ պատիժը պիտի քաշեմ :

Առաջ . Տայց բոլոր աս բաներուն  
մէջ խորհեցար մի դուն՝ ոք ինձի  
անհնազանդ ըլլալովդ ցուցուցիլ թէ  
դուն պատշաճաւոր կերպով մը իմօ-  
րինաւոր իշխանութեանս չինայեցար՝  
որպէս թէ տանը գլուխին , և ականջ  
չի կախեցիլ ան կանոններուն կամ  
օրէնքներուն՝ որոնք որ հարկաւոր են  
բոլոր ընտանեաց երջանկութեանը  
ու բարեկարգութեանը համար : Եւ  
ասանկով ինձի անհնազանդ գըտնը-  
վիլդ քեղ տրտմեցնեց մի :

Դռէժոր . Կըվախնամ մայր՝ որ աս  
կերպ չի խորհեցայ ու չըդգացիներ-  
սիդիս :

Առաջ . Խորհեցար որ ձեր անհնա-  
զանդութիւնը չար ու դէշ քան էր ,  
թէ և ես անոր դէմը պատիժ խոստա-

ցած ըրլայի նէ , և աս խորհուրդը  
ձեզ տրտմեցն ւց մի որ անհնազանդ  
գտնը վեցաք ինծի :

Գրեթոք . Չեմ կընար ըսել մայր ,  
որ մտմտացի ու ասանկ դդացի :

Առաջ . Եղբէկ . ուրիշ բան մըն ալ  
հարցունեմ . Ըտեն ատեն դուն ինծի  
անհնազանդ եղաք , ու վախցար ան  
իմ խոստացած պատիժէս . բայց ան  
աս կերպ եղած ըլլար , որ քու անհնա-  
զանդութիւնդ ուրիշ մէկու մը յայտ-  
նրված չէր՝ միտյն թէ ինքը ըդինքիդ ու  
Վստուծոյ : Խել մը ժամանակ անցնեւ-  
էն ետեւ խելքդ հասաւ հաւտացիր  
որ ան ըրածդ ամենեին դուլս չի պի-  
տի ելլայ . անատեն դուն տրտմութիւն  
քաշեցի՞ր քու ըրած չարութեանդ ու  
անհնազանդութեանդ համար :

Գրեթոք . Ինքիրէնս քիչ մը տհա-  
ճութիւն դդացի . բայց պէտք է որ  
խոստվանիմ՝ թէ չըդգացի այնչափ  
տրտմութիւն յանցանք ընելուս հա-  
մար՝ որչափ որ երբ խորհեցայ թէ

պիտի իմացվելը ըրածս , և անոր համար  
պիտի պատժը լիմես :

Առյօն . Եւ կըկարծեմ որ էրբեմն  
դուն ամենելին ալ տրտմութիւն չե  
քաշեցիր , հապանոյն բանը նորէն ը  
րեր չիմացվելուն համար , և յոյս ու  
նենալուդ համար որ նորէն պիտի ա  
զատիս ըրած բանդ յայտնի ըլլալէն :

Գրէտո՞ր . Ատ իրաւ է մայր :

Առյօն . Հիմայ ինչ որ Գրիգոր իր  
վրայովը զրուցեց նէ , ձեզմէ ալ  
չեմ երկրայիր ես Վղիսա ու Երմնդ  
որ դուք ալ ունեցած ըլլաք առ  
կերպ բաները : Գուք զանազան ժա  
մանակներ տրտմութիւն զգացիք ինձի  
անհնազանդ ըլլանուդ համար ան  
պատճառաւը , որ վախցաք իմ ուրը  
դողելէս ու իմ ձեզի խոստացած պա  
տիժէս . և գիտեմ որ աս եղած էր  
գլխաւոր կամ զուցէ մի միայն պատ  
ճառը ան ձեր տրտմութիւն զգալուն :

Հիմայ դուք ինքիրէննուդ գիտէք  
որ կրնաք աս տեսակ տրտմութիւն ու

նենալ, և տակաւին միշտ ինծի անչ  
հնազանդ ըլլալը ուղել՝ երբոր իմ  
պատուիրած բանս ձեր հաճութեանը  
ու կամքին դէմեղած ըլլայ:

Դուք կընաք աս տեսակ տրոմու-  
թիւն մը քաշել, և տակաւին ուղել  
նորէն նոյն բանը ընել. մանաւանդ  
թէ որ կըխորհիք որ ես ան ձեր ը-  
րածը չի պիտի դիտնամ:

Աս տեսակ տրոմութիւնը՝ ինչպէս  
դուք կըտեսնաքկոր, շատ տարբեր է  
Ճշմարիտ օդումէն:

Դռնեռ. Բայց մայր՝ յանցանք է  
մի Եստուծոյ բարկութենէն և իրեն  
մեղքի դէմ խոստացած պատիժէն  
վախնալը :

Եղես. Մայր՝ ես ալ ատ բանին  
վրայ կըխորհէիկոր :

Անց. Տըղաքս ատ բանը յանցանք  
չէ:

Թէ որ յանցանք մը ըլլար ասանկ  
վախ ունենալը, Եստուծ մեղք Սուրբ  
Կիրքին մէջ այսչափ չէր զրուցեր՝

որ մեղքի դէմ իր խոստացած պատիւ  
 ժէն փախչինք : Ինքը մեզ կըզգուշաւ  
 ցունէ անկէց փախչիլ, անոր համար  
 որ ետքը ան ձեզ՝ քեզ Գ.րիզոր, քեզ  
 Եղիսա, քեզ Երմոդ, թշուառու  
 թեան մէջ կըձգէ, ու գէշին գէշը  
 կընէ յաւիտեանս : Ինքը ձեզի կըս  
 տիպէ՝ որ մեղքէ ետ կենաք, զըղջաք  
 մեղքերնուդ վրայ . յոյսերնիդ Գ.րիս  
 տոսի վրայ դնէք, որն որ ծայրագոյն  
 Առաջնորդ ու Փրկիչ մընէ՝ մեղքեւ  
 բուն ապաշխարութիւն ու թողութիւն  
 տալու համար . և իր օրինակին հեւ  
 տեիք՝ Աստուծոյ կամքը ընելովնիդ,  
 որ կարենաք երկինքը երթալ, և ան-  
 տեղ յաւիտեանս երջանիկ ըլլալ :

Ինքը իրաւցընէ ասանկ խրատներ  
 չէր իտար, թէ որ յանցանք ըլլար  
 ձեզի մեղքերնուդ համար տրտում է  
 ղած՝ ու անոնց վրայ զւջում ըլլած  
 ատենինիդ ձեր վրայով խորհիլը, ձեր  
 նեղութենէն խալըսելուն վրայով՝ ու

Ճեր մասնաւոր բարութեանը վրայով  
խորհիլը :

Բայց ինչ բան որ ես ճեղի ջանացի սորվեցունել, աս է որ՝ աս կերպ բաները խորհելով տրտմութիւն մը ունենալէն՝ ի զատ, մէկ ուրիշ կերպ տրտմութիւն մը ունենալ շատ հարկաւոր է :

Թէ որ ճեր ըրած մեղքերուն վրայով եղած տրտմութեանը պատճառը միայն պատիժին վախն է նէ, յայտնի է որ դուք ճշմարտապէս օղջում չէք ըրած մեղքերնուղ համար : Հապա ճեր զի ջումը պէտք է որ ուրիշ կերպ և էվելի զօրաւոր պատճառներէ յառաջ դայ :

Դիցուք թէ Վրիգորը ճամբան մէկ աղքատ պղտի տղայ մը զտնայ՝ անօթի ու մըսած, որ հայր ու մայր կամ բարեկամ մը չունենայ իր վրան հոգ տանելու : Եւ դիցուք թէ ես Վրիգորին զրուցեմ, որ ինքը ան որք տղան առնէ մեր տունը բերէ, և ին-

Քը անոր վրայ հոգ տանի՞ և հայրու  
թիւն ընէ անոր : Աեպէնք որ Գրի  
գոր ալքեռիին իրեն տըւած ստակին  
մէկ մասը առնէ , ու ան պղտի տղին  
համար հանդերձ շինէ՞ ու գիլքեր առ  
նէ , և բոլոր ան տղին աղէկ կերպով  
զարգանալուն ու մխիթարութեանը  
հարկաւոր եղածները առնէ : Ասան  
կով ան պղտի տղան շատ երջանիկ  
ըլլայ , մեր հետը բնակելովը : Եւ  
Գրիգորն ալ մեծ բերկը ութիւն ու  
նենայ ան Խորոսին (Գիցուք թէ ա  
սանկ ըլլայ իր անունը) աղէկ վարք  
ունենալուն վրայ , և իր զրուցածին  
հնապանդ ըլլալուն վրայ :

Ես Գրիգորին զրուցեմ որ , նայի  
ինքը թէ կընայ մի կառավարել Խո  
րոսը , և աս մասին մէջ ալ անոր հայր  
ըլլալ : Գրիգոր ալ աս զործին հաճի ,  
և ան բանին ձեռք զարնէ մէկ մեծ  
հաստատուն մտադրութեամբ մը :  
Իայց ժամանակ ըլլայ որ , Գրիգոր  
խոստացած ըլլայ Եղիսային ու Երմու

զին և ան թորոսին , որ ինքը անոնց  
 ամենուն մէկնոր պատկերազարդ գիրք  
 մը պիտի ցուցընէ գալու շաբաթ օրը  
 կէսօրէն ետքը , որ պարապ ժամ ու  
 նին . և ապսալրէ որ մինչև ան օրը ա-  
 մենեին ան գիրքին իրենք ձեռք չե-  
 ղը պայունեն : Եւ որովհետեւ ինքը Գր-  
 ըիդոր գիտէ որ թորոսը շատ հետա-  
 քը քը ութիւն մը ունի պատկեր տես-  
 նալու , և շատ անդամալ վնաս ըրած  
 է անոնց . և որ ինքը անհնազանդ ե-  
 ղած է գիրքերը ձեռք առնելով որ  
 ժամանակ որ իրեն արդելած էր , հի-  
 մայ Գրիդոր նորէն կը զը ուցէ թորո-  
 սին թէ “ Են նոր պատկերազարդ  
 գիրքը չե պիտի առնէ գրատունէն .  
 և թէ որ առնելու ըլլայ նէ ան օրը  
 իրեն երկու անդամին եղած կերակու-  
 ը միայն ցամաք հաց ու ջուր պիտի  
 ըլլայ ” :

Պահնքոր հիմայ թորոս ան միջոց-  
 ներուն մէկ օրը մինակ եղած ըլլայ ան  
 պատկերազարդ գիրքին եղած տեղը :

Ենքը մտմտայ թէ ինչ զբւարձալի  
 ժամանակ մը կընայ ունենալ ան  
 պատկերները տեսնալու , նաև շատ  
 փափաքի՞ որ անոնք տեսնայ : Եւ աս  
 տեսն ինքը մտմտայ ցամաք հային ու  
 ջուրին վրայ՝ որ բոլոր օրվան իր կե-  
 րակութը պիտի ըլլայ թէ որ ան գիր-  
 քին ձեռք դարնենէ : Յսանկ խորհե-  
 լով ինքը աս բանը չուզէ ընել գիտ-  
 նալով որ իրիկվան սեղանը ազնիւ-  
 կերակութներ պիտի ըլլայ կարկան-  
 դակ և անուշեղին բաներ , որ ինքը  
 շատ կըսիրէ : Ետքէն աս ալ մտմտայ  
 թէ գիրքը առնելովը յանցանք գոր-  
 ծած պիտի ըլլայ , գիտնալով որ ինքը  
 առաջուց վնաս ըրեց էր ուրիշ գիրքի  
 մը պատկերներուն , և կարելի է որ  
 հիմայ աս գիրքին ալ վնաս կընէ . ո-  
 րուն համար ինքը լսած ալ ըլլայ թէ  
 ան գիրքը շատ ստակի արժէք ունի :  
 Եւ աս բաներէն ետքը միտքը ըերէ  
 թէ ինտիր գրիգոր իրեն բարիքներ

ըրած ունի, և թէ՝ արժան է որ ինքը  
անոր հնազանդ ըլլայ :

Եւ աս բանին վրայ ինքը խորհելէն  
ետ չի կրնար կենալ: Քանզի ներսիւ  
դիէն իր խղճմտանքը յայտնի կրզուլ  
ցէ իրեն՝ թէ Գրիգոր աղէկ ըրաւ՝ որ  
ան գիրքը իրեն արգիլեց՝ որ չառնէ,  
և որ՝ շատ աղէկ պիտի ըլլայ, որ ինքը  
ամենուն հետ մէկտեղ ան գիրքը  
տեսնայ՝ որ ատեն որ Գրիգոր ալբա  
ցատրելու կրլայ իրենց ան պատկերը  
ներուն վրայով :

Բայց գանք որ՝ իր հետաքրքրութիւնը էվելօք շատցած ըլլայ ան գիրքը  
տեսնալուն բաղձանքովը :

Ուստի ալ իր խղճմտանքին դրուցած բանին չի նայի թէ՝ պէտք է իրեն  
որ Գրիգորին հնազանդի : Հապա առնէ ան գիրքը, ու վար նըստի կրակին քովը մէկիկ մէկիկ ան պատկերները  
նայելու : Գիրքն ալ անանկ մեծ է, որ ինքը աղէկ մը անիկա բռնելու ճարպիկութիւն չունի :

Հիմայ գերքը ձեռքէն իյնայ կրա-  
պին մէջը , և անիկա դուրս հանելու  
կրնալէն առաջ շատ մը էրի , ու ան-  
պատկերներէն շատը աւրուվի՝ անպի-  
տան ըլլայ . և մնացածներուն ալ  
մէյմէկքիչ վնաս ըլլայ :

Աս մէջոցին Գրիգոր ալ ներս  
մտնայ :

Ալ հիմայ թորոսը բոլորովին շը-  
փոթութեան ու խռովութեան մէջ  
ըլլայ . իր ըրածը ինքը խոստովանի ,  
և իր աչվը ներէն արցունք թափելով  
զրուցէ թէ ինչպիս տրոտումէ , ինտուր  
շատ տրտմութիւն ունի ինքը՝ ան բա-  
նը պատահելուն վրայ :

Հիմայ դիցուք թէ տըղաքն , ան  
թորոսը միայն անո՞ր համար տրտմու-  
թիւն ունենայ՝ որ կըտեսնայ թէ Գր-  
իգոր իր վրայ սրդողած է . և որ՝ ին-  
քը մինչեւ իրիկուն միայն ցամաք հաց  
ու ջուր պիտի ունենայ , և չի պիտի  
պնայ վայելէլ իրիկվան ան ազնիւ-

կերակուրները և անուշեղէն բաները :

Ոսենք թէ իր խորհիլը և վախնալը միայն պատիժին համար ըլլայ . ան միայն ըլլայ իր տրտմութիւն ունենալուն պատճառը : Ինքը ասոր համար տրտում չըլլայ՝ որ յանցանք գործեց անհնազանդ գոնըլվելովը Գրիգորին մէկ աղէկ ու արդար պատուէրին , որ իրաւունք ունէր ան հրամանը ընելու իրեն , և որ՝ այնչափ բարերարութիւնն ալ լրած էր իրեն : Ինքը չի տրտմի ան իրեն գործած թշուառութեանը վրայ՝ որ Գրիգոր պիտի զգար ասանկ մէկ մեծագին զիրքի մը վնաս եղածը տեսնալով : Ինքը տրտում չըլլայ ան ձախորդութեանը և ան բոլոր տղոցը յոյաերնին զրկելուն վրայ և իրենց բաղձանքը կորսընցունենուն վրայ՝ որ կուղէին ան գեղեցիկ պատկերները նայելու : Ինքը տրտում չըլլայ ասանկ ինքը զինքինքին ալ և ուրիշներուն ցուցընելուն վրայ իր մէկ անհը

Նազանդ բնաւորութիւն ունենալը՝ որ  
մեղք մըն է . որն որ ինքը առաջ ան-  
դամ մը ցուցուց , և կրկարծըվի որ  
ինքը նորէն պիտի ընէ ասանկ անհրա-  
նազանդութիւններ : Ինքը տրտում  
ըրլայ անոր համար՝ որ մէկ չար օրի-  
նակ տրւող մը եղաւ մէկաւ տղոցը ,  
և որ կարելի է թէ անոնք աւ անկէց  
պիտի սորվին ասանկ մեղքեր գործե-  
լը , և իրենց մօրը ու վարժապետին  
պատուելներուն անհնազանդ ըլլա-  
լը : Հապա ինքը միայն անոր համար  
տրտում ըրլայ՝ որ ըոլոր օրը իրեն կե-  
քակուր ցամաք հացէն ու ջուրէն՝ ի  
վատ ուրիշ բան պիտի ըրլայ , և պի-  
տի կորսընցունէ ան կարկանդակը ու  
անուշեղէն բաները :

Գանք որ հիմայ քեզի հարցունեմ  
Դրիգոր , դուն ի՞նչ պիտի խոր  
հիս ասանկ մէկ անհնազանդութեան  
գործքի մը վրայ , և ասանկ մէկ  
մեծաղին պիրքի մը վնասելուն հա-  
մար եղած ան աեսակ տրտմութեանը  
վրայ :

Դրէժոր . Պէտք է որ զըռուցեմհըրամանքիդ մայր ։ Ես կիմանամ որ ալ ասամկ տղայ մը որուն համար որ ես այսչափ աղէկութիւններ ըրի , անիկա շատ մէկ չար տղայ մըն է և շատ ալ ապերախտ է ինծի իրեն վրայ ըրած բոլոր իմ բարերարութիւններուս դէմը :

Երես . Ես անոր լման մէկ շաբաթ մը կերակուրի տեղ միայն ցամաք հաց ու ջուր կուտամ :

Երես . Ես աս կերպ բան մը չեմ ըներ . հապա իսկոյն անիկա տունէն գուրս կըհանեմ , և ալ անոր վրայ հոգ չեմ ըներ :

Մայր . Երմոդ Եղիսա , ձեր զըռուցած խօսքին մէջը յայտնի կերևայ կոր որ դուք աղէկ բնաւորութիւն մը չունիք ներսիդինիդ :

Են աղան իմ օրինակի համար ըստ գիպաւածովս սէպէնք որ , մեծ յանցանք ըրաւ . բայց կարելի է որ անկէց ալ էվէլ շատ դէշ բան մը ըս-

նէ : Եւ իմաս կերպ պատմութեանս  
 նպատակը սոսկ ան տղին գիրքը առ  
 նելուն վրայ կամ իրեն անհոգ ըլլա  
 լուն վրայ , և ան եղած վնասներուն  
 վրայ չէր , որ դուք միտքերնիդ առ  
 բաներուն վրայ բերիք : Ճապա՞ ևս  
 աս կերպ պատմութիւնն մը ընելով  
 ձեզի , ուզեցի որ նայիք դուք՝ թէ ան  
 տղան ի՞նչ տեսակ տրտմութիւն ունե  
 ցաւ . որ ասով դուք կարենաք տես  
 նալ՝ թէ ինտոքը բոլորովին լնձնա  
 սէր Տրտմութիւնն մըն էր անոր ունե  
 ցածը . և դիտնաք թէ ան կերպ  
 տրտմութիւնը իր ներսի զգացմանը  
 մէջ մէկ աղէկի փոխվիլ մը չի ցու  
 ցընէր : Են տրտմութիւնը չի ցուցը  
 նէր թէ , ուրիշ անգամ աղէկ և վայե  
 լուչ կերպով պիտի ընէ ինքը՝ երբոք  
 պատեհութիւն ունենայ և երբոք  
 կարծիք չունենայ որ ըրածը պիտի  
 յայտնըվի :

Աւ հիմայ դուք ամենքդ ասանկ  
 անձնասէր տրտմութեանն մը անպի

տան և աճօդուտ ըլլալը հասկըցաք ,  
և ինքիրէննուդ մէկ հաստատ տհաւ  
Ճութիւն մը ցուցրցիք անոր վրայ :  
Եւ արդարեւ արժան է՝ որ գուք առ  
կերպ բանի վրայ տհաճութիւն ցու  
ցընէք : Անաց որ կըվախնամ թէ  
Երմողն ու Եղիսան ան պրոի տղին  
հետ խստութեամբ պիտի վարվին ,  
թէ որ անիկա իրենց հողողութեանը  
տակ ըլլար նէ :

Վերջապէս սիրելի՝ զաւկընելու ,  
ըոլոր աս զրուցած խօսքէրուս վրայ  
գուք աղէկ մը մումտացէք , և հաս  
կըցէք՝ որ ձեր ըրած տրտմութիւնը  
Վնձնասիրական է , թէ որ մեղքերւ  
նուդ համար տրտմութիւն քաշած ա  
տեննիդ միայն Վստուծոյ ան մեղքերւ  
նուն դէմ խոստացած պատիժին նա  
յելու ըլլաք նէ :

Վսանկ մէկ տրտմութիւն մը չե  
ցուցընէր , որ ձեր ներսիցին աղէկի  
դաւնալու մէկ փոփոխութիւն մը կայ :  
Քանդին թէ որ Վստուծ մեղքի դէմ

պատիժ խոստացած ըլլար , կամ թէ  
որ ձեզի կարելի ըլլար հաւտալ թէ  
ինքը բնաւ մեղքերնիդ չե պիտի իմա-  
նայ , ալ աս կերպ Անձնասիրական  
տրտմութիւնը ձեզի մեղք գործելէն  
չե պիտի զգուշացունէր :

Այսափի մեր խօսակցութիւնը ալ  
սովորականէն շատ երկար եղաւ :  
Աշղը իրիկուն նորէն աս նիւթին  
վրայով կըխօսինք :



ԳԼՈՒԽԸ . Բ :

Հ աստիճան մեղք մը խոսքով մասնիւր , և առ ը-  
րած բանին յանցան ուլուր իմանուր՝ ա-  
ստանց ճշմարիդ Օզքան եղած իւլոյ :  
Ճշմարպատկէն եղած Օզքանը՝ մեղքը մէ-  
տէ յժեւը , և պլատուում սիրեւը՝ ու անոր  
հնապահնուր հասպատ առաջարկութե-  
նէն եցէլք բան մըն է :

Մայր . Գրիգոր , ան տղան որուն  
Համար որ կալծիք ունէինք թէ ան-  
ցած շաբթուքու զմելինդ գողցեր էր ,  
ասօր անիկա հոս եկաւ օրհասրակին ,  
ու ետ թերաւ ան զմելինը :

Գրիգոր . Մայր խոստովանեցաւ որ  
ինքը գողցեր էր անիկա :

Մայր . Այս խոստովանեցաւ : Ըս-  
տաւ որ ինքը շատ տըտմութիւն զգա-  
ցեր էր անիկա գողնութիւն Համար , և  
կըստաւ որ ես թողութիւն տամ ի-  
րեն , և մէկու մը չի զըուցեմ ան բա-  
նին վրայով :

Երեւան · Աղբէկ · կարծեմթէ մայր  
ան տղան խակապէս զղջաց իր ըրտ  
ծին վրայ :

Առյօն · Հաստատ չեմ կրնար դրու  
ցել թէ չի զղջաց · բայց շատ երկ  
բայութիւն ալ ունիմ անկէ առ բա  
նին վրայով :

Դրեժոր · Ինչու մայր :

Առյօն · Անոր համար որ՝ մեղքի խոս  
տովանութիւնը չի ցուցընէր միշտ՝ թէ  
ան իր մեղքը խոստովանող մարդը  
Ճշմարտապէս զղջում ըրտծ ըլլայ տ  
նոր վրայ : Կո՞յն կերպով առաջ ալ  
ես աս տղին իր յանցանքը խոստովա  
նիլը լսեցի : Երբոր ինքը՝ ուրիշնե  
րուն ի՞նչ աչքով իր վրայ նայելու  
կերպէն կիմանայ թէ իր վրայով կաս  
կած ունին, և կամ իր ըրած բանին  
յայտնի ըլլըվիլը շատ հաւանական  
է, կըսկըսի ալ ան բանին վրայ խոր  
հիլ թէ ի՞նչ պիտի ընէ :

Երբեմն՝ ինչպէս դիտեմ ես, անիւ  
կա կըհաստատէ իր մտքովը՝ թէ բանը

բոլորովին ուրամսայ . և ան կերպով  
կըսուսայ որ՝ իր ստութիւնը զինքը ա-  
պահով կընէ : Ուրիշ ատեն ալ կը-  
վախնայ թէ՝ աս կերպով չըլլար , իր  
ստութիւնը կըսայտնըվի . անոր հա-  
մար իր յանցանքը կըխոստովանի ,  
որպէս թէ ասիկա պատիժէն փախչե-  
լու մէկ ճամբայ մը կըլլայ իրեն :

Հիմայ թէ որ այսպէս խորհեցաւ  
ու զգաց իրեն ասօր հոս զալուն ատե-  
նը նէ , և անանկով խոստովանեցաւ  
որ ինքը ան զմելինը գողցաւ , ձեզի ա-  
մեննուդ յայտնի է որ՝ անիկա իր մեղ-  
քին վրայ ճշմարիտ օդջում ըրած չէ :  
Եւ կերպով անոր վրայ աղէկի փոխ-  
վելու նշան մը չեղաւ . անոր վրայ  
չերեցաւ անանկ փոփոխութիւն մը ,  
որ իրեն օգուտ ընէ ալ անկէ ետե-  
գողութիւն ընելէն զինքը զգուշացու-  
նելու :

Երշառ . Բայց մայր , Հքամանք  
մեղի սորվեցուցիր որ՝ բնաւ ողէտքը  
չէ մեղի ուրամսաւ մեր ըրած յանցան-

քը, հապա պէտք է որ անիկա շուտով  
հրամանքիդ խոստովանինք :

Անյը . Ասանկ ըսի աղջիկս . և ար  
ժան է որ ասանկ ընէք դուք : Վլէկ  
ըրաւ ան տղան , որ ասօր եկաւ օր  
հասրակին՝ նոյնպէս խոստովանեցաւ  
իր յանցանքը :

Ճշմարիտ Օղջումը ամէն ատեն  
ձեզի պիտի առաջնորդէ յանցանքնիդ  
խոստովանելու ան մարդուն՝ որուն որ  
դուք անհնաղանդ եղաք , կամ որուն  
դէմն որ դուք մեղք գործեցիք նէ :  
Տայց կըլլայ որ դուք աս խոստովա-  
նութիւնը կընէք՝ և ճշմարիտ Օղջ-  
ումը չէք ունենար , ինչպէս աս կերպ  
ըլլալ հաւանական է ան տղին խոստո-  
վանութիւնը , որն որ ասօր կէսօրին  
հոս եկաւ :

Են շարժաւիթները կամ պատ-  
ճառները որուն համար խոստովանան-  
քը կըլլըվի , կըցուցընեն թէ՝ արդեօք  
ան խոստովանութիւնը ճշմարիտ  
Օղջումէն յառաջ կուղայ՝ թէ չ :

Ես հիմայ միայն թէ տըղաքս աս կը  
 խորհիմ, որ դուք շատ անդամ յայտ  
 նեցիք ինծի ձեր ըրած յանցանքը ա  
 նո՞ր համար որ՝ կըվախնայիք թէ ես  
 ան բանը անշնչառ պիտի խմանամ, և  
 անոր համար որ՝ կուղէիք դուք թէ ան  
 ըրածնիդ խոստովանելով մէկ անբա  
 սիր սլարծանք մը ունենաք : Խորհե  
 ցաք ալ նաեւ, որ ան խոստովանիլը  
 շատ թեթև պիտի ընէ ձեր պատիժը,  
 կամ գրեթէ բոլորովին պատիժէն ալ  
 աղատ պիտի ընէ ձեզ : Եւ երբեմն ալ  
 ելքոր ան բանին յայտնի ըլլալուն մէկ  
 վախը որ չունեիք, խղճմտանքնիդ  
 ձեզ անհանդիստ ըրաւ : Գիտէիք որ  
 յանցանք գործած էք, և ան պատճա  
 ռաւ թշուառութիւն կըղղայիք ներ  
 սելնիդ : Կրխորհէիք որ ձեր ունեցած  
 թշուառութիւնը պիտի նըւառի՝ թէ  
 որ յանցանքնիդ խոստովանելու ըլլաք  
 նէ : Եւ գրեթէ միտքելնուդ կանցնէր  
 որ՝ յանցանքնիդ պիտի մէկ զի երթայ  
 անիկա խոստովանելովնիդ, և թէ

գրեթէ ես ձեր վրայ անանկ համաւ  
բում մը կունենայի՞ ինտոր որ ձերին  
յանցանք ըրած ատենը կունենամնէ:  
Հիմայ թէ որ դուք միայն աս պատ  
ճառներուն համար խոստովանեցաք  
ձեր ըրած յանցանքը նէ, ան խոս  
տովանութիւնը մէկ ճշմարիտ օղջու  
մէ մը յառաջ եկած չեղաւ, և դուք  
ալ գիտէք որ այնպէս է:

Դրէժոր . Այայը՝ կընայիմ որ հրա  
մանքդ մեր ներսի զգացումներուն  
վրայով շատ աղէկ տեղեկութիւն ու  
նիս . և կընայիմկոր ալ, որ ճշմարիտ  
օղջումը եվելօք մէկ երևելի բան  
մըն է եվեր :

Այս . Երան է առ տըղաս . և կու  
ղեմուր դուք ամենքդ ալ իմանաք՝ որ  
աս ասանկ է : Աս իրիկվան զըուցած  
բանս ձեզի ցուցընել մըն էր, որ  
պէս զի դուք կընաք որ մեղքերնիդ  
խոստովանիք Աստուծոյ, և աս ընելու  
ատեննիդ կընաք որ իմանաք ձեր յան  
ցաւոր ըլլալը Աստուծոյ առջել, և

տակաւին Ճշմարիտ Օղջում չէք ու  
նենար ձեր սրտերուն մէջը :

Կարելի է որ՝ դուք ամեն աս բանեւ  
ըստ բոլորովին կընէք ան պատիժին  
վախէն՝ որն որ Եստուած խոստացեր  
է մեղքին դէմ։ Դուք կըսուսաք որ  
մէկ կերպով մը կամ ուրիշ կերպով  
մը ձեր խոստովանանքին պատճառու-  
վը Եստուծոյ ձեր վրայ ունեցած սրբ-  
ոողկութիւնը պիտի քիչնայ, և թէ  
անով իրեն ձեզի տրւած պատիժն ալ  
պիտի քիչնայ, կամ զրեթէ ամենելին  
չի պիտի պատժէ ձեզ։ Ո՞եղքը որ  
Եստուծոյ կըխոստովանիք ոչ ուրիշ  
պատճառներու համար՝ հապա միայն  
աս բաներուն համար նէ, ան խոստո-  
վանութիւնը չի ցուցընէր որ ձերներ-  
սի զգայութիւնները աղէկ փոփոխու-  
թիւն մը ունին Եստուծոյ վրայով,  
կամ թէ դուք Եստուած էվելօք պիտի  
սիրէք, կամ ալ առջինէն աղէկ կեր-  
պով անոր պիտի հնազանդիք։ Ես-  
տուած ձեր սիրտերուն կընայի ։

ինքը գիտէ ձեր ամեն խորունկ խոր Հուրդները ու զգացումները : Դուք բան մը անկէց չէք կրնար ծածկել : Օձէ որ մեղքերնիդ իրեն կըխոստովանիք, ինքը գիտէ ինչ պատճառի համար ըլլալը ան ձեր խոստովանանքը : Չէք կրնար դուք անիկա խաքել, ինչպէս որ ատեն ատեն իս կըխարեքնէ : “Պահվըտելու տեղ մը չէ կայ անոնց” որոնք որ անիրաւութիւն կը գործեն” : (ՀՅ. Շ. 22 : ) “Ո ասն զի զի Տէրը ամեն սիրտերը կըքննէ” : (ՄԱԿ. Ի. 9 : )

Աս խօսքերը դուք միտքերնիդ բեւ լէք սիրելի՝ տըլաքս, և աս ալ թէ մեղքի խոստովանանքը որ Վատուծոյ կրնէք՝ որչափ անթերի և անպակաս եղած ըլլայ, թէ որ անիկա սոսկա պէս պատիժին վախուն համար է նէ՞ ան խոստովանութիւնը մէկ ճշմարիտ ջղջումէ մը եղած չէ : Պէտք է որ ան խոստովանութիւնը մէկ ուրիշ կերպ ու երևելի պատճառներէ եղած ըլլա

լայ, ինչպէս ասկէց ետև ես ձեզի պիտի ցուցընեմ:

Դռէ՛տոր . Ա՞յլը, ուրիշ սուտումուտ դղջման տեսակներ կայ մի :

Ա՞յլ . Գրիգոր, աս հարցմունքիդ ես պատասխան տալէս առաջ՝ քեզի բան մը պիտի հարցունեմ: Վիտես որ ինտոր հիւանդ էիր դուն անցած տարի . և մենք ամենքս կըխորհինք որ դուն պիտի մեռնիս . դուն ալ ինքիս մեղ ասանկ կըմտմըտայիլ : Ախտքդ կուգայ մի՝ որ դուն ինտոր տրասութիւն ունիմ՝ կըսէիլ ինծի, Եստուծոյ դէմ մեղք գործած ըլլալուդ համար :

Դռէ՛տոր . Ախտքս կուղայ մայր, և ան ալ թէ՝ ինտոր ես անատեն Ես տուծոյ խոստմունք ըրի իմ աղօթքներուս մէջ, որ եթէ ինքը իմ կեանքս բաշխէ՝ ես ալ մեղք գործելը մէկդի պիտի ձգեմ, և պիտի սիրեմ ինքը ու հնազանդիմ իրեն :

Ա՞յլ . Ենատենը կարծեցի՞ր որ

Դուն մեղքիդ վրայ մէկ ճշմարիտ  
օղջում մը կընէիրկոր :

Դրեժոր : Կարծեցի մայր :

Ասոյք . Ի՞նչ պատճառի համար ա-  
նանկ կարծեցիր :

Դրեժոր . Ինձի այնպէս կերևար թէ  
զլ ջացի . քանզի զօրաւոր առաջա-  
դրութիւն մը ըրի՝ որ ապագայ կեան-  
քիս մէջ զլստուած սիրեմ ու անոր  
հնապանդ ըլլամ :

Ասոյք . Տայց հիմայ ան սեւաջա-  
դրութեանդ վրայ ի՞նչ կրխորհիս  
տըղաս :

Դրեժոր . Ե՛կ մայր , ո՞րչափ շատ  
անդամես ան ըրած խոստմունքս կոտ-  
քել եմ : Ո տինամես ան խոստմուն-  
քը միայն անոր համար ըրած եղայ ,  
ո՞ր շատ կրվախնայիկոր թէ պիտի  
մեռնիմես :

Ասոյք . Քեզ որ ան էր միայն պատ-  
ճառը որուն համար որ դուն ան  
խոստմունքը ըրիլ , ուրեմն չերեար

որ դուն մեղքելուդ վրայ մէկ Ճշմարիտ օղջումը ըրած ըլլոս :

Ճշմարիտ օղջումը տարբեր բան մըն է մէկ սոսկ զօրաւոր առաջադրութիւնէ մը կամ դիտաւորութիւնէ՝ որն որ դուք կընէք, մեղանչելը մէկ դի ձգելու և զբանած սիրել սկըսելու ու անոր հնագանդելու համար :

Ասանկ մէկ առաջադրութիւն մը կընայ ըլլալ մեղքին ի՞նչ ըլլալը պայծառ ու իրապէս չի տեսնալովալ : Են մարդը որ կընէ ան առաջակրութիւնը, կարելի է չի պիտի զգայ թէ ինտօն մէկ յանցաւոր մեղաւոր մըն է շբառծոյ առջելը : Կարելի է որ անիկա չի պիտի տեսնայ ան զինքը դատապարտող օրէնքին սուրբ արդար ու աղէկ ըլլալը : Կարելի է որ անիկա չի պիտի իմանայ իր ըրած մեղքին զէշութիւնը, որ ինքը զործած է անանկ մէկ Կակի մը դէմ, որն որ իրաւունք ունի պահանջելու ան իր կատարեալ սէրը և դէսլի իրէն եղած հնագանդու-

Թիւնը , և որ ինքը այնչափ բարու  
 թիւն ու երկայնմտութիւն ցուցը եր  
 է անոր : Կարելի է որ ինքը չի պիտի  
 զգայ՝ թէ իր սիրու Յատուծոյ հակա  
 տակ է : Կարելի է որ անիկա չի պիտի  
 իմանայ իր կարօտութիւնը , յանցանք  
 ունենալը և կորուստը ու ապագայ  
 թշուառութիւնը , անանկ որ պէտք էր  
 որ ինքը զինքը սոսկ Յատուծոյ շնորհ  
 քին վրայ ձգէ Յատու Քրիստոսի  
 ձեռքովը , և մի միայն աս Փրկիչին  
 վրայ ապաւինելովը իր մեղքերուն թու  
 զութեանը համար և . Յատուծոյ հետ  
 հաշտը վելուն համար : Կարելի է որ  
 մէկքանի ուրիշ զգացումներ , մէկքա  
 նի ուրիշ շարժառիթներ իրեն ճամ  
 բայ բացին ան առաջադրութիւնը  
 ընելու որ ինքը կըկարծէ թէ ան ը  
 նելով Յատուծոյ վրայ սէր ու հնա  
 զանդութիւն ձգելու սկիզբ մը եղաւ  
 իրեն : Բայց ինչպէս և իցէ՞ ան զգա  
 յութիւնները թէ որ իրենց մէջը չու  
 նենան ան մեր առջե բաած զգայու

Թիւնները ու շարժառիթները նէ, ան  
առաջադրութիւնը ճշմարիտ օղջու<sup>լ</sup>  
մով եղած չէ : Եւ ահա աս. նիւթին  
վրայ խարվելու մեծ վտանգ մը կայ  
մարդոց : Դուն իրաւունք ունիս Վրա  
բիզոր, որ կըվախնաս թէ խարվե-  
ցար ան առաջադրութեանդ նայելով,  
որն ոք հաստատեցիր հիւանդ եղած  
ատենդէ :

Եւ առողջութեան ատենդ ալ ին  
քրզինքդ աղէկ մը քննելու մեծ կարօ-  
տութիւն ունիս, որ նայիս թէ սիրտդ  
քեղ չի խարէ : Քանզի Աստուածա-  
շունը մեզի յայտնի կըզըուցէ թէ  
«Վմէն բանէն էվել (մարդուն) սիրտը  
մութ բան մըն է» . (Երեւ. Ժէ. 9 :)

Երմուդ Ես կուզեմ հիմայ քեղի  
խնդիր մը հարցունել : Երբեմն եր-  
բոր դուն յանցանք զործեցիր, ու  
ծախցար իմ սրդողելէս նէ, դուն  
ժիւքէդ չանցուցիր մի շատ հաս-  
տատ կերպով, որ մէյմալ բնաւ դուն  
անանկ բան մը չի տվատի ընես :

Երեսն . Այս մայր շատ աճնպամ :

Մայր . Ի՞նչ կերպ զգացում ունեցար դռն ասանկ հաստատ խորհուրդ գէդ կամ առաջադրութենէդ ետքը :

Երեսն . Շատ միխթարութիւն զգացի ներսիղիս . քանզի ինձի աճնանկ երևցաւ , որ ես բոլորովին ալ մէկ ազէկ տղայ մը պիտի ըլւամ , ու անկէ ետև մէկ գէշ բան մը չի պիտի ընեմ :

Մայր . Չըզգացի՞ր ներսիղիդ , որ զուն մէկ շատ աղէկ բան մը ըրած եզար ասանկ մէկ առաջադրութիւն մը ընելուդ համար :

Երեսն . Այս ինտո՞ր իմացար հրամանքդ , որ ես առ կերպ զգացում ունեցայ ներսիղիս : Քանզի ես հրամանքիդ ամենենին ատիկա զըռուցած չեմ :

Մայր . Այն ժամանակը ճշմարտավէս տրտմութիւն քաշեցի՞ր մի զուայանցանք գործելուդ համար :

Երեսն . Առջե բերանը տրտմութիւն քաշեցի մայր վախնալուս համար :

մար որ հրամանքդ կիմանաս անիկա :  
Իսյց առաջադրութիւն ընելէս ետւ  
քը կրխոչհիմ որ ալ այնչափ տրտ  
մութիւն չըզգացի :

Առաջ . Եղէկ Երմոգ , բայց ետքը  
դուն ինչ կերպով ան քու ըրած աւ  
ուաջադրութիւնդ պահեցիր :

Երմոգ . Աըպարտաւորիմ զըուցելու  
մայր , որ անոնք շատ աղէկ կերպով  
չի պահեցի :

Առաջ . Եկու զաւակս , կըյոււսամ որ  
դուն և մէկալ տղաքն ալ չէք մոռ  
նար ինչ որ զըուցելու եմ աս իրիկվան  
մեր խօսակցութեանը վերջը . որ ա  
սոնք են :

Եղքէ մէկ դի կենալու ու զըս  
տուած սիրելու և անոր հնազանդեւ  
լուն առաջադրութիւնները , ձեղի  
օդտակար չի պիտի ըլլան՝ թէ որ ա  
նոնք յառաջ չի դան ձեւ մողքերուն  
վրայով եղած սրտաւուչ մէկ օդու  
մէ մը , դիտնալով որ յանցանք դորւ

ծած էք մեկ իմաստուն սուրբ ու բարերար Եստուծոյ գէմը :

Ան առաջադրութիւնները ձեզի օդտակար չե պիտի ըլլան, թէ որ գուք չունենաք նաև ներսիդինիդ մէկ հաստատ անկեղծ յոյս մը Յիսուս Քրիստոսի վրայ՝ որն որ ձեր մի մի այն Փրկիչն է . և թէ որ անոր վրայ չապաւինիք՝ թշուառ՝ յանցաւոր՝ դատապարելի մեզաւորներուն պէս, որ կարենաք մեղքերնուդ ներողութիւն դանաւ՝ և Եստուծոյ աչքին հաճելի ըլլալ անոր միջնորդութիւնովը :

Ան առաջադրութիւնները ձեզի օդտակար չե պիտի ըլլան, թէ որ անոնք ձեր խելքովը եղած են նէ : Պէտք է որ՝ Քրիստոսի միջնորդութիւնովը Եստուծմէ խնդրէք, որ իր Սուրբ Հոգին ձեզի տայ, որ անովնորոդվիք, ու դօրանաք ան ձեր առաջադրութիւնները պահելու :

Ուրեմն «Եսկէ ետև զօրաւոր եղիք Տէրոջմով» ու իր կարողութեանը զօ-

քութիւնովը : ” (Եկեւ . կ . 10) : Եւ  
աւկըյուտացվե՞ս որ ան ձեր ըրած բա-  
զի առաջադրութիւնները չեն նմանիր  
առուրվան մշուշին՝ և կանուխ եկած  
ցօղին , որ (քիչ մը ժամանակէն ետքը )  
կանցնի՞ : (Ուշեւ . կ . 4) :



# ԳԼՈՒԽ . թ.

---

Առ որ մէկը ճշաբառաղես իւ պացայ մէկ մէղէ իւ  
զըսոյ տնիկոս բոլոր մէղէնուն զըսոյ ու պալ-  
ջում ունուի ընէ : Ենինանախախաղին : Ըն-  
դայոյէ օրէնոտիւ :

**Անյք . Երմոգ ,** գիտես որ ամիս մը  
առաջ ես քեզ չեխեցի ան մեծ պատ-  
կերազարդ գիրքը առնելուդ համար  
զրատունէն : Կարծեմ մէյմալ դուն  
անոր ձեռք չի զարկիր :

**Երմոգ . Չէ մայրս՝ չըրի :**  
**Եղիսաբետ .** Բայց անիկա ասօր զըրա-  
տունին մէջի եղած թուղթերը կը-  
խառնըշտըկէրկոր :

**Անյք . Տըղաս՝ դուն գիտես թէ ես**  
**ինչ նեղութիւններ քաշեցի անոնք**  
**կարդաւ մէկ մէկու վրայ դնելու ա-**  
**տենս :** Կըսուսամ որ դուն ան զրատու-  
նին մէջի շարված թուղթերը տակ-  
նուվրայ չըրիր :

Երկառ . Երաւ որ մայլ<sup>3</sup> անիկա ը-  
րաւ աս բանը . քանզի անոնք ամենը  
դուրս էր հաներ<sup>4</sup> և կըխառնըշտը-  
կէրկոր . որ անոնք նորէն կարդաւ  
շարելու համար շատ ժամանակ պիտի  
անցունես հրամանքդ :

Այս . Երմոդ , ինտոք հապա դուն  
կըցար աս բանը ընել , որ առաջուց  
ինձի զըուցեցիր թէ շատ տրտմու-  
թիւն ունեցեր էիր անդամ մը ան  
պատկերազարդ գիրքը վար առնե-  
լուդ<sup>5</sup> և ինձի անհնազանդ զտնըվե-  
լուդ համար :

Երմոդ . Բայց մայլ<sup>3</sup> հրամանքդ ին-  
ձի չարգիլեցիր , որ ես չառնեմ ան  
թուղթերը :

Այս . Ճշմարիտ է առ բայց երբ  
քեզ արգիլեցի որ ան պատկերազարդ  
գիրքին ձեռք չի զարնես նէ , պատ-  
ճառներ ցուցըցի քեզի , որ ան խօս-  
քերովս դուն կընայիր իմանալ նաև  
չի մօտենալը ան գրատունին մէջի  
թուղթերուն : Ես զըուցեցի քեզի , որ

կուզէի թէ մասնաւորապէս գրատու-  
նին մէջը ամէն բան տեղնիտեղը կար-  
դով պահվին . և որ առ քու ունեցած  
հետաքրօւթիւնդ որ կուզէս ամէն  
բաները խառնշտրկել ձեռք զարնե-  
լովդ , ես վախցայ թէ ինծի ցաւ պիտի  
պատճառէ վնաս մը ընելովդ :

Երմոդ . Մայր շատ կըցաւիմկոր  
որ ես ան թուղթերը դուրս հանեցի .  
իրաւ որ տրառմեմ ըրածիս վրայ :

Մայր . Բայց քու ատ բանին համար  
ունեցած տրառմութիւնդ քեզ պիտի  
զգուշացունէ մի , որ ալ ձեռք չե-  
զարնես զրատանը մէջի եղած բանե-  
րուն :

Երմոդ . Կըյուսամ որ մայր պիտի  
զգուշացունէ :

Մայր . Եղէկ , պիտի տեսնանք . բայց  
սորմէ տըղաս առ քու ըրածէդ , որ  
մէկ մասնաւոր կերպով յանցանք մը  
ընելէն ետ կընասկոր կենալ , ու տա-  
կաւին ճշմարիա օդջում չես ունե-  
նար :

Թմէ որ դուն ան պատկերազարդ գիրքը առնելովդ ինձի անհնաղանդ ըլլալուդ համար աղէկ տեսակ տրտ մութիւն մը ունեցած ըլլայիր նէ , դուն ալ ձեռք չի պիտի զարնէիր ան տեղի թուղթերուն :

Ճիշտ աս կերպով ահա տըղաքս , կարելի է որ կըդադրիք դուք մէկ մասնաւոր մեղք մը գործելէն լուսու ծոյ դէմ , և այնպէս պիտի կարծէք թէ՝ ճշմարտապէս օղջում ըրած էք դուք ան մեղքին վրայ : Բայց ճշմարիտ օղջում չի կրնար ըլլալ աս , թէ որ դուք ուրիշ կերպ բաներով նոյն պէս մեղքի մէջ յառաջանալու ըլլաք նէ :

Թմէ որ տղայ մը ուրիշ տեսակ զանաղան բաներու մէջ իր հօրը կամ մօրը դէմ շարունակ անհնաղանդ գտնըլի , բայց իր սովորած մէկ մասնաւոր բանին մէջ ըրած անհնաղան դութենէն ալ ետ կենայ նէ , անկէց չերևար ան տղին նոյն մասնաւոր բա-

Նին համար ըրած յանցանքին վրայ  
Ճշմարտապես օղջում ունենալուն  
փորձը :

Ասկէց 'ի զատ ,քանի որ դուք ալ  
էվելի կրմեցնաք ,ձեր յօժարութիւն  
ու մէկքանի բաներուն վրայ կը փոխ-  
վի : Օքրօրինակ ,հիմայ Երմոգին  
շատ դժարը կուգայ իր խաղալիկները  
ձգելը : Յժէ որ ես մէկ պատճառով մը  
արդիւմ անիկա որ չի խաղայ անոնց  
հետը նէ ,ինքը աս բանը պիտի հա-  
մարի մէկ խիստ պատռելը մը . և կը  
վախնամ որ էվելօք պիտի գրգռի ան  
իմ պատռերս կոտրելու :

Բայց սակայն թէ որ մենք երկար  
կեանք ունենալու ըլլանք մինչեւ որ  
ինքը տասնըութը տարվան րլայ ,և  
ալարդիւմ իրեն որ ան խաղալիկնե-  
րուն հետ չի խաղայ ,անառեն ամե-  
նեին իր անհնաղանդ դտնըվելուն վր-  
տանգ մը ըրլար . ինչու որ ալ իր  
սիրտը յօժարութիւն չունի ան բա-  
ներուն վրայ :

Գանք որ՝ տասնըութը տարվան  
պատանիներն ալ ուրիշ անանկ բա-  
ներ ունին, որ այնչափ կըսիրեն՝ և  
կըբաղձան անոնց, որչափ որ Երմոդ  
հիմայ կըսիրէ իր խաղալիկները . և  
դուցէ անատեն Երմոդ ալնոյն բանե-  
րը պիտի սիրէ էվելօք, անանկ որ իր  
մօրը հրաման ըրած ատենը որ մէկդի  
գձէ անոնք, դժուար բան մը պիտի  
ըլլայ ան իրեն, և ներսիդիէն պիտի  
յորդորվի ինձի անհնաղանդ ըլլալու :

Ուստի արդաքս, պէտք է որ մեծ  
հոդ ունենաք, որպէս զի՞ ատեն մը  
ձեզի մեղք գործել տըւող մէկ բանի  
մը փափաքը երբոր կորաընցունելու  
կըլլաք, և կընայիք որ ան բանը ձեր  
կամքովը մէկդի ձգելու պատրաստ  
էք, չըլլայ թէ ան ժամանակը ներ-  
սիդինուղ խորհիք որ՝ դուք ալ ճշմար-  
տապէս օդջումը ըրիք ան ձեր դոր-  
ծած յանցանքին վրայ : Քանզի առ  
կերպ դիպուածի մէջ շատ մարդիկ  
որ երբ ծերութեան մէջ կիյնան :

կամ իրենց վիճակին ու կացութեան  
մէջ մէկ փոփոխութիւն մը ոք կըլլայ ,  
ինքիրեննուն կըխաբվին այսպէս կար-  
ծելով թէ իրենք ան իրենց առջև ա-  
տենվան գործած մեղքին յօժարու-  
թիւնը հիմայ կորսընցունելովնին՝ ալ  
ապաշխարեցին ան մեղքին վրայ , բայց  
անանկ չէ :

**ՄԵ**ծցած մարդիկները շատ անզամ  
իրենց փափաքած բաները կըփոխ-  
փըխեն այնչափ՝ որչափ որ տղաքը կը-  
նեն , զանազան արտաքին պատճառ-  
ներու համար :

**ՄԷ**կ մարդ մը՝ որ հիւանդութենէն  
իր սենեակին մէջ գոցված ըլլայ , և  
զիտնայ որ ինքը չի կընար տունէն  
դուրս ելլալ , գուցէ պիտի խորհի որ՝  
ինքը ըոլորովին մէկդի՛ ձգեց ան իր  
բաղձանքները Կիրակի օր գինետուն-  
ները երթալու , կամ սրճարանները  
նօտելով նարտ խաղալու , և ուրիշ  
մարմնաւոր ղըւարձութիւններ ընե-  
լու : Գուցէ նաև պիտի խորհի թէ ,

ինքը Ճշմարիտ տրտումութիւն կամ  
զեղջ ունի անգամ մը աս բաները ը-  
նելուն համար ան Տէրունական Առւրբ  
օրերը :

Բայց թող նայինք իր առողջու-  
թիւնը նորէն վրան գայ . անատեն պի-  
տի տեսնըլի՞ թէ ան իր ըրած տրտ-  
մութիւնը Ճշմարիտ է մի թէ չէ : Ես-  
կէց 'ի զատ ինտոր կըհամարձակի ա-  
սանկ խորհիլ թէ ինքը Ճշմարիտ  
օդջում րրած է , երբոր ան ատենն  
ալ իր հիւանդ եղած ժամանակը նը-  
տած սենեակին մէջը բանը դործը  
նարտ խաղալ ըլլայ նէ կիրակի օրը ,  
որ ան սուրբ օրը էվելօք արժան է  
Եստուծոյ օրէնքներուն վրայով խօ-  
սիլ , ու անոր Առւրբ Պիւրը կար-  
դալ :

Ամենևին մի՛ մոռնաք տըղաքս , որ  
եթէ մէկ մեղքի մը վրայ Ճշմարտա-  
պէս օդջում ընելու ըլլաքնէ , նոյն  
պէս բոլոր մեղքերուն վրայ օդջում  
պիտի ընէք : Եւ որ եթէ մէկ մեղք մը

մէկ դի ձգեք, ու բոլոր մեղքերը մէկ  
գի ձգելու համար՝ և Եստուծոյ ձեզ  
մէ պահանջած բոլոր բաները ընելու  
համար ջանք մը ու խնդրուածք մը  
ընէք նէ, ալ ան մէկ մեղքը մէկ դի  
ձգելնիդ Օղջում ունեցած ըլլալնիդ  
չի ցուցըներ :

**Աս իմ ստորագրած զղջումիս**  
կերպը մէկ սուտ տեսակ զղջում մըն  
է, որն որ թէ մեծերուն և թէ տղոցը  
վրայ շատ կայ . կըսուսամ որ աս իմ ը  
սածս միտքերնիդ պահելու պիտի տշ  
խառիք :

Գրեգոր . Ամայր, ատեն ատեն ես  
յանցանք ընելէս ետքը՝ ինքը զինքիս  
վրայ շատ տհաճութիւն կունենամ :  
Աըխորհիմ ինքիրէնս թէ ես ինչ յիւ  
մար ու չար տղայ մը եղած եմ : Եւ աս  
նորհուրդը իմ վրաս՝ թշուառութիւն  
լգալ կուտայ Ճիշտ այնպէս՝ ինչպէս  
որ հրամանքիդ իմ վրայովս տհաճու-  
թիւն ունեցած ատենը ես թշուառու-  
թիւն կըզգամ նէ :

Անցք · Տըղաս՝ ատիկա խղճմտանքին  
ինչ ըլլալը կըցուցընէ : Ես կերպ  
զգացումները կըսվին Ենձնանախաւ  
տինք : Խղճմտանքնիդ ձեղի տեսնալ  
ու զգալ կուտայ ձեր յանցանքը , և  
անոր համար գուք ինքը զինքնինքնիդ կը-  
նախատէք նոյն կերպով՝ որպէս թէ  
մէկ ուրիշ մարդ մը ձեր յանցանքին  
տեղեկացած ըլլալով ան յանդիմա-  
նութիւնը կընէկոր :

Դրէժոր · Ետ Ճշմարիտ Օղջում է  
մի :

Անցք · Ետ ամէն անտեղ կըզմնըվե  
ուր որ Ճշմարիտ Օղջում կայ : Բայց  
ատ կերպ զգացում կընայ ըլլալ ան-  
տեղ՝ ուրտեղ որ Ճշմարիտ Օղջումի  
պէս բան մըն ալ չե կայ :

Ամէն մարդ՝ որ մեղքի մէջ զօրա-  
ցած չէ , առ անձնանախատինքը խո-  
րունկ կերպով մը կըզգայ՝ երբոր իր  
խղճմտանքին արգիլած բանը ընելու  
կըլլայնէ :

Ետ անձնանախատինքը արժան է

որ զերենք ճշմարիտ օղջման տանի :  
 Ալովհեաւ առ կըցուցընէ թէ մեղըը  
 ինչ մէկ սոսկալի ախտ մըն է , որ ին  
 քիրմէն մեղաւորը ասանկի թշուաւա  
 կան կընէկոր՝ ինքը ինքըդինքին տան  
 ջողը ըլլալովը : Ետ կըցուցընէ թէ  
 անոնք որ առանց օղջումի կըմեռ  
 նին , և յուսահատութեան աշխարհը  
 կերթան , իրենց քաշած չարչարանք  
 ներուն խխտ մեծ մասը իրենք ինքը  
 զինքներնուն վրայ պիտի բերեն : Են  
 կըցուցընէ թէ ինտո՛ր սուրբ՝ արդար  
 ու բարի է Եստուծոյ օրէնքը , որ մե  
 ղաւորները կըդատապարտէ : Վանզի  
 առ օրէնքը անո՞ր համար եղած է որ  
 աղէկին ու գէշին մէջը մէկ էական ու  
 մեծ տարբերութիւն մը կայ : Եւ առ  
 աղէկին ու գէշին մէջը եղած տարբե  
 րութիւնը մեղաւորին իրեն իսղճմտան  
 քը կիմանայ ու կըդպայ : Են անձնա  
 նախատինքը կըցուցընէ թէ ինտո՛ր  
 արժան է մեղաւորին որ մեղքէ ազատ  
 ըլլալ ցանկայ , որ ինքը կարենայ նու

ըէն Աստուծոյ շնորհքին ու բարեկա-  
մութեան մէջը դրվիլ : Քանզի թէ  
որ ինքը իր յանցանքին մէջը այսչափ  
գէշութիւն տեսնալու ըլլայ , որ ան  
ինքը գինքը նախատէ և իր ըրածին  
վրայ ամը կուվթիւն մը դպայ , և իր  
աչքին առջել ինքը գինքը անարդ սե-  
պէ նէ , հապա Աստուծօն ինչ պիտի  
խորհի արդեօք իր վրան : Ի՞նչպէս  
պիտի երևայ ինքը անանկ մէկ կա-  
կի մը առջել , որն որ կատարե-  
լապէս մաքուր ու սուրբ է , և որ՝ ա-  
նիկա միայն անհնարին ատելութեամբ  
մը կընայի մեղքին վրայ :

Գանք որ՝ աս անձնանախատինքը  
թէպէտ այնչափ լեզի ու վշտալի ալ-  
ըլլայ մարդուս վրայ , սակայն կընայ  
ըլլալ որ անորհետ ճշմարիտ օղջում  
ըլլայ երբեմն մարդուս սրտին մէջը :

Օոր օրինակ խակարիովտացի Հու-  
դա՝ ան չար ու ապերախտ աշակեր-  
տը , որ Քրիստոս մատնեց , ասանկ  
անձնանախատինք մը ունեցած պիտի

ըլլայ մէկ շատ բարձր աստիճանի մը  
 մէջ : Քանզի իր գործքը ցուցուց որ  
 ասանկ անձնանախատինք մը ունե-  
 ցաւ . որովհետեւ երբոր անիկա տե-  
 սաւ իր Տէրոջը ու Ա արդապետին ա-  
 նարժան մատնութեան վախճանը , որ  
 ան Քրիստոսը մահուան դատապար-  
 տեց , անատեն ինքիրէնը զդ ջաց :  
 Ինքը ներսիդին իմացաւ որ իր ըրածը  
 շատ գէշ գործ էր . ինքը աս բանին  
 համար տրտում էր , և կուղէր չե-  
 մատնած ըլլար Քրիստոսը : Բայց ա-  
 նիկա մէկ ձշմարիտ օղջում մը չէր :  
 Քանզի թէ որ ժամանակ ունենայի ,  
 զիւրութեամբ պիտի ցուցընէի ձեզի  
 թէ Առուրբ Գիրքին մէջ ելկու տեսակ  
 օղջումի վրայ խօսք կայ :

Աէկը հուդային ունեցածին պէս  
 է , որ իր ներսիդին մէկ աղէկ դառնա-  
 լու փոփոխութիւն մը չեղաւ : Էնիկա  
 տրտութիւն քաշեց ըրածին վրայ  
 միայն անոր համար որ ինքը ան ըրա-  
 ծէն ամօթ ու նախատինք դպաց իր

ներսիդին, և սոսկաց Աստուծոյ արդ  
դար սրդողվութենէն անոր դէմ : Եւ  
չէ թէ որ ինքը ըրած մեղքը իրապէս  
ատեց՝ ան մեղքին բուն ինքիրմէ ու  
նեցած դէշութիւնը իմանալով : Եւ չէ  
թէ որ ինքը Աստուած սիրեց, ու որ  
անոր պատուէլներուն հնազանդիւ  
ռողեց :

Միւս տեսակ զղջումը՝ որուն համար Աստուածաշունչին մէջը խօսվածէ,  
անիկա է՝ որն որ ետքը ձեզի պիտի  
բացատրէմ. բայց հիմայ առջի տեսակին վրոյ քիչ մըն ալպիտի խօսիմ  
Ըուղային օրինակովը :

Յուղան նորէն ան երսուն կտոր  
արծաթը բէրաւ քահանայապէտներուն ուժովովուրդին գլխաւորներուն,  
ու ըստ, Աեղայ՝ որ ես անմեղարունը մատնեցի : Ենոք ան արծաթը ձգեց տաճարին մէջը,  
ատիկա դուն գիտես : Ալինք ան արծաթը ձգեց տաճարին մէջը,  
ու ելաւ զնաց ինքը զինքինքը կախեց :

Ո՞հ աս ինչ մէկ զարմանալի օրիւ-

Նակ մըն է ինքը զինքը նախատելու  
մեղքին պատճառաւը :

Բայց ի՞նչ օգուտ, տակաւին ճշմա-  
րիտ օդում մը չի կար ան անձնա-  
նախատինքին հետ կապված : Եթէ  
ըլլար նէ՞ Յուղա ան իր ըրածէն մէկ  
շատ տարբեր գործ մը պիտի ընէր :  
Իրեն պէտքը չէր որ Աստուծոյ դրած  
պատուերներուն մէկը յիմարաբար  
քակելու վազեր երթար՝ ինքը զինքինքը  
մեռցունելովը : Հապա պէտք էր ապ-  
րիլուզել, որ կարենար իր անձին խո-  
նարհութիւնը ցուցընել Աստուծոյ ու  
իր ընկերներուն առջեւը օդումը  
նելովը . և որ եթէ կարելի էր, մէկ  
կերպով մը կընար ան Քրիստոսի  
դէմ ու անոր թագաւորութեանը դէմ  
ըրած վնասին տեղը Քրիստոնէական  
կեանքով և ան Փրկիչին աւետարանը  
քարոզելով անոր անունը փառաւո-  
րել :

Հիմայ տըղաքս մեծ վտանգ կայ,  
որ դուք սխալ կըկարծէք թէ ան

անձնանախատինքը՝ որուն վրոյ որ  
մենք խօսեցանք, Ճշմարիտ օղջում  
է :

Ան անձնանախատինքը մեկ վշտա-  
գին զգացում մըն է, որ դուք անով  
թշուառութիւն կըզգաք : Եւ դուցէ  
դուք պիտի խորհիք թէ առանկ թըշ-  
ուառութիւններ քաշելով առաքինի  
տղաք կըլլաք : Կուցէ նաև աս ալ  
միտքելնուղ կանցունէք, որ ասիկա  
մեղքի համար պատիժ քաշելու մեկ  
տեսակ մըն է, որուն համբերելով  
մեղքը կաւըրվի ու կըթողվի :

Քայց մի՛ մունաք, որ աս անձնա-  
նախատինքը մինակ ինքիրենը Ճշմա-  
րիտ օղջում չի կրնար ըլլալ : Աւրիշ  
խորհուրդներ ու զգացումներ ալ  
հարկաւոր են : Աս բանին մեջ չըլ-  
լայ որ խարվիք դուք . աղէկ նայեցէք  
ան հուղային օրինակին, որ ինքը իր  
միտքին մէջը զօրաւոր կերպով սաս-  
տիկ անձնանախատինք մը ունենալո-  
վը Ճշմարիտ օղջում մը չունէր :

# Պատմութեաւ քառ

Առանց ճշնդրիք Օպլան Աղջիկն համար հա-  
պուցած մը իւնայ ըլքու, ու ներում խնդ-  
րակնեւ : Համաստօդ յէշտափական մը առաջի  
խօսիչուն ախըլին :

Անյը Ակոքելնուդ պիտի անցու  
նէք տըղաքս, որ սա նիւթը՝ որուն  
վրայ որ մենք կապվեցանք, երկան  
քարտկ բան մը եղաւ : Ըայց ես կը-  
յուսամ որ ատիկա ձեզի չի պիտի  
ձանձրացունէ :

Գուցէ ալ մէյմալ չի պիտի կը ը-  
նամ միջոց ունենալ անիկա ձեզի կա-  
տարեալ բացատրելու քանզի կեան-  
քիս վրայով ստոյգ մը չեմ գիտել՝ որ  
չափ պիտի ապրիմ : Եւ հիմայ ես ին-  
քիրմէս կըղգամթէ իմ ձեր վրայ ու-  
նեցած պարտաւորւթիւններէս ա-  
մէնէն հարկաւորը աս է, որ ես ձեզի  
ցուցընեմթէ ինտոք կրնաք պուք Յիւ-

սուս Փրկիչին հետ յաւիտենական  
բարեկամութիւն մը ունենալ :

Ուստի միայն մէկ ճամբայ մը կայ,  
որով դուք կընաք աս բարեկամութիւն  
ուստանալ : Պէտք է որ անոր երա  
թաք՝ զղջացող ու հաւատացեալ  
մեղաւորներու պէս :

Ուրեմն ո՞րչափ հարկաւոր բան է,  
որ զուք հասկընաք թէ ի՞նչ է ճշմաւ  
ըիտ օղջումը . որ անիկա ձեզի կաւ  
տարելապէս տղաթղաթանելու պիտի  
ջանամ :

Եղիսա , Երմոգը ինծի զըռւցեց  
որ՝ զուն քուկին գեղեցիկ գիրքերէդ  
մէկը իրեն տըւեր ես՝ երէկվան օրը  
խիստ բարկացած ատենդ անոր պղտի  
կառքը կոտրելուդ մէկ հատուցում մը  
ընելու համար :

Եղէսա . Ետքէն շատ տրտմեցայ ես՝  
որ իրեն բարկացայ ու կոտրեցի անոր  
կառքը : Ես իմ սրտիս յօժարութիւն  
ովք տըւի ան զիրքը իրեն . և իրմէն  
ինդրեցի որ՝ ինծի ներում շնորհէ :  
Ես ալ զըռւցեց մի՝ մայր :

Անյը · Ե՞ր՞ զլուցեց · բայց միտքը բեր անդիկս , որ ուրիշ բան է մեղքի համար վճարք մը ընել՝ ու անոր համար ներում խնդրել . և բոլորովին ուրիշ բան է՝ որ դուն քու ըրած յանցանքիդ վրայ ճշմարտապէս տրտմութիւն քաշես , և ան քաշած տրտմութիւնդ ալ ճշմարիտ պատճառներէ յառաջ եկած ըլլայ :

Ե՞ր՞ բայց մայր՝ թէ որ ես աղէկ բան մը ընեմնէ , ինչու համար այնչափ ինքը զինքս պիտի հողնեցունեմ՝ որ գտնամ թէ ո՛ր բաններն են իմ ըրած գործիս շարժառիթները :

Անյը · Ե՞նոր համար որ՝ աղէկ բան մը ըրած դուն չես կընար ըլլալ , թէ որ քու ըրած բանիդ պատճառները գէշ կերպով են նէ :

Թէ որ դուն ան յանցանքիդ համար՝ որ բարկութիւնով քու եղքօրդ կառքը կոտրեցիր , տրտմութիւն քաշելու ըլլաս միայն ինձմէ վախնալուդ համար որ ես քեզի պատիժ կուտամ ,

ան քու պատճառդ ա՛լ բոլորովին  
անձնասիրութիւնը եղած կը լլայ : Առ  
կերպ տրտմութիւնը չի ցուցըներ՝ որ  
քու ներախղիդ մէկ աղէկի գառնաւ  
փոխվիլ մը պիտի ըլլայ, կամ չի ցու  
ցընէր որ դուն մէյմաէ նոյնպէս չի  
պիտի բարկանաս՝ և յանցանք գոր  
ծես, թէ որ դուն միաքէդ անցունես՝  
որ պիտի կրնաս անանեկ բան մը ընել,  
ու աղաս ըլլալ ան յանցանքին վրա  
յովը տեղեկութիւն ունենալէս :

Նմանապէս թէ թր դուն ան դիրքը  
տաս, ու անկէց ներում խնողքես միայն  
անոր համար՝ որ զգաս թէ դուն անոր  
կառքը կոտրելուդ համար հասուցում  
մը ըրած եղար, անպատեն քու տըրտ  
մութեան պատճառդ անձնասիրու  
թիւնը եղած կը լլայ բոլորովին : Դուն  
խորհիս որ՝ աս ճամբով պիտի կրնաս  
խալքահիլ խղճմանքիդ յանդիմանու  
թենէն, և որ՝ քու ըրած յանցանքը  
բոլորովին պիտի մուցըլվի, և ա՛լ  
քեզ չի պիտի տանջէ, որովհետեւ դուն

անոր անանկ ընծայ մը տըւիր , և ի ը  
բաւցընէ քու ըրած վնասէդ էվել մեծ  
բարերարութիւն մը ըրիր իրեն :

Բոլոր աս բաներէն ետքը , դուն  
խորհիս թէ քուկին ատանկ մէկ վը  
ճարք մը ընելդ և իրմէն ներում խնդը  
րելդ ինծի գովել պիտի տայ քեղ , որ  
քեզի աղէկ աղջիկ կանչեմ , ու բոլո  
րովին ես մոռնամ ան ամէն եղած յան  
ցանքները :

Եւ ասանկով դուն ինտոր որ քու  
կին խղճմտանքիդ դատախաղութէնէն  
խալրսեցար նէ , պիտի խալրսիս իմ  
յանդիմանութէնէս ու քեզի ետքի  
ժամանակը աղէկ բաներ ընելու հա  
մար տալու խրատէս :

Հիմայ աղջիկս թէ ոք ասոնք են  
պատճառները , որ քեզի տալ տըւին  
ան գիրքը քու եղքօրդ ու իրմէն նե  
րում խնդրել նէ , զիտցած եղիր ոք  
քու միտքիդ ու սրտիդ մէջը Ճշմարիտ  
օղջման խորհուրդներ չի կայ ամեն  
նեկին :

Ահա զաւկընելս , ուրիշ դիպու-  
ածներու մէջ աս տեսակ անձնասիւ-  
րութեան պատճառները գուցէ ձեզի  
Ճամբայ պիտի բանան , որ ձեր ըրած  
յանցանքին համար վճարք մը ընէք ,  
և Յստուծմէ ալ ներում խնդրել պի-  
տի համարձակիք՝ մեղքերնուդ վրայ  
ամենեին ճշմարիտ օղջում չունե-  
նալով :

Գուցէ կրխորհիք որ ասանկ վճարք  
ընելովնիդ , կամ թէ ուրիշներուն  
մարդասիրութեան Ճամբով մէկ ա-  
ղէկ բան մը ընելովնիդ , կամ ձեր  
արտաքին արարողութիւնովը Յստու-  
ծոյ քանի մը պատուէրներուն հնա-  
զանդ ըլլալովնիդ , կրլայ որ Յստու-  
ծոյ ձեր վրայ ունեցած սրդողկութիւ-  
նը պիտի քիչնայ , և նոյնպէս ձեզի  
տալուն պատիմը պիտի քիչնայ :

Գուցէ կրխորհիք ալ , որ աս  
Ճամբով Յստուծոյ ցուցըցած անպա-  
տութիւններնուդ և ըրած անհնա-  
զանդութիւններնուդ համար կընաք

վճարք մը ընել , և իրեն համար  
քիչ մը բան ընծայելով՝ որն որ ձեր  
աչքին շատ կերեայ , կամ ձեր սիրած  
մէկ սովորութիւնը մէկդի ձգելով ,  
կամ անանկ բան մը ընելով , որ ձեր  
առջին դժուարութեամբ ըլլըլվելու  
բան կերեայ՝ ու մեծ աշխատանքի  
մէջ ձեզ ձգել կուտայ նէ , կընաք  
ընել իրեն ձեր ըրած անիրաւութե  
նէն էվել մէկ աղէկութիւն մը :

Գուցէ կըխորհիք , որ աս կերպով  
ձեր խղճմտանքին մէջ դիւրութիւն  
մը կընաք զգալ , և անկէ ետեւ ինքը  
զինքնիդ նեղութեան մէջ չէք խօթեր  
ձեր մեղանչական գործքերուն համար։  
Բայց Աստուծոյ ուղած Օղջումը  
ասիկա չէ :

Խել մը մարդիկներ աս կերպը  
Օղջում է ըսին : Եւ անոնք մինչեւ  
անդամայսչափ խորհեցան , որ ամեւ  
նէն խիստ դժուարին ու ճանձրալի եւ  
ղած բանը ընելովնին , կամ իրենց  
անձերնուն վրայ նեղութիւն ու վիշտ

կրելովնին , կարենան մէկ հատուցում մը ընել Աստուծոյ անոր օրէնքին անհնազանդ զտնը վելնուն համար : Անոնք մինչև անգամ խորհեցան որ աս Ճամբով կրնան Աստուծոյ շնորհքը ստանալ , ան ալ իրենց արժանաւո՞ր ըլլալովը :

Հիմայ զաւկը կը է որ դուք մինչեւ հիմայ աս կերպ խորհուրդներ ունեցած չեք . բայց քանի որ մեծնալու վրայ էք , էվելի հաւանական է՝ որ ասանկ խորհուրդներ ու զդացումներ որոնք որ ես ահա ստուրագրեցի , պիտի ունենաք ներսիդինիդինիդ :

Աս կերպ խորհուրդները ծուռ միտքով Ճշմարիտ Օղջումի տեղ առնելնուդ համար մեծ վտանգի մէջ պիտի ըլլաք :

Իրաւցընէ դուք հիմայ իմ կառավարութեան վրայովս և ձեր տանը մէջ իրարուհետ կենցաղավարութեանը վրայով քանի մը ասանկ խորհուրդ-

Ներու դկացումներ ունեցաք դուք :  
 Արվախնամ որ աս կերպ խորհուրդ  
 մը Խղիսան իր ներախին ունեցաւ .  
 քանզի յայտնի կերևայ ան պատճառ  
 ներէն , որոնց մով որ ինքը յորդոր  
 վեցաւ իր եղքօրը դէմ ըրած յան  
 ցանքին համար վճարք մը ընելու և  
 անկեց թողութիւն խնդրելու :

Հիմայ տըլլաքս պէտք է որ դուք ան  
 պատճառներուն նայիք , որոնք որ  
 ձեղ կը որդորեն մէկ հատուցում մը  
 ընելու , և թողութիւն խնդրելու թէ  
 ձեր ընկերներէն և թէ բատուծմէ :

Թէ որ ան պատճառները աղէկ են  
 նէ , անոնց սկիզբը Աէրը պիտի ըլլոյ :  
 Աւ անատեն դուք Աէր պիտի ունենաք  
 և՛ չստուծոյ վրայ , և՛ ուրիշներուն  
 վրայ : Պիտի ուզէք բատուծոյ հան  
 զանդիլ՝ անոր այնչափ խմաստուն ու  
 արդար՝ սուրբ և բարի ըլլալուն հա  
 մար : Պիտի ուզէք ուրիշներուն աղէ  
 կութիւն ընել . որ ասով կարենաք  
 նմանիլ բատուծոյ , որ ինքը կըցանկայ

իր ստեղծուածները երջանիկ ընել :  
 Թէ որ դուք Աստուծոյ դէմ մեղք  
 գործած էք՝ իրեն օրէնքներուն մէկը  
 կոտրելով, կամ ուրիշներուն անիրա-  
 ւութիւն մը ընելով նէ ; ան Աէրը՝ ո-  
 րուն վրայ որ ես հիմայ խօսեցայ, ձե-  
 զի ճամբայ պիտի բանայ ան բրածնուգ  
 վրայ դղջալու, և ան զդղումը յայտ-  
 նի ցուցընելու աս կերպելով . այսին-  
 քըն՝ Աստուծմէ և ձեր ընկերներէն  
 ալ թողութիւն խնդրելով, և ձեր  
 կարողութեանը չափ հատուցում մը  
 ընելով : Եւ աս ըսածս կըցուցընէ  
 թէ՝ ինտոք հարկաւոր է որ ձեր սիրու-  
 շողւով Արբով նորոգվի :

Թէ որ աս կերպ Աստուծոյ ու մար-  
 դոց վրայ սիրոյ զգացում մը չունենաք  
 նէ, ան ամէն բաները՝ որ դուք մեղքե  
 համար մէկ վճարք մը ընելու ճամբո-  
 վը կընէքնէ, անոնք ճշմարիտ Օլոլ-  
 ջումին մասունքը չեն :

Ի՞նչ և իցէ ձեր բարեգործութիւն  
 ըսած բաները թէ որ յառաջ չի դան

աս կերպ սիրոյ նէ՞ անոնք ճշմարիտ  
օղջումի նշաններ չեն :

Ասեցէք ինչ կըսէ Պատղոս առաջ  
քեալ աս նիւթին վրայով իր կորըն  
թացիներուն խրկած առջի թուղթին  
ժդ զլեսուն մէջը . “ Խէ որ իմ բոլոր  
ունեցածս աղքատներուն կերպունեմ ,  
ու թէ որ իմ մարմինս կրակի տամ ,  
ու Աէր որ չունենամ (կամ Եստուծոյ  
վրայ կամ մարդոց վրայ) նէ , ան ին  
ծի օգուտ մը չընէր ” :

Ուստի պէտք է, որ ձեր սիրուը ու-  
ղւով Արբով նորոգիլի որ դուք աս  
սէրը ունենաք :

Գրէժոր . Ապայլը Բըրք պիտի ղըուցեա  
մեղի թէ ո՞րն է ճշմարիտ օղջումը :

Ապայլ . Հիմայ պատրաստ եմ ատի-  
կա ընելու . և կըսուսամ որ ատիկա  
շատ աղէկ կերպով քիչ մը ետքը պի-  
տի բացատրեմ ձեղի , որ մինչև այս  
չափ ժամանակ ես ձեղի ցուցըցի թէ  
ո՞ր կերպը ճշմարիտ օղջում չէ , և  
ո՞ր բաներն են անոնք որոնք մեղքի

վրայ առանց Ճշմարիտ Օդջում ընելու  
կրնայ մարդս խորհիւ ու զգալ եք  
ներսիդին :

Աս իրիկուն մեր խօսակցութիւնը  
վերջ ընելէն առաջ, նորէն կարծը  
կեկ մը անցած քանի մը երիկունները  
ձեզի ըրած բացառութիւններուն  
վրայէն պէտք է որ անոցնիմ. որ ան օ  
գուտ պիտի ընէ ձեր միտքը արթըն  
ցունելու, ու ձեղ պատրաստ ընելու,  
որ ալ էվելօք աղէկի կրնաք համկը  
նալ ինչ որ տակաւին ես ձեզի պիտի  
սորվեցունեմնէ :

ա. Թաէ որ ան արտմութիւնը՝ որ  
դուք ձեր ներսիդին կունենաք Վա  
տուծոյ արդիլած քանը ընելնուդ հա  
մար, կամ անոր պատուիրած բանը  
չընելնաւդ համար, միայն ան պատ  
ճառաւ եղած ըլլայ՝ որ դուք վախնաք  
Վատուծոյ իր օրէնքները կոտրողնե  
րուն դէմ խոսաւոցած պատիժէն նէ,  
գիտցած եղիք որ անառեն դուք մեղ  
քերնուդ վրայ Ճշմարիտ Օդջում չու  
նիք ներսիդինիդ :

ը . Յեւ որ Աստուած սպառնացած  
ըլլար մէկ պատիժ մը մեղքի դէմ ,  
կամ թէ որ կարելի ըլլար ձեզի հաւ-  
տալ թէ ինքը ձեր մեղքը չի պիտի  
իմանայ , և անոր համար դուք մեղքը  
սիրելու ետևէ ըլլայիք նէ , ասկից  
կերևայ որ դուք մեղքելնուդ վրայ  
Ճշմարտապէս Օղջում չէք ըլլած :

Կ . Կընաք որ դուք մեղքերնիդ Աս-  
տուծոյ խոստովանիք և ան ընելովնիդ  
գուցէ կիմանաք ձեր յանցաւոր ըլլա-  
լը իր առջեր , և տակաւին անանկով  
սրտելնուդ մէջը Ճշմարիտ Օղջում  
չէք ունենար : Քանզի գուցէ աս բանը  
բալորովին պատիժին վախուն համար  
կընէք : Կամ գուցէ դուք յոյս տէ կու-  
նենաք որ առ ձեր խոստովանքը  
պատճառ պիտի ըլլայ , որ Աստուծոյ  
ձեր վրայ ունեցած սրդողկութիւնը  
պիտի քիչնայ , և որ անանկով իրեն  
ձեզի տալու պատիժը պիտի քիչնայ ,  
կամ գուցէ ամենելին չի պատժեր :

Ճիմայ թէ որ մեղքերնիդ Աստուծոյ

իսուսովանելու պատճառները միայն  
ասոնք են նէ , անոնցմէ չերևար որ  
դուք ան մեղքերնուղ վրայ Ճշմարտա-  
պէս օղջում ըրած ըլլաք :

Ե . Ճշմարիտ օղջումը շատ աւելի  
պիտի ըլլայ մէկ սոսկ զօրաւոր առա-  
ջաղբութենէ մը կամ դիտաւորութե-  
նէ՝ որ կընէք մեղքէ հեռու կենալու  
համար , ու գլխատուած սիրել սկըսե-  
լու և անոր հնազանդելու համար :  
Աս կերպ առաջաղբութիւնը օգուտ  
մը չի պիտի ունենայ՝ թէ որ ան յա-  
ռաջ չի դայ մէկ տրտմազգեաց սրտէ  
մը մեղքերնուղ համար , որոնք մէկ իւ-  
մաստուն սուբը՝ արդար ու բարի Աս-  
տուծոյ դէմը գործեցիք : Են առա-  
ջաղբութիւնը օգտակար չի պիտի ըլ-  
լայ՝ թէ որ գուք չըզգաք նաև մէկ ան-  
խարդախ յոյս մը հիսուս Քրիստոսի  
ձեր մի միայն Փրկէչին վրայ : Են ա-  
ռաջաղբութիւնը օգուտ մը չի պիտի  
ունենայ՝ թէ որ ձեր ինելքին զօրու-  
թիւնովը միայն եղած ըլլայնէ . հազա-

պէտք է որ առ ընելու առեննիդ Ես  
տուծմէ խնդրէք Ք. թիստոսի համար ,  
որ իր Առւլը Հոգին ձեզի տայ . որով  
կընաք զօրանալան առաջադրութիւն  
նը պահելու , և որով ձեր սրտին  
տրամադրութիւնը նորոգվի :

Ն . Գուցէ կըլլոյ որ ետ կենաք մէկ  
մասնաւոր գէշ սովորութիւն մը դու  
ծելէն Եստուծոյ գէմ , և անանկով  
խորհիք որ Ճշմարտապէս Օղջումը  
ըիք ան մեղքին վրայ : Իսյց աս չե  
կընար ըլլալ , թէ որ դուք ուրիշ կերպ  
բանելով մեղքի մէջ յառաջանալու  
ըլլաք նէ : Ետ պիտի ըլլայ միայն ձեր  
մէկ մեղքէ մը ձանձրանանիդ ու ա  
նիկա ուրիշնելուն հետ փոխելնիդ :  
Ունեղքի վրայ Օղջում ընելը թէ որ  
Ճշմարիտ է նէ , բոլոր մեղքելուն վր  
այով Օղջում ընելուն հետ պիտի  
ընկերանայ : Ունեղք մը մէկ դի  
ձղելը անոր վրայ Ճշմարտապէս զըլ  
ջալուն նշանը չէ . հաղա ան է միայն  
նշանը , որ մէկ հաստատ ջանք մը և

աղօթք մը կըլսոյ բոլոր մեղքերը մէկ  
տի ձգելու համար՝ և ամէն Եստուծոյ  
ձեղմէ ուղած բաները կատարելու հա-  
մար :

Դ. Պառք կարելի է որ զգաք նաև  
մեծ ու ցաւագին անձնանախատինք  
մը մեղքի համար՝ հուղային ըրածին  
պէս, և տակաւին անանկով ճշմար-  
տապէս ան մեղքին վրայ Օդջում չէք  
ընէք: Եստուծմէ ու ձեր ընկերներէն  
կարելի է որ ներում խնդրիք, և ու-  
րիշներուն ըրած անիրաւութիւններ-  
նուդ համար վճարք մը ընել նայիք,  
և կարելի է որ աս Ճամբով ու ան ձեր  
ըրած բարեգործութիւններովը յու-  
սաք որ՝ ձեր խղճմտանքը կըխտղաղա-  
ցունէք, և Եստուծոյ չնորհքը կըս-  
տանաք, և տակաւին ամէն աս բա-  
ները ընելովնիդ մեղքերնուդ վրայ  
ճշմարիտ Օդջում չէք ընէք:

## ԳԼՈՒԽԸ. ԺԵ:

Ճշմարես. Օդը հու կատաղ առարկե մարդուն նոր  
իւրանիւ Արքունացոյ վըսոյ նայելու , և պէնքը  
նուլը մէն սիրելուն առաջ հնապահութելուն  
այսպատճառութիւնը աւենալու . իսպանի  
պըսամատելիւն , առշըլու Արքունացոյ գեմը ըրած  
ապէսականութեանը համար . նոր իւրանիւ  
Արքունացոյ օրէնքնիւնուն նայելու . և անոնչ  
իւրանիւն համար իր յանցառուն ըլլուլ դես-  
նուլու :

Մայր . Հիմայ տըղաքս , ալ պատ-  
քաստ եմ ձեզի բացատրելու մասնա-  
ւորապէս Ճշմարիտ . Օդը ումին ո՞րն  
ըլլալը :

Աս ընելով , կուզեմ որ միտքեր-  
նիդ բերէք թէ ան ամէն մարդիկը որ  
Ճշմարտապէս Օդը ում կրնեն , ամէն  
խորհուրդները ու զգացումները Ճիշլ  
նոյն կարգով չի պիտի ունենան :

Հիմայ ձեզի պիտի ստորագրեմ շատ  
կերպ խորհուրդներ ու զգացումներ ,

որոնք իրենց մեղքերնուն վրայ ճշմարտած  
 տասպէս օդջուս ընողները պիտի ուշ  
 նենան : Ենոնք ան ամէն զգացումները  
 չեն պիտի ունենան իրենց զդ ջմանը  
 սկիզբը , համար ետքը թէ որ իրենք  
 ապրիննէն ան կերպ զգացումներներ  
 սիդինին պիտի ունենան կանուլս եւ<sup>Դ</sup>  
 ղեր՝ թէ ուշ , և օրէ օր ալ էվելի  
 զօրաւոր կերպով : Վուցէ ոմանք ան  
 զգացումներուն ու խորհուրդներուն  
 մէկ քանին իրենց մանկութեան կամ  
 սրատանեկութեան հասակին մէջ պիտի  
 ունենան . և ոմանք իրենց երես  
 տաստրդութեան կամ ծերութեան հա  
 ստկին մէջը պիտի ունենան : Եսկէց  
 'ի զատ ոմանք մէկ կարգով , և ու  
 մանք մէկ ուրիշ տարբեր կարգով մը  
 պիտի ունենան ան զգացումները ու  
 խորհուրդները : Ոմանք մարդիկ գուց  
 չէ պիտի ունենան աս խորհուրդնե  
 րուն ու զգացումներուն մէկ քանին  
 ուժիներուն ունեցածէն էվելօք շատ  
 պայծառ ու զօրաւոր կերպով :

Օ՞ր օրինակ ոմանք մարդիկ իրենց  
 մեղքերը զդ ջալու ատեննին՝ ապառւ  
 նի պատիժին վախը ուբիշներուն ու  
 նեցածէս էվելի պիտի ունենան : Այ  
 կերպ՝ անապաշխար մեռնողներուն  
 վրայ գալու Եստուծոյ ահարկու բար  
 կութենէն ու հանդերձեալ աշխար  
 հին մէջի թշուառութենէն խալլսեւ  
 լուն փափաքը կալելի է որ շատ դօ  
 սաւոր ըլլայ ոմանց վրայ՝ որոնք որ  
 Ճշմարտապէս օդջում ունին իրենց  
 մեղքերուն վրայ : Ետիկա չե ցուցը  
 նէր որ իրենց օդջումի Ճշմարիտ չէ :  
 Քանզի շատ անգամ Ճշմարիտ օրդ  
 ջումի հետ կընկերանայ, և խառնը  
 ված է ուրիշ խռհուրդներուն ու  
 զգացումներուն հետը՝ որոնք որ ես  
 քիչ մը ետքը պիտի ստորագրեմ :

Ոմանք մարդիկ ալ՝ որ ապառնի  
 պատիժին վախը քիչ մը կամ ամեւ  
 նելին որ չունին նէ, իրենց մեղքերը  
 ապաշխարելու ատեննին ան Երկին  
 քին ապառնի իրջանկութեան փա

փաքովը շատ ներգործութիւն ունին :  
 Արովչետև անոնք իմացած են՝ որ աս  
 աշխարհը զերենք երջանիկ չի կրնար  
 ընել : Եթենք լսած են Վատուծոյ ան  
 բարի ու պատուական հրաւիրանքը  
 դէպ 'ի երեն գալուն իրենց մեղացը  
 վրայ զզ ջալովնին ու Տէք ՀՅիսուս  
 Քրիստոսին հաւատալովնին : Ասած  
 ալ են իր քաջալերող խոստմունքնեւ  
 ըր, այսինքն ան ամենքը որ աս կեր  
 պով իրեն կուգան, ինքը պիտի ըն  
 դունի անոնք՝ և կատարելապէս եր  
 ջանիկ պիտի ընէ իր ներկայութեան  
 մէջը յաւիտեանս :

Եւ ահա աս բաները լսելով՝ ու ան  
 երջանկութեանը փափաքելով. Օ. ըդ  
 ջում կրնեն անոնք :

Հիմայ աս կերպ ապառնի երջոն  
 կութեանը փափաքը ամենենին չի  
 ցուցընէր՝ որ իրենց օդջումը խար  
 դախէ : Արովչետև ասիկա միշտ մեծ  
 կամ պղտի աստիճանի մը մէջ ճշմա  
 րիտ ապաշխարութեան հետ կընկեն

բանայ , ու կըխառնըլի ան ուրիշ խորհուրդներուն և զգացումներուն հետո՝ որոնք ճշմարիտ օղջումը իրենց մէջը կըպարունակեն :

Բայց ճշմարիտ օղջումը ընողին դիտաւորութիւնն ու միտքը միայն ան ապառնի թշուաւութենէն փախչելը կամ ապառնի երջանկութիւնը ստունալը չէ : Ան իր անձնական բարիքներէն տարբեր և էվելի մեծ նիւթեր ալ կան , որոնց վրայ իր սուր մտադրութիւնը և իր աւելի գօրաւոր զգացումները կարթըննան :

Անիկա Աստուծոյ վրայ կընսյի ու անոր վրայ կըխորհի մէկնո՞ր կերպով մը՝ որ ինքը բնաւ առաջուց ան կերպով չէր խորհեր : Կըխորհի թէ Աստուծուած է ան Ղակը , որ զինքը ստեղծեց , որն որ միշտ զինքը կենդանութեան մէջ սլահեց , և որ ինքն է տըմեր ամէն իր ունեցած ու վայելած բաները : Ուստի անիկա կըխորհի ու կըտեսնայ թէ Աստուծուած իրաւունք

ունի իրմէն կատարեալ սէր ու հնա-  
 զանդութիւն սլահանջելու : Կիմանայ  
 ինքիրմէն որ յանցանք գործած է ին-  
 քը Վստուծոյ վրայ սէր ու հնազան-  
 դութիւն չունենալուն համար : Կի-  
 մանայ որ աս բանը ընելովը ինքը չի  
 կընար զինքը արդարացընել : Կիմա-  
 նայ որ՝ բուն իր մեղանչականութիւնը  
 և իր կամապաշտութիւնը իրեն ճամ-  
 բայ բացեր են ան սէրը ու հնազան-  
 դութիւնը Վստուծոյ վրայ ցուցընե-  
 լէն ետ կենալու : Կրխոստովանի ին-  
 քը իր հպարտ ու կամակոր սրտին մեծ  
 յանցանքը : Ինքը անոր համար Ճըշ-  
 մարտապէս ու խորունկ կերպով տրտ-  
 մութիւն կընէ : Եւ այնպէս ինքը իր  
 կամքը կրխոնարհեցընէ Վստուծոյ  
 կամքին հնազանդելու . և աս չէ թէ  
 հնազանդութիւնը մէկ բռնութիւնով  
 մը կընէ՝ ինչպէս երբոր մէկ տղայ մը  
 իր ծնողացը կամքը պատիժին վախէն  
 կատարել կընայի նէ . հապա ինքը  
 աղատաբար կատարելապէս և ուրա-

խութեամբ կըքաղձայ ու կըջանայ աս  
 ընելու , և իր յոյսը քըթստոսի վրայ  
 կըդնէ անկէց օգնութիւն խնդրելու ,  
 որ կարող ըլլայ աս ընելու : Իր կամ  
 քը կըխոնարհի Ծատուծոյ կամքին  
 հնազանդելու ամեն բանի մէջ : Ինքը  
 կուղէ որ Ծատուած ինտոր որ կուղէ  
 նէ ընէ իրեն ղէպ՝ ի Նըկինքը երթա  
 լու ու սրբութեան վիճակին մէջ մըտ  
 նալու առաջնորդելու առենը : Ինքը  
 կըխորհի Ծատուծոյ վրայ թէ ան ո՛ր  
 չափ բարերարութիւն ըբերէ իրեն :  
 Իր առջի անցուցած կեանքին վրայ  
 կընայի , ու կըտեսնայ թէ ո՛րչափ  
 միսիթարութիւններ ու շնորհքներ՝ և  
 մասնաւոր ողորմութիւններ ընդուներ  
 է ան իր Նըկինաւոր Հօրմէն :

Ո՛րչափ ուրիշները աս իրեն եղած  
 բարութիւններէն քիչիկ մը կամ հա  
 զիւ թէ մէկ մասը առերէին : Բայց  
 ինքը անոնց առածէն տարբեր կեր  
 պով ընդունելու ան շնորհքները ար  
 ժանի չէր եղած : Իբաւցընէ ինքը կը

զարմանայ՝ որ անոնցմէ էվելի դէշ  
քաներ ընդունած չէ . ինչու որ՝ ան  
մարդիկներէն շատերը իրենց պար-  
տաւորութիւնը չէին ճանչցեր՝ ինչ-  
պէս որ ինքը իր պարտաւորութիւնը  
ճանչցեր էր ու չէր կատարեր :

Կըտեսնայ որ՝ Վստուած իր վրայ  
մէծ համբերութիւն ու երկայնմտու-  
թիւն ցուցըցեր էր , զինքը իր բոլոր  
բարութիւններէն չի զրկելով՝ որոնք  
որ ինքը անշահաւոր կերպով զոր-  
ծածէր էր , և անիկա իր մեղքերուն  
մէջը չի կորսընցունելովը :

Եւ աս ամէն բաներէն էվել ինչ  
մէծ ու զարմանալի սէր ցուցըցեր էր  
Վստուած իր վրայ և իր մեղաւոր ըն-  
կերներուն վրայ , իր մէկհատիկ սի-  
րելի Որդին խրկելով՝ խաչին վրայ  
մեռնելու համար , որպէս զի՞ ամէն  
անոր յուսացողները թողութիւն գըտ-  
նան ու փրկըլին :

Ինքը աս Փրկիչին վրայ լեր էր ,  
աս բարերար ու բարեգութ Փրկիչին

վրայ, աս մեղաւոքներուն Շաբեկամին  
ու Հոյսին վրայ, աս մահէն ու դժոխւ  
քէն խալքառղ ամենաբաւական ու ա  
մենակարող Փրկիչին վրայ : Ինքը ան  
կէց հրաւիրված էր՝ ու նորէն նորէն  
խրատված էր, որ իրեն դայ, իրեն  
հաւտայ, և իրմով անոր փրկութիւն  
բլայ, և երջանիկ բլայ հիմայ՝ ու  
մինչև յաւիրուսն :

Եւ տհա Աստուծոյ բոլոր աս բա  
լութիւններուն դէմ ինքը մեղք գոր  
ծէր էր : Վրիստոսի բոլոր աս ողոր  
մութիւններուն դէմ ինքը մեղանոչէր  
էր : Իր այս չափ յանցանքները անանիկ  
մը կրտեսնայ որ ինքը առաջ տմենիւ  
ին ան կերպով չէր տեսած : Աիմանայ  
իր վրայով թէ՝ ինքը մէկ էվելի ան  
զգամ ու առերախոր մեղաւոր մը եւ  
զած է : Աւ իր անշնորքութեանը վր  
բայ միշտ կողքայ . իր յանցանքը կը  
խոստովանի Աստուծոյ : Ո՞էկ սղտի  
տղի մը պէս կուզէ խոնարհ ու կուրած  
որառվ նորէն դաւնալ իր բարերար

Նօրը քովլը որին որ ինքը բարկացուցերէք : Վաեւ ան իր Երկնաւոր Նօրը ցուցըցած ճամբովը կըդառնայ կուգայ : Ինքը գիտէ՝ որ Եստուած զինքը ուրիշ կերպով չի պիտի ընդունի , հապա միայն թէ Տէր Յիսուս Քրիստոսին հաւատալովը , և բոլորովին յուսալով ան բաներուն վրայ՝ որոնք Քրիստոս ըրաւ նեղութիւն քաշելով մեղ Եստուծոյ հետ հաշտեցունելու համար :

Ասանկով ինքը աս Փրկիչին վրայ իր յոյսը կըդնէ , և իրեն մեղքով լեցուն ըլլալովը կըհաւատայ Եստուծոյ խոստմունքներուն որոնք Քրիստոսի ձեռքով եղած են : Եւ ինքը զինքը անոր ողորմութեանը ձղելով՝ իր տրամութիւնը ալ էվելօք խորունկ կըլւայ , խորհելով՝ որ իր մեղքերն էին որոնց համար ան Փրկիչին հարկ եղաւ չարչարանք քաշել ու մեռնիլ :

Եւ իրաւցընէ իր յանցանքը մեծ կերեայ իրեն . և շատ անարդ կերեայ

իր ըրած ապերախտութիւնը , երբոք  
ինքը կըմտածէ թէ ո՞րչափ ժամանակ  
աս Փրկիչը ինքը շարունակ մերժեր  
էր միշտ , և Վատուծոյ աս ողբրմու  
թիւնը արհամարհէր էր : Ճշմարիտ  
ինքը աս տեղ ու պատճառներ կը-  
գտնայ . Օզջում ընելու , արցունք թա-  
փէլու , հառաջանքներ ընելու :


**Ա**Ն ան ճշմարիտ ապաշխարողը  
դէպ 'ի Վատուծոյ կընայի , և անոր օ-  
րէնքին վրայ կըխորհի անանկ կեր-  
պով մը որ ինքը առաջ անանկ չէր  
խորհէր : Կըտեսնայ որ ան օրէնքնե-  
րը նոյն Վատուծոյ պէս սուրբ՝ արդար  
ու բարի են . և որ շատ վայելու ար-  
ժան է , որ Վատուծ ասանկ օրէնք-  
ներ տրւեր է . որոնք պէտք է որ բո-  
լոր իր ստեղծած արարածները պա-  
տուեն ու հնապանդին անոնց : Կը-  
տեսնայ որ Վատուծ շատ բարի է ե-  
ղեր աս օրէնքները ո՞նելովը . և որ  
եթէ ամէնքը անոնց հնապանդին նէ  
պիտի ըլլան մէկ մէկու հետ սիրով

կապված մէկ մեծ ընտանիք մը ամէնը  
 գլուխուած սիրելով ու անոր ծառա-  
 յելով, և ուրիշներն ալ սիրելով՝ ու  
 անոնց աղեկութեանը ու երջանկու-  
 թեանը վրայ ուրախանալով : Կիմա-  
 նոյ հիմայ իր վրայովը թէ ինքը առ  
 օրէնքներուն հնազանդ ըրլալովը  
 շատ կամսալաշտ ու գէշ մէկ մըն է ե-  
 ղեր : Եռաջ ինքը այնպէս կարծեր  
 էր թէ ան օրէնքները խիստ ու ծանր-  
 բաներ են, ու միշտ իր միսիթարու-  
 թեանը և բերկրութեանը հակառակ  
 են : Բայց հիմայ կիմանայ ինքը՝ որ  
 ան օրէնքները ճիշտ անանկ բաներ  
 են՝ որ իր անձին երջանկութիւնը ու  
 ըիշներուն երջանկութեանը հետ մէկ  
 տեղ հաստատելու համար, և իր եր-  
 ջանկութեանը ու խաղաղութեանը  
 ճամբուն մէջը իրեն առաջնորդելու  
 համար յարմար են : Կիմանայ որ ին-  
 քը իբաւաբար դասապարատութեան  
 տակ ինկած է առ օրէնքները կոտրե-  
 լուն համար . և կիմանայ ալ՝ որ ան

պալու թշուառութենէն խալըսելու  
յոյսը միայն զրիստոսի վրայ ապա-  
ւինելովը պիտի ըլլայ :

**Ա.** Եստուծոյ դէմիլ առջի ըրած  
անհնաղանդութեանը վրայ կողըայ ·  
և անկէ ետե իր հոգիին վրայ ջերմե-  
ռանդութիւն մը կուգայ , որով կը-  
փափաքի թէ ալ ետքի ժամանակը  
իմանայ ինքը ան ամեն Եստուծոյ իր  
մէս պահանջած բաները , և կատա-  
րէ անոնք մէկ յօժարակամու հնա-  
զանդ սրտով մը :

**Ա.** Վաղը իրիկուն տըղաքս էվե-  
լօք երկար քննութիւնով պիտի տես-  
նանք ճշմարիտ օղջումին ինչ ըլ-  
լալ :



Գ. Լ. Ա. Խ. Խ. Ժ. Բ. :

Սորտշեարողը նոր իւրական էր մեղքերուն մըսոց  
իւնայութեանոն ինչը Արտաս-ծոյ ռեհման-  
ծեր է : Խնչը զօրա-որ իւրական մեղքը իս-  
տէ . էր մեղքերը Արտաս-ծոյ իւնայութեանի :  
Խը յատացաւն վըսոյ իսովոյ ինչը ուրիշնե-  
տուն առկիւ-լիւն ընել շո-պէլուն համար :

Գրէժոր . Մայր , անցած իրիկուն  
հրամանքիդ մեղի բացատրած խօսքէն  
կերևայ որ՝ մեկ մեծ փոփոխութիւն  
մը պէտք է որ ըլլայ մեկ մարդու խոր-  
հուրդներուն ու զգացումներուն մե-  
ջը , որն որ Ճշմարտապէս կըզդ ջայ  
մեղքին վրայ :

Մայր . Այ իրաւ է տըզաս . բայց  
տակաւին էս զըուցելիք ունիմ ձեղի  
աս փոփոխութեան վրայ , ուսկից  
դուք պիտի տեսնաք որ իրաւցընէ  
շատ մեծ ու զարմանալի բան մըն է եւ  
զեր :

Ճշմարիտ ապաշխարովը անանի

պիտի խորհի իր ըրած մեղքին վրայ ,  
 որ առաջ ամենելին անանկ չէր խոր-  
 հած : Եռաջ մեղքը իրեն պղտի  
 գէշ կերեար , և ինքը անոր վրայ հա-  
 լեանցի մը կըխորհէր : Եւ գուցէ  
 ինքը ան մեղքին վրայ հարեանցի մը  
 կըխօսէր , ու ան մեղքին վրայ կըզ-  
 ւարձանար ալ մեղաւոր մարդոց սովո-  
 րութեանը պէս : Կամեթէ անգամ  
 մըն ալ սրտի մտօք խորհէր էր նէ ,  
 այնպէս չէր խորհէր որ ան մեղքը  
 սուրբ ու արդար Եստուծոյ դէմ յան-  
 ցանք մըն է , հասլա որ ան իրեն վրայ  
 պատիժ մը պիտի բերէ : Եռաջ մի-  
 այն իրեն գլխուն գալիքները ինքը  
 կըտեսնար : Տայց հիմայ ինքը մէկ  
 շատ տարբէր կերպով մը կըտեսնայ :  
 Կըտեսնայ որ ան մեղքը շատ գէշ  
 բան մըն է , և որ անոր այնչափ գէշ  
 ըլլալուն գլխաւոր պատճառը Եստու-  
 ծոյ դէմ գործըված ըլլալն է : Եմէն իր  
 մեղքերը իրեն կերեան թէ Եստուծոյ  
 դէմ գործած է . ինչպէս Դաւիթ կը-

աէ յիսուներորդ ստղմոսին մէջը ։  
 « Արնակ քու դէմդ մեղք գործեցի ովլ  
 Տէր, ու առջեղ գեշութիւններ ըրի»։  
 Քանզի ամէն ան մեղքերը Կոտուծոյ  
 վրայ և իր ընկերներուն վրայ եղած  
 սիրոյն երկու մեծ օրէնքներուն լուծ  
 ծումն են, որոնք որ Կոտուած մեղի  
 տրւաւ, և անոնց մենք ամէն առեն  
 հնագանդ ըլլալու կապված ենք։  
 Ինքը կիմանայ որ իր յանցանքը՝ ու  
 քիշներուն դէմ մեղք գործած առենը  
 կամ անոնց աղէկ ըլլալը չուղելը թէ  
 պէտ մեծ բան է, բայց պղոխ յանց  
 ցանք է։ Կոտուծոյ դէմ մեղք գործէ  
 լու իր յանցանքին հետը բաղդատեւ  
 լով։ Ինքը կըտեսնայ թէ ինչ սոսկաւ  
 լի չարիքներ պիտի ըլլային։ Թէ որ  
 ամէն արարածները իր ըրած յանց  
 ցանքին պէս Կոտուծոյ դէմ գործէին  
 նէ. և շարունակ առ կերպով յառաւ  
 ջանային նէ, և թէ անառեն Կոտու  
 ած ինտ'ը պիտի արհամարհըվի, և  
 անանկով բոլոր իր արարածներուն

մէջը անտրգութիւն ու շփոթութիւն  
 և թշուառութիւն պիտի մտնայ : Ակա  
 մանայ որ՝ որչափ ինքը մեղք գործեց  
 նէ , այնչափ ան չարիքներուն աշ-  
 խարհ մտնալ տալրւ մէկ յօժարու-  
 թիւն մը ցուցրցեր է , և անով լու-  
 տուծոյ իշխանութեանը դէմ հակա-  
 ռակ ըլլալ՝ և ուրիշներուն գէշու-  
 թիւն ընել յօժարեր է : Աս բանը  
 կինքը խորունկ տրտմութիւնով կըլե-  
 ցունէ . իր մեղքերովը լուտուծոյ դէմ  
 ըրած թշնամութեանը վրայ կողըայ :  
 Իր ըրած մեղքերուն ուրիշներուն տը-  
 ւած վնասը կողըայ : Ինքը շատ էվե-  
 լօք կըվշտանայ՝ մտմտալով որ ինքը  
 ուրիշներուն մեղք գործելու վստա-  
 հութիւն մը տըւած է իր օրինակովը .  
 և զուցէ իր միջնորդութիւնովը ա-  
 նոնց օգնելի է յաւիտենական կորըս-  
 տեան ճամբուն մէջը յառաջանա-  
 լու :

Ինքը բոլոր աս խորհուրդներովը  
 23 ա

ալ շատ կատէ մեղքը : Եւ թէ որ ան  
մեղքին դէմը խոստացած պատիժներ  
ալ չըլլային նէ , ինքը ոյսու ամենայ  
նիւ պիտի ատեր ան մեղքը չարիքնե  
րուն ամենէն գէշը սեպէլու ան :

Ալ իւնին բզուանք կուզայ իր առ  
ջի մեղքն չական ուժացումներէն ու  
զործքերէն : Յէ որ անոնց վրայ մըտ  
մուալու ըլլայ , հարկաւ պիտի ամընչ  
նոյ ու ինքը դինքը պիտի նախատէ :  
Կիմանայ թէ ինտոր մեղքը զինքը ա  
նարդ ըրաւ , ինտոր անպիտան և ան  
կէց էվել վնասակար ալ եղեր է ինքը  
Խստուծոյ արարածներուն մէջը : Ին  
տոր ինքը անարժան եղեր է առաքինի  
ու սուը եղողներուն հետ յարկու  
թիւն ունենալու :

Ինտոր արժանի եղեր է ինքը խըր  
կըվելու , որ երթայ բնակի յաւի  
տեանս իրեն պէս ապերախտ ու ա  
նարժաններուն հետը :

Ինքը ուրիշներուն վրայի եղած  
մեղքն ալ կատէ : Կըքաղձայ որ ա

նոնք ան մեղքին ազատ ըլլան : Արշան  
կայ՝ որ անանկ ժամանակ դայ, որ ա  
տեն ամենքը իր ըրածին ալէս մեղքը  
ատեն, և ան ատենը ինքը ու անոնք  
ալ ան մեղքը յաղթեն, և այնպէս  
Ծատուծոյ կամքը ըլլայ երկրի վրայ՝  
ինչպէս որ Նըկինքը կըլլայ նէ :

Ճշմարիտ ասլաշխարող մարդը չու  
զէր իր ըրած մեղքերը իր խղճման  
քին ծածկել : Անիկա կուղէ որ իրեն  
ինտոր յանցաւոր ըլլալը իմանայ :

Առաջուց իրեն կամքին շատ դէմ  
բան էր՝ որ մէկ մը իր մեղքին վրայով  
իրեն խօսք զըուցելու ըլլար : Իսայց  
հիմայ պատրաստ է՝ չէ թէ միայն լր  
սել իր պղտըտիկ մեղքը Ծատուծոյ ու  
իր ընկերներուն դէմը ըրած, հապա  
նաւ մեծ մեծ մեղքերն ալ : Ինքը հիւ  
մայ հեղութեայմը կընդունի խրատ ու  
յանդիմանութիւն : Կըբաղձայ տես  
նալ ու զգալ իր ամէն մեղքերուն ինչ  
ըլլալը, և աղօթք կընէ Ծատուծոյ՝ որ  
զինքը կարողացանէ ան մեղքերը իւ

մանալու : Ենկէ ետէ իր ըրած բոլոր  
մեղքերը Եստուծոյ խոստովանանք  
կըլլայ . և աս խոստովանանքը կընէ  
մէկ բան մը ետ չի ձգելով : Ես խոս  
տովանանքը ինքը կընէ մէկ կտրած  
ու զղջացած սրտով մը . խորանկ խո  
նարհութիւնով ու տրտմութիւնով կը  
նէ աս բանը : Ինքը զիտէ թէ աս իր  
խոստովանանքը ինտոն մէկ մաքուր ու  
սուրբ էակի մը առջեւ կընէկոր . և աս  
ընէլովը իր սրախն մէջը կիման այ թէ  
պէտք է իրեն որ բոլորովին ինքը զին  
քը Եստուծոյ շնորհքին ձգէ Քրիստո  
սի ձեռքովը , որ ներողութեան ու  
դժութեան հանգըլպի :

**Ճ**շմարիտ ապաշխարողը նոր կեր  
պով կընայի ուրիշները երջանիկ ը  
նելու :

**Ա**ռաջ ինքը իր զբլծքովը զուցէ  
բարի ու հաճոյ էր . զուցէ Ճշմարիտ  
ու արդար էր . զուցէ իր բարեկամ  
ները ու իր ծանօթները զինքը շատ  
սիրեցին : Գուցէ անսնք իր վրայով

անանկ կըմտածէին թէ ինքը կըցան  
կայ ու կըջանայ իրենց մխիթարու  
թեանը ու վայելչութեանը օդնութիւն  
ընէլու :

Բայց հիմայ ինքը կըտեսայ թէ  
ինտոր քիչ հոգ ըրածէ անոնց ճշմա  
րիտ երջանկութեանը վրայ : Իրաւ  
ցընէ ինքը կիմանայ որ ամենեին հոգ  
չէր ըրեր ան բաները ընելու . որով  
հետեւ ինքը միայն աս աշխարհիս վր  
րայ անոնց երջանիկ ըլլալը կըխոր  
հէր , և ոչ ամենեին հանդերձեալ  
աշխարհին մէջ սուրբ ու երջանիկ  
ըլլալնուն վրայ :

Եսկէց ՚ի զատ՝ առաջ ինքը բոլո  
րովին գրեթէ մինակ իր բարեկամնե  
րուն մխիթարութիւնն ու վայելչու  
թիւնը հոգաց . և աս ալ անոր հա  
մար՝ որ անոնց հետ իր երջանկու  
թիւնն ալ կապված էր էվելօք : Եւ  
ամենեին ինքը չէր խորհեր՝ որ իր ու  
նեցածներէն շատը մէկ դի ձգէ և ին  
քը դինքը մէկ մէծկակ դժուառութեան

մը մէջ դնէ , որով կընայ բարերաց  
ըութիւն մը ընել իրեն բարեկամ ու  
ճանչւոր չեղողներուն :

Ուստի հիմայ ինքը կըտեմնայ թէ  
ինտո՞ր բոլոր աս բաներուն մէջ ինքը  
մէկ անձնասէր մէկ մըն է եղեր : Ի՞նչ  
պէս ինքը իր ընկերներուն հետ հա  
ղորդակցութիւն ընելուն մէջը մոռ  
ցեր էր Արտուած ու Փրկիչը և ա  
պագայ աշխարհը , և ինտո՞ր բոլորու  
վին զանց ըրեր էր որ իր ընկերները  
երջանիկ ընէ անոնց ինքը առաջնորդ  
ըլլալովը զԱստուած սիրելու և պնոք  
հնագանդելու : Ինքը հիմայ կըտեմ  
նայ որ Արտուած զինքը աս աշխարհիս  
մէջ դրաւ՝ որ ուրիշներուն բարիք ը  
նէ , ոչ միայն անոնց մարմիններուն  
հապա իրենց հոգիներուն , ոչ միայն  
աս աշխարհիս նայելով՝ հապա դե  
րեզմանէն անդին ալ էվելի իրենց  
յաւիտենական նոր գոյացութեանը  
նայելով :

Այս ինքը կընայի Յիսուս Քրիս

մոտին վրայ . կըխորհի թէ ինտ՛ը ա  
 նիկա աղէկութիւն ընելու վրայ էր .  
 ինտ՛ը անիկա աս կերպ բաներով Աս  
 տուծոյ կամքը ըրաւ , և մեզի ամենուս  
 օրինակ թողուց իր ըրածը՝ որ անոր  
 հետեւինք մենք ալ : Կիմանայ՝ որ շատ  
 անհող եղած էր ինքը իր պարտաւո  
 րութեանը վրայ՝ Քրիստոսի օրինա  
 կին չի հետեւելով . և ինքը աս բա  
 նին համար խորունկ տրտմութեան  
 մեջ կըլլայ : Ասա՞կ իր առջի վար  
 քին վրայ կողքայ ինքը , որ իր կեանքը  
 միայն իր անձին բարութիւնը փնտը  
 ուելու մեջ անցուցեր էր . և թէ որ  
 ուրիշներուն երջանկութեանը համար  
 բան մըն ալ ըրեր էր նէ , շատ քիչ  
 բան էր ան իր ըրածը : Տոլոք աս բա  
 ներուն մեջ կիմանայ՝ որ ինքը չէ թէ  
 միայն իր ընկերներուն եղած պարտքը  
 ընելէն ետ կեցեր էր , հապա որ ինքը  
 Աստուծոյ դէմ ալ մեղք գործէր էր :  
 Աստուած ինքը անոր համար կենդա  
 նութեան մեջ պահեր էր , որ իր

կեանքը ուրիշներուն քաղիք ընելով  
 անցունէ : Եւ Ծատուած իրեն կարու  
 զութիւն ու միջոցներ տըւեր էր , որ  
 անոնցմով ուրիշներուն շատ աղէկու  
 թիւններ ընէ : Եւ Ծատուած իրեն  
 պատուիրեր էր ուրիշներուն աղէկու  
 թիւն ընելը : « Ա, ահ քուն իր խղճմը  
 տանքն ալ իրեն սորվեցուցեր էր , որ  
 ուրիշներուն աղէկութիւն ընելովը  
 ինքը իր անձին երջանկութիւնը շատ  
 աղէկ պիտի յառաջացունէ : Եւ ինքը  
 իր խղճմտանքէն շատ անդամ նեղու  
 թիւն ու յանդիմանութիւն քաշեր էր  
 նայելով ան մարդոցը վրայ , որոնք որ  
 ուրիշներուն բարիք ընելու ետևէ  
 կըլլային . և ինքը տեսեր էր զարմա  
 նալով թէ ինտոք անոնք շատ աղէկ ու  
 շատ աղնիւ և շատ երջանիկ յառա  
 ջադիմութիւն մը կունենային իրենց  
 բարերարութեանը մէջ :

Վ երջապէս ինքը կըտեսնայ ան  
 առջի ըրած բաներուն ու գործքե  
 րուն մէջ իր կամապաշտութիւնը՝ իր

անտրդութիւնը՝ իր յանցաւոր ըլլա-  
լը՝ իր Վստուծոյ դէմ ըրած մեղքը :

Առ ինքը բոլոր զօրութիւնով կը-  
փափաքի անկէ ետև իր ապառնի  
կեանքին մէջը մինակ բարիք ընելու  
ետևէ ըլլալ իր ընտանեացը՝ ու իր  
ընկերներուն : Արփափաքի աս բա-  
րութիւնը ընել ոչ միայն իր ընտա-  
նեացը՝ իր աղքականներուն ու բարե-  
կամներուն և ճանչւովներուն, հապա-  
ան ամենուն՝ որոնց ինքը կրնայ մէկ  
կերպով մը բարերարութիւն ընել :  
Ինքը կըբաղձայ ընել աս բանը ոչ  
միայն անոնց, որ իրեն աղէկութիւն  
կընեն՝ ու կըցանկան իրեն բարիք ը-  
նել, հապա նոյնպէս հաւասար իր  
թշնամիներուն ալ՝ թէ որ թշնամի մը  
ունի նէ . ան մարդիկներուն՝ որ ընտ-  
չեն կրնար վճարել իր ըրած բարու-  
թեանը փոխարէնը . անոնց՝ որ իրմէն  
ան ըրածին համար չնորհակալ ալ  
չեն ըլլար, նաև անոնց ալ՝ որ իր

բարութեանը փոխարէն չարիք կը  
հատուցանեն :

Գռեժոր . Այսը , կարծեմ թէ որ  
մենք ամենքս աս կերպ ղգացումներ  
ունենանք , անատեն շատ մէկ երջանիկ  
ընտանիք մը պիտի ունենանք :

Այսը . Եյ՛ զաւակս ճշմարիտ է  
առ . թէ որ ամեն զաւկըներ ու ամեն  
ծնողըներ աս կերպով խորհելու ըլւ  
լան նէ , բոլո՞ ընտանիքները երջա  
նիկ պիտի ըլլան : Եւ թէ որ բոլոր  
մարդիկ ասանի սիրո ու խորհուրդ  
ունենան նէ , ալ ի՞նչ երջանիկ դր  
բացնութիւն կունենանք մենք . ի՞նչ  
երջանիկ գեղեր ու քաղաքներ , ի՞նչ  
երջանիկ նահանգ մը , ու ի՞նչ երջա  
նիկ աշխարհ մը :

Ախ իմ սիրելի՝ զաւկըներս , դուք  
ասանի ղգացում մը ձեր սրտերնուր  
մէջը չունեցաք : ‘Եայէցէք ան ձեր  
անցած կեանքերնուրդ վրայ , թէպէտ  
անոնք այսչափ կարծէին : ‘Եայէցէք  
թէ ան ձեր ամեն օրվան կեանքերնուրդ

մէջի բաները ի՞նչ նիւթեր ունեին .  
ի՞նչ բան ձեռք ձգելու ելաք փընտը  
ուցիք : Պինտ առաջ առարգանց քու  
ներնուղ ելած ատեննիդ ի՞նչ մտմտա-  
ցեր էիք մինչև իրիկուն ընելու , կամ  
ան մտմըտացած բաներնիդ ի՞նչ պատ-  
ճառի համար ընել կուզէիք դուք :

Գուցէ բոլոր օրվան մէջը դուք առ  
կամ ան բանը ընելու խորհուրդներ  
ունեցած էք : Կարելի է որ՝ ուրիշնե-  
րուն օդնութիւնը փնտըռեցիք ան բա-  
ները ընելու համար : Կամ դուցէ  
վաղվան համար խորհրդածութիւն  
ըրեր էք , կամ դալ շաբթիվան հա-  
մար , կամ դալ ամսըվան համար ,  
կամ դուցէ մէկալ տարվան համար :  
Սիրտերնիդ առ բաները լմընցունելու  
վրայ դրեր էիք : Ենանկ յոյս ունե-  
ցեր էիք՝ որ անոնք լմըննալու ատենը  
շատ երջանիկ պիտի ըլլաք : Եւ վեր-  
ջապէս անոնք չի կատարելով՝ շատ  
նեղութիւն քաշեր էիք :

Հիմայ ամեն առ խորհրդածու-

թիւններուն մէջը լ' ն.չ քանի համար .  
խորհեր ու մտմտացեր էիք , կամ խօ  
սակցեր ու դորձեր էիք դուք : Եթ  
զեօք ձեզի՞ համար , կամ ուրիշնե  
րուն համար . ձեր անձին մասնաւոր  
երջանկութեանը համար , կամ ու  
րիշներուն երջանկութեանը համար .  
և ձեր անանի երջանկութեանը հա  
մար , որ իրաւցընէ անոնց երջանկու  
թեանը կապված էր :

Թէ որ դուք ճշմարտութեամբ աս  
ինդիրներուն կը սպառասխանէք ամեն .  
մէկերնիդ ինքզինքներնուդ համար ,  
պիտի տեսնաք թէ ո՞րչափ կարօտ էք  
զզ ջալու ձեր առջե կամապաշտու  
թեանը ու մեղքին վրայ , և երթալու  
լէպ 'ի քը իստոսին , որ իր Առւրբ  
Նոգիին օղնութիւնսվը ունենաք սէր  
մը առ Եստուած և առ նոյն Փրկիչը ,  
և սէր ձեր ընկերներուն վրայ , և մէկ  
զօրաւոր բաղձանք մը ամեն կերպ ա  
զէկութիւնը ընելու որչափ որ կարո  
ղութիւն ունիք նէ :

Պէտքիսու յա գու

Ճշմարիտ ապաշխատողը իւ արդիով իւ յատնացանքնեւ  
կը այ ու ու չներած գեհցուեն ըշտու :  
Անոն հապաւուցու մը իւ նէ . իւ ետը հածեն եւ  
սիրեն զգացած թշքշուն մը այ իւղը այ , և  
իւ յատնիս մարտէ ըլու ու ըլու ու ըլու : Իւ ընտա-  
լեսան ու պատ թշքշուն ու կը իւ իտուն ու  
իւ հակառակն է :

Անյը . Տըղաքս , երէկ իրիկուն մելք  
խօսակցութեան վերջին խօսքերը ձեւ  
զի ցուցուց թէ ո՞րչափ տրտմութիւն  
կըզգայ ճշմարիտ ապաշխարողը իր  
ընկերներուն խկական երջանկու-  
թիւնը յառաջացունելու համար այն  
չոփքի հոգ ունենալուն վրայ :

Աս բանին հետ մէկտեղ ինքը կը-  
խորհի թէ ո՞րչափ անիրաւութիւն ալ  
ըրած է ինքը զործողաքար իր ընկեր-  
ներուն : Ինքը կարելի է որ անոնց  
առջելը անանկ բաներ զըուցած կամ  
ըրած է որ , անանկով իրենց առաջ-  
նորդութիւն ըրած ըլլայ անհնազանդ

ըլլալու խստուծոյ և արհամարհելու  
անիկա, և մէկդի ձղելու ան Փրկիւ  
չը, և մեղքին ճամբան շարունակ յա-  
ռաջանալու :

Կարելի է որ ինքը անիրաւ եղած  
ըլլայ անոնց հետ վարվելուն մէջը,  
խաբելով անոնք առուտութի մը մէջ  
կամ կտրրված գինի մը մէջ, և թէ  
չի խաբեց ալ նէ՝ զոնէ ան կերպը  
ըրբաւ անոնց, ինչպէս ինքը կուզէ որ  
նոյնպէս իրեն ընեն անանկ դիպուած-  
ներուն մէջը :

Կարելի է որ անանկ բան մը իրեն  
անցուցած ըլլայ, որն որն իրենը չէր,  
զուցէ ան բանը զողնալով, կամ ետ  
չի դարձունելով ան բանը սահման-  
ված ժամանակին : Աւրիշներուն ըս-  
տացուածքը կարելի է որ իրմէն վր-  
նաս քաշած ըլլան՝ կամ իր կամքովը՝  
կամ իր անհողութիւնովը ու զանց ը-  
նելովը :

Կարելի է որ ինքը ուրիշներուն  
համար դէշ խօսած ըլլայ ստութիւ-

նով , կամ թէ ըուն ինչպէս որ էր նէ  
Ճշմարտութիւնը՝ անկէց աւելի խօ-  
սած ըլլայ , կամ երբոք հարկաւոք  
պատճառ մը չի կար ան բանը խօսե-  
լուն , և միայն իր կամապաշտ ու չար  
բաղձանքները հեշտացունել էր :

Կարելի է որ ինքը ուրիշներուն  
դէմ իր գործքովը չարագործ եղած  
էր , և անոնց հետ բարկութեամբ ու  
բրտութեամբ վարվեր էր՝ ամբարտա-  
ւանութիւնով ու արհամարհութիւ-  
նով :

Կարելի է որ ինքը իր ծնողացը և  
վարժապետներուն ու իրմէ մեծերուն  
հետ այնպէս չի վարվեցաւ՝ ինչպէս որ  
արժան էր նէ :

Կարելի է որ ինքը անոնց հետ ա-  
նարգութեամբ վարված ըլլայ , կամ  
նախատանօք ալ : Կարելի է որ ինքը  
անհնաղանդ եղած է անոնց . և մէկ  
մեծ նեղութիւն մը տրւած է անոնց :

Բոլոր աս կերպ բաներուն վրայ  
ինքը սրտի մտօք կըխորհի , և ուրիշ

բաներուն վրայ ալ, որսնց մով իր ըն-  
կերներուն դէմ դէշ բան ըրած էր ։  
Ինքը կըտեսնայ թէ ինտօր աս բանե-  
րուն մէջ ինքը յանցաւոր եղած է ։  
Ախմանայ ներսիղին՝ որ ինքը մեղք  
գործեր էր, չէ թէ միայն իր ընկեր-  
ներուն դէմ հապա ։ ստուծոյ դէմը :  
Վանդի Յատուած իրեն պատուիրեր  
էր, որ իր ընկերը իր անձին պէս սի-  
քէ . ու ինտօր կուղէ որ ուրիշները ի-  
րեն ընեն՝ անանկ ընէ ինքն ալ ու-  
րիշներուն :

Ինքը ղինքը կըլսոնարհեցունէ ։ ս-  
տուծոյ առջել . իր մեղքը կըխոսու-  
վանի . անոր վրայ կըտրտմի ինքը :  
Կաղօթէ որ ալ աս բաները ետքէն  
իր շնորհքովը չընէ, հապա հող տա-  
նի ուրիշներուն երջանկութեանը՝ օ-  
գուտին՝ պատիւին ու ղղացումներուն  
վրայ, ինչպէս որ իրեններուն հող կը-  
տանի նէ :

Բայց ինքը ու աստեղ չի կենար,  
հապա կըմտածէ առաջնորդութեան

Համար Առառուծոյ կաղօթէ . կըհարցունէ իմաստուն ու բարեպաշտ մարդոցը , որ կընայ իր պարտքը գիտեալթէ ի՞նչ ընելու է ան մարդիկներուն , որոնց որ ի՞նքը անիրաւութիւն ըրածէր առաջ :

Երբոր կըգոնայ թէ իր պարտքն է խոստովանիւ իր ուրիշներուն դէմը ըրած յանցանքը նէ , իսկոյն անդան գաղ ան խոստովանութիւնը կամաւու կատարելապէս կընէ , և ներողութիւն կըխնդրէ : Ասկէց 'ի զատ կըջանայ ի՞նքը՝ որ իր կարողութեանը չափ անոնց հատուցում ընէ :

Թէ որ ի՞նքը ուրիշներուն վնաս ըրած է նէ իրենց շահուն կամ գործին մէջ , ի՞նքը անոր վճարքը կընէ . թէ որ ի՞նքը ուրիշներուն պատիւին վնաս ըրած է նէ , կըջանայ ի՞նքը՝ որ ամենուն խոստովանի թէ ի՞նչ ճամբով ըրած էր , և որ՝ ի՞նքը ան բանը առանց պատճառի ըրեր էր , և որ՝ ան բանին համար ի՞նքը ճշմարտապէս տրտումէ :

Վերջապէս շատ կըփափաքի ինքը  
մէկդի ձգելու ան իր ըրած վնասը , որ  
ուրիշներուն հոգիներուն հասուցեր  
էր իր չար օրինակը կամ գործը : Պա-  
րապ ատեններ կըփնորուէ՝ որ անոնց  
քովը երթայ , ու անոնց ընկերութեան  
մէջ եղած ատենը իր ըրած բանին  
մեղքը ու սխալը խոստովանի անոնց ,  
և անոնք յորդորէ որ իրենց մեղքերը  
գղջան , Աստուծոյ դառնան : Ֆրկիչին  
վրայ իրենց յոյսելնին դնեն , ու ին-  
քըզինքնին անոր ծառայելու ուխտեն :

Տըղաքս , կուղեմ որ սրտի մոօք  
Ճշմարիտ ապաշխարութեան աս մասին  
վրայ խորհիք , ու տեսնաք որ դուք  
կարօտութիւն ունիք ներսիդինիդ  
դդալու և ներգործընկելու Ճիշտ ին-  
տոր որ ես ձեղի խօսեցայ թէ ինչպէս  
կընէ մէկ Ճշմարիտ Օղջացող մը :  
Շատ անդամ ձեղմէ ամէն մէկերնիդ  
ձեր օրինակովը ու խրատովը առաջ-  
նորդ չեղաք մի արդեօք ձեր մէկ եղ-  
քօրը կամ քըռջը , և կամ մէկ ուրիշ-  
ողի մը , որ ձեր պատճառաւ սխալ

զգացում ունեցաւ կամ յանցանք ը-  
 րաւ : Եսանկ շատ օրինակներ միտ-  
 քերնիդ չեք կընար բերել մի : Չերին  
 պղտի առուտութին մէջը ուրիշ տղոցը  
 Ճիշտ անանկ ըրբիք մի ինտոր որ դուք  
 կուղէիք թէ անոնք ձեղի ընեն : Եմե-  
 նեին մէկ խաբելու պէս բան մը չըրբիք  
 մի . առանց հրամանի ամենեին ու-  
 րիշներուն ունեցածը չառիք ու չաւ-  
 ըցիք մի . կամ թէ չի պահեցիք  
 կամ չի կորսընցուցիք մի անիկաւ :  
 Հողերնիդ եղան մի արդեօք , որ ու-  
 րիշներուն ստացուածքին վնաս ը-  
 նէք դիտմամբ կամ անհոգութիւնով  
 ու գանցառութիւնով : Ինչպէս որ ար-  
 ժան էր նէ ամէն ատեն ուրիշներուն  
 վրայով անանկ խօսեցաք մի : Եիտ-  
 քերնիդ չի գար մի անանկ ժամանակ-  
 ներ , որ անոնց վրայով սուտ բաներ  
 խօսած էք , կամ բուն եղածէն աւելի  
 իրենց ըրած գործքերը գէշ երևու-  
 ցած էք : Ըստ անգամ ձեր խօսքին ու  
 գործքին մէջ ուրիշներուն անմարդա-

սիրութիւն չըրի՞ք մի . և երբեմն չե  
բարկացա՞ք մի , և անոնց վրայ ծեծի  
չի վազեցի՞ք մի : Առտմտացէ՞ք որչափ  
շատ անդամձեր ծնողացը՝ կամ վար-  
ժապետին կամ ուրիշ պատուաւոր  
մարդոց հետը անվայել կերպով վար-  
ված կամ խօսած՝ կամ բան մը ըրած  
էք , որոնց հետ որ արժան էր յարգու-  
թեամբ ու հնազանդութեամբ խօս-  
վել . և ասանկով ո՞րչափ նեղութիւն  
տրւած էք դուք անոնց :

Հիմայ զիտցած եղիք , որ բոլոր աս  
բաները լու Կոտուծոյ դէմ մեղքեր են :

Որչափ որ դուք յանցաւոր էք ,  
այնչափ էվելօք պէտք է ծեղի՞ որ ան  
մեղքերուն վրայ օղջում ընէք Կո-  
տուծոյ առջեր , և խնդրէք իրմէն՝ որ  
Վրիստոսին համար ծեղի ներողու-  
թիւն տայ :

Բայց աս ալ ծեր պարտքն է , որ  
պիտի խնդրէք նաև անոնցմէ որոնց  
որ դուք անիրաւութիւն կամ վնաս մը  
ըրած էք , որ անոնք ալ ծեղի թողու-

թիւն տան , ու ձեր կարողութեանը  
չափ իրենց դէմ ըրած մեղքերնուդ  
հատուցում մը ընէք :

Բոլոր աս բաներուն վրայ մտմտա-  
ցէք տըղաքս , ու անկէց սորվեցէք  
թէ ճշմարիտ օղջումը ինտոր մէկ  
հարկաւոր ու երևելի պարոք մըն է :

Ուրիշ մէկ նշան մըն ալ կայ , որն  
որ ճշմարիտ ապաշխարողը իր մէջը  
միշտ կունենայ . այսինքն՝

Ճշմարիտ ապաշխարողը կըտես-  
նայ որ ինչպէս խօսքի ու գործքի մեղ-  
քեր կայ նէ , անանկ ալ խորհուրդի  
ու սրտի մեղքեր կան : Դրաւցընէ ին-  
քը ան ալ կիմանայ՝ որուն վրայ որ ա-  
մենելին առաջ ինքը կասկած չունէր .  
այսինքն՝ ան իր խօսած ու գործած  
քաները Վատուծոյ առջելը իր մեղքե-  
լուն էվելոք մեծ մասը չէն :

Ինքը կըտեսնայ որ Վատուծոյ օ-  
րէնքները մինչեւ իր հոգիին վրայ կը-  
նայի , ու կըպահանջէ՞ որ իր խոր-  
հուրդները ու ներսիղիէն անցածները

անդամ շիտակ ըլլան : Ինքը կըտես  
նայ թէ ո՛րչափ սխալ խորհուրդներ  
ու զգացումներ ունեցեր էր, ու ա-  
սոնցմէ ո՛րչափ կան որոնք ինքը չէր  
ուզեր որ մէկ մարդ մը գիտնայ, և որ  
կամը չնար ինքը զրուցելու իր պինտ  
աղէկ բարեկամին ալ : Իր միտքը կը-  
բերէ թէ որչափ խորհուրդներ ու  
զգացումներ ունեցեր էր ինքը, որոնք  
խօսքով դուրս հանելու չէր համար-  
ձակեր, կամ իր գործքով յայտնի  
ընել . և ոք անոնց համար իր խրզ-  
մտանքն ալ զինքը շատ սաստիկ նա-  
խառեր էր :

Ուրիշ խորհուրդներ ու զգացում-  
ներ ալ կան . այսինքն, իր ամբարտա-  
ւանութիւնը, իր ունայնութիւնը, իր  
նախանձութիւնը, իր ոխակալութիւ-  
նը, իր սրդողկութիւնը, իր դըժդո-  
հանքը, ու ասոնց նման բաները, ո-  
րոնց վրայ ինքը անառեն շատ չէր  
մամտացեր, բայց հիմայ ինքը կըտես-  
նայ որ անոնք մեղք են եղել :

Կըտեսնայ որ ինքը ասանկ խոր  
հուրդներու ու զգացումներու վրայ  
հաճութիւն ունենալովը՝ էվելօք  
պատրաստէ եղել յանցանք գործելու-  
և որ եթէ մենք բոլոր խորհուրդները  
ու զգացումները կընանք աղէկ պահե-  
լու, անկէ ետեւ մեր խօսակցութիւնը  
ու գործքն ալ շիտակ կրլայ : Կըտես-  
նայ որ այնպէս կատարեալ մաքուր ու  
սուրբ էակ մը՝ որ է Աստուած, մեծ  
ատելութիւնով կընայի ասանկ պիղծ  
խորհուրդներուն ու զգացումներուն  
վրայ . ուրեմն որչափ և ինչ չափ իր  
վրայ ալ պիտի նայի ատելութեամբ :

Ալ ասոնք միտքը բերելովը՝ կը-  
խոնարհի ինքը՝ ու խորունկ տրտմու-  
թեան մէջ կրլայ : Ախմանայ թէ ինչ  
պէս յանցաւոր եղած էր ինքը Աստու-  
ծոյ առջեր, երբոր ուրիշներն ալ ի-  
րեն վրայով աղէկ բան կըխորհէին :

Չերկընցունենք, իր ըրած զղջու-  
մը մինչեւ անդամ իր հողիին ներսի-  
նին կըմտնայ . և ան զղջումը կիշխէ

իր մէջը եղած ամէն ծածուի խոր-  
հուրդներուն ու զգացումներուն , իր  
կարծիքներուն , իր բաղձանքներուն ,  
իր ցանկութիւններուն , իր վախե-  
րուն , իր յոյսերուն , բոլոր ան դադու-  
նի գործքերուն՝ ու իր սրտին շարժ-  
մունքներուն վրայով :

**Ա.** Կըցանկայ ինքը մաքուը ըլ-  
լալու սրտովը : Կըխնդրէ՝ ով Վատու-  
ծոյ Առւրբ Հոգին բոլոր իր խոր-  
հուրդները ու զգացումները ուղղէ , և  
օդնէ ու զօրութիւն տայ իրեն , որ  
կընայ մէկդի ձգել իր հոգիէն ան ա-  
մէն պիղծ բանը՝ որ չունենայ Վատու-  
ծոյ անհաճոյ եղած խորհուրդները ու  
զգացումները , կամ անանկ խորհուրդ-  
ները՝ որ իր ընկերներուն դիտցունե-  
լու վախնայ :

**Ճ.** Ճմարիտ օղջում ընողը կիմանայ  
որ քանի մը մեղքեր կան՝ սրտով եղեր  
կամ գործքով , որ անոնց տակը կընա-  
լը շատ դիւրին է իրեն :

**Դ.** Դուք դիտէք տըղաքս , որ ձեղի  
ալ ասանկ կուզայ : Օոք օրինակ՝ զի-

տէք թէ ինչպէս դիւրութեամբ Երա-  
մոդ իր խաղին համար զանց ընել կըր-  
նայ իմ իրեն զրուցած բանս՝ որ պիտի  
ըլլըլիքը շուտով ատեն չանցած, և  
որչափ շատ ժամանակ ինքը աս բանիս  
համար յանդիմաներ եմ ես :

Ու Եղիսային ալ յանցանքը ան է,  
որ ուրիշներուն վրայ յանցանք գըտ-  
նալ կընայի : Վրիգորինն ալ ան է՝  
որ իր եղքօրը ու քըլո՞ջը անվայել  
կերպով կըհրամայէ, ու ան ալ՝ մէկ  
մէծ իշխանութիւնով մը, որպէս թէ  
տանը գլխաւորը ինքն է :

Մէծ մարդիկներն ալ աս կերպ  
մեղքեր ունին, որ անոնց տակը իյնա-  
լը շատ դիւրին է : Վաճի որ դուք ալ  
մէծնաք՝ աս բանին Ճշմարիտ ըլլալը  
պիտի իմանաք ձեր վրայ նայելով :  
Պիտի իմանաք որ՝ թէպէտ և Ճշմար-  
տապէս ապաշխարելու ըլլաք անանկ  
մեղքերուն վրայ, բայց բոլորովին ա-  
նոնք յաղթելը մէծ բան մըն է . և որ

անոր համար սկզբ է ձեղի՞ որ ամեն  
իժիր Աստուծոյ աղօթէք իր Առլը  
Հոգիին օդնութեանը համար :

**Ճ**շմարիտ Օդջումընողը ինքը զին  
քը Աստուծոյ առջեւը կըխոնարհէ  
ցունէ իր կարեոր մեղքերուն համար :  
Անոնք ամենը կըխոսավանի ինքը  
խորունկ տրտմութիւնով :

Կըզարմանայ որ առաջ ինքը ան  
մեղքերը չէր տեսեր՝ ինչպէս որ հիւ  
մայ կըտեսնակոր : Եղօթք կընէ՞ որ  
կարենայ բոլոր անանկ մեղքերը գըտ  
նալ, որոնց տակը որ իրեն իյնալը  
շատ դիւրին է . և որ կարենայ ինքը  
ան մեղքերը պայծառ ու ներդործու  
թեամբ տեսնալ, թէ ինքը անոնք  
Աստուծոյ դէմ գործեր է, և որ անոնք  
իր անձին ու ուրիշներուն վնասակար  
բաներ են :

**Ա**ստուծոյ դօրութիւնովը, Քրիս  
տոսի հաւատքովը՝ ու ամեն օրվան ը  
րած ջերմեռանդ աղօթքովը՝ որ իր  
Առլը Հոգիին օդնութիւնը կըխնդ-

ըէր, ալ կըսկըսի ինքը աս մեղքերուն  
հետ կըուիւ ընել :

Կոյն կուիւր իսկեխսկ կըսկըսի՝  
նոյն օրը ու նոյն ժամը, որ ինքը ներ-  
սիդին ճշմարիտ Օղջումը կունենայ .  
ան կուիւր կըսկըսէ նոյն վայրկեանը՝  
որ ինքը նորէն յօժալութիւն մը կի-  
մանայ աս մեղքերը գործելու : Եւ աս  
կուիւր ինքը կըսկըսի ընել կամ խոր-  
հրդով կամ խօսքով և կամ գործքով  
եղած մեղքերուն դէմը : Ու որ աս  
կերպ փափաք մը ու աղօթք մը ու  
ջանք մը ասանկ մեղքերը յաղթելու  
համար չըլլայ նէ, ճշմարիտ Օղջում  
չի կընար ըլլալ :

Տըլաքս դուք նշան դրէք իմ ըսած  
բաներուն, ու ամենելին անոնք միտ-  
քերնուղ մի՛ հանեք :

Երմոգը թէ որ ինձի ըսէ որ, ին-  
քը իր մեղքերուն վրայ հաստատ կեր-  
պով ճշմարիտ Օղջում ըրած է .  
բայց տակաւին իր գործքէն կերևայ  
որ՝ ինքը Աստուծոյ աղօթք չէ ըրեր,

և որ ջանք չէ ըրեւ իր սովորած յանցանքը մէկդի ձգելու իմ պատուելոնեւ ըուս իսկոյն հնազանդելովը, ասկէց ստոյդ է որ ինքը իր ներսիդին ճշմարիտ օղջումի պէս ըան մը չէ զգացեր :

Եւթէ որ Եղիսան ալ զբուցէ որ իր առջի սորված մեղքին վրայ ճշմարիտ օղջում ըբեր է, բայց միշտ իր նոյն ընաւորութիւնը գործածէ նէ ուրիշներուն յանցանքը գտնալու, ինչ մեծ սխալ պիտի երևայ իր մէջը :

Ութէ որ Գրիգորն ալ յուսայ՝ որ ինքը ճշմարտապէս օղջացեր է իր մեղքերուն վրայ, բայց առջի պէս իր անվայել կերպով իշխանութիւն ընելու ճամբան ձեռք առնէ՝ իր եղքօրը ու քրոջը հրամայելովը, ալ անտարակոյս կերևայ՝ որ ինքը տակաւին ճշմարիտ օղջումին ինչ ըլլալը չէ գիտցեր ներդործութեամբ :

Ճշմարիտ օղջումին հետ միշտ պիտի ըլլան ջերմեւանդ փափաքներ՝

ու աղօթքներ՝ և ջանքեր, որ յաղթեն  
մեղաւորին բնութեանը սիրած մեղ-  
քերը՝ որոնց տակն որ իրեն իշնալը  
շատ դիւրին է . և ասանկով ան զըդ-  
ջումը յայտնի երեւայ իրեն՝ ներգոր-  
ծաբար ան մեղքերը յաղթելովը :  
Վանդի Կատուած ան Ճշմարիտ զղ ջա-  
յող մարդը անշուշտ կըզօրացունէ ,  
որ աս յաղթութիւնը կարենայ ընել  
ինքը անոր շնորհքովը :



## ԳԼՈՒԽՆ. ՃՐԿ.

Առաջ · Տըղաքս , մեր Երէկվան խօս  
սակցութեանը մէջ Ճշմարիտ Օդու  
ջում ընողին իր բնութեան շատ սիւ  
լած մեղքերը յաղթելուն վրայով բու  
լոր ան զբուցածներէս՝ ի զատ՝ կուղեմ  
որ աս ուրիշ մեծ հարկաւոր բանն ալ  
միտքերնիդ բերէք . այսինքն , ան  
օղջացողը Կատուծոյ զօրութիւնովը  
իր միտքը պիտի դնէ որ բոլոր մեղք  
քերը մէկ դի ձգէ , ու իսկոյն իր սըր-  
տին մէջ կատարեալ նորոգութեան  
գործ մը սկըսի ընել : Այ ասիկա է ա-  
հա Ճշմարիտ օղջումն ըլլալուն շատ  
աղէկ ու էվէլօք յայտնի նշանը :

Դուք տեսաք, թէ Ճշմարիտ ապաշխարողը ինքը զի՞նքը ինտոք մեծ մեղաւոր մը ըլլալ կիմանայ ներսիւ դիէն, ու Եստուծոյ առջև իր անձը կրխոնարհեցունէ ան պատճառաւոր, ու յանցանքին համար կըտրամի :

Մինչև աս զղ ջումին օրը ու ժամանակը իր մեղքերը շատնալու վրայ էին : Իր խորհուրդները, իր շարժմունքները, իր խօսակցութիւնը, իր վարքը մեղանչական եղած էին :

Ո՞՛չ գէշ ունակութիւնով ի՞նչպէս աս մեղքերուն զօրութիւնը կուժով նայ :

Բոլոր աս ունակութիւնները արդեօք մէկ օրվան մը մէջ, մէկ ժամու մը մէջ, մէկ վայրկեանի մը մէջ կըրնայ մի մէկ դի ընելան զղ ջումը՝ որ թէպէտ զօրաւոր ու Ճշմարիտ եղած ու ըլլայ :

Ա՛յս, հիմայ Ճշմարիտ զղ ջացող մարդը շուտով պիտի գտնայ որ ասանկ չէ : Կիմանայ՝ որ իր առջև մէկ մեծ

դործ մը կայ . այսինքն՝ զօրաւոր  
թշնամի մը ունի , որ ինքը անիկա սկի-  
տի յաղթէ : Ինքը մեղքին գէմ կըու-  
ւելու է մինչև իր մահուան ժամանա-  
կը , և ինքը աս կռիւը կըսկըսէ ընել  
իսկ և իսկ : Վստուծմէ կըյուսայ իր  
Առւրբ Հոգիին օդնութիւնը . կըջա-  
նայ՝ որ իր խղճմբանքը լուսաւորի  
Վստուծաշունչը կարդալովը , և իր  
սիրտը քննելովը :

Դանքով ու ջերմեւանքութիւնով  
նոր բարեկարդ գործի մը կըսկըսէ :  
Եւ ասկէց՝ ի զատ՝ ամէն մարդիկ  
իր վրայով յայտնի կըտեսնան թէ ին-  
քը աս նորողութիւնը սկըսերէ : Վն-  
շուշտ անոնք պիտի տեսնան , որով  
հետեւ անիկա այնչափ պայծառ ու  
յայտնի է :

Իր ընտանեաց մէջը , իր զրացինե-  
րուն մէջը , իր գործին մէջը , իր բո-  
լոր կենցաղավարութեան մէջ ուրիշ-  
ներուն հետ՝ աղէկի դաւնալու մէկ  
երևելի փոփոխութիւն մը յայտնի

կերևայ իր ներսիդիս , իր խօսակցուա  
Շեանը մէջ , ու իր ըրածին մէջը :

Իր առջե զգացումներուն ու գործ  
քերուն մէջը հիմակվանէն շատ մէկ  
տարբեր կերպով մը զգալով կամ ը  
նելով , կը ցուցընէ որ իրաւցընէ ինքը  
տրտումէ ան ամեն բաներուն հա  
մար , որ ինքը եղեր էր կամապաշտ ,  
հպարտ , գէշ , անողորմ , անհաշտ ,  
ոխակալ , դաժան , անիրաւ , տրմար  
դի . վատթար :

Ա. ինքը հետզհետէ կը լայ , բա  
քելաւ , խոնարհ և բարերար ան ամեն  
իր քովը եղողներուն : Ինքը իր կա  
րողութեանը չափ ուրիշներուն վրայ  
աղէկ կը խորհի , և կը ջանայ որ անոնց  
վրայով գէշ մը չե խօսի , միայն թէ  
երբոր հարկաւորապէս պարտաւորի  
նէ խօսելու : Ինքը էվելք ուրիշնե  
րուն ըրած անիրաւութեանը կը համ  
բերէ , քան թէ ինքը անոնց անիրա  
ւութիւն մը կընէ : Ինքը կըներէ ա-

նոնց՝ որոնք իսկեն անիրաւութիւն ըստած են, ու կը ջանայ անոնց աղեկ ըստէլ : Ինքը իր առաւտութիւն մէջ անիրաւութիւն մը չընէր . բոլոր իր գործառնութեանը մէջ իր օդտին համար ուրիշներուն վնաս չընէր : Ինչպէս որ ինքը կուղէ՝ որ ուրիշները իսկեն ընեն, անամսկ ինքը երնէ ուրիշներուն :

Կարելի է որ ինքը երբեմն աս լաներուն մէջ շատ կամ քիչ պակասութիւն կունենայք բայց ո՞ր ժամանակ որ ասանկ պակասութիւն մը ընէլու ըլլայ, նորէն ինքը զզ ջում կընէ ան ըստածներուն վրայ . շարունակ կըկըսւէի՝ որ յաղթութիւն ընէ ինքը . իսկեն քըրիստոսի վրայ ունեցած հաւատքը զինքը կըքաջալէրէ աս յաղթութիւնը ընէլու : Վն իր բոլոր ներսիդին ու վարքին մէջ եղած աղեքը փոփոխութիւնը ետևէ ետև յայտնի ըլլալու զբայ կըլլայ տարվէ տարի, ամսէ աչմաս, օրէ օր :

Երես աս կերպ նորոգութիւնը իր  
 զղ ջմանը նշանն է : Երանց աս կերպ  
 նորոգութեանը որչափ էվելօք որ  
 մենք աշխատինք , ճշմարիտ օդջում  
 չի կրնար ըլլալ : Աւրիշ կերպ զղ ջու  
 մը որ նորոգութիւն չունի իր հետը ,  
 միայն մէկ խաբեքայ ու սուտ բանի մը  
 պէս է : Տըղաքս թէ որ ձեզմէ մէկը  
 ինձի զրուցէ թէ դուք կըյուսաք որ  
 մեղքերնուղ վրայ ճշմարտապէս զըլ  
 ջում ըրած էք , ես պիտի նայիմ բու  
 լոր ձեր զգացումներուն ու ըրածնե  
 րուն վրայ թէ անոնց մէջ աղէկ փո  
 փոխութիւն մը կայ մի , ձեր սիրու  
 նորոգվեր է մի , որովհետեւ զղ ջու  
 մին նշանը աս է : Յժ.է որ ես չի տես  
 նամ որ դուք օրէ օր էվելօք աղէկ ըլ  
 լալու վրայ էք , ու խանդակաթ ու  
 գորովագութ էք ուրիշներուն վրայ ,  
 և էվելօք ցանկացող ուրիշներուն և  
 աղէկ և երջանիկ ըլլալուն վրայ , և  
 էվելօք կամեցող ուրիշներուն եր  
 ջանկութիւնը յառաջացունելու հա

մոր ձեր անձին հանդըստութիւնը  
մէկդի ձգելու : Օձէ որ ես չի տեսնամ  
որ դուք օրէ օր էվելօք հնաղանդ  
կըլաք իմ բոլոր պատուիրածներուս ,  
և էվելօք կըսըխմեք ինքը զի՞նքնիդ  
որ կարենաք ինքը զի՞նքնիդ ինծի հաւ  
նեցունել , և ինծի օգնել՝ տունը տեւ  
զը հոգալովնիդ : Օձէ որ ես չի տես  
նամ՝ որ դուք օրէ օր բարերարութիւն  
ընելու վրայ էք ձեր մօտը եղող ամեւ  
նուն , և մէկ աղէկ կերպով մը անոնք  
ինքը զի՞նքներնուդ պէս սիրելու վրայ  
էք , ամենեւին չի պիտի հաւատամես՝  
որ դուք մեղքելնուդ վրայ զդ ջումը  
բած էք :

Ասանկ ալ դուք կարելի է որ պիւ  
տի զըուցէք ինծի ան մեղքելնուդ վր  
այով ձեր ունեցած մեծ արտմու  
թեանը համար , և թէ ինչպէս ան  
մեղքելը դուք Աստուծոյ խոստովա  
ներ էք , և իրմէն ինողը էք ձեզի  
թողութիւն տալ , և ինչպէս միտքեր  
նիդ դըելը էք որ ձեզի ընել սկամք

եղածը պիտի ընէք . բոլոր աս բանեւ  
ըը թէ որ մէկ նորոգութիւն մը չկ  
տեսնամ ձեր վրայ , ես պիտի մտա  
ծեմ որ միայն խղճմտանքին քիչ մը  
վախ ու դողն է , բայց չէ թէ ճշմարիտ  
օղջում մըն է :

Աս ձեզի տրւած կանոնս՝ որով  
ճշմարիտ օղջում ըլլալն ու ըլլալը  
կըդատէք , Յիառւս Քրիստոսի նոյն  
ըսած բաննն է՝ որ երբ ինքը աշխար  
հիս վրայ էր , տրւաւ մեզի ըսելով  
թէ՝ “ Իրենց պտուղներէն պէտք է որ  
ճանչնաք անոնք ” :

Ինչ ծառ ըլլալը անոր բերած պը  
տուղէն կըդատէք դուք : Թէ որ պը  
տուղը գէշ ըլլայ նէ՝ կըսէք թէ ծա  
ռը գէշ է : Թէ որ պտուղը աղէկ ըլլ  
այ՝ կըսէք որ ծառը աղէկ է :

Ճշմարիտ օղջումը պէտք է որ ա  
ղէկ պտուղ բերէ սրտին մէջ , խօ  
սակցութեանը մէջ , ու գործքին մէ  
ջը : Իս զու ջումը ինչպէս մեծ բանեւ  
լու մէջ պտուղ կունենայ՝ անանկ ալ

պղոտիկ բաներուն մէջը պիտի ունենայ : Խնչպէս որ մեր ըրած աղօթքանուս մէջը , կամ Ծխտուծոյ ծառայելու համար ըրած ջամանքի ըրած ջանքի ընուս մէջը , և աշխարհիս մէջ Քրիստոսի թագաւորութիւնը հաստատվելու համար ըրած խնդիրքներնուս մէջը , անանեկալ մէջ մեր բոլոր ամեն օրվան մեր ընկերներուն հետ վարվելուս ատենը , ընտանեաց մէջը , ու հասարակ դորժքերնուս մէջը պտուղ պիտի ունենայ :

**Տ**ակաւին ես ուրիշ քանի մը բաներ ունիմ ձեզի զրուցելու , որով զուք կարենաք դատել թէ ըրածնիդ Ճշմարիտ Օղջումէ մի թէ չէ : Ե.Յ. Ախնքն Ճշմարիտ զղջացող մարդը մէկ նիւթ մը պիտի ունենայ իր մըտքին մէջը , որուն համար որ իր անձը նըւիրէ ու ընէ ան , որ ան բանին վրայ առաջ իրեն հոգը չէր . այսինքն է որ բոլոր մարդիկ Քրիստոնեաց ըլլան :

Վանզի ինքը կըտեմնայ որ՝ աս ան  
քանն էր, ուսուն համար որ Քրիս-  
տոս աշխարհ եկաւ, և որ աս բանը  
ըլլալովը Կոտուած պիտի փառաւորի  
և բոլոր մարդիկ երջանիկ պիտի ըլ-  
լան։ Կըտեմնայ որ եթէ Կոտուածա-  
շունչը բոլոր մարդիկ ունենան, ու  
թէ որ ամենքը սիրեն ու հնագանդին  
ան դիրքին, աս աշխարհը շատ տար-  
բեր մէկ աշխարհ մը պիտի ըլլայ հե-  
մակվան եղածէն։ Պիտի նմանի եղ-  
բայրներու ու քոյրերու մէկ մեծ ըն-  
տանիքի մը, որոնց գլուխը Քրիս-  
տոս ըլլալով՝ ամենքը անիկա յարդի-  
սեպեն՝ ու անոր հնագանդին։ և ամ-  
մէն մէկը ջանան՝ որ մնացածներն ալ-  
աղէկ ու երջանիկ ըլլան։

Ինքը կըզարմանայ ու կըտրտմի՝  
որ առաջ ընաւ ասիկա չի տեսաւ ու  
ըրդգաց։ Բայց հիմայ ինքը կըտեմ-  
նայ ու կիմանայ թէ ինչ մէկ կամա-  
պաշտ ու մեղաւոր սիրտ ունեցեր է  
ինքը, որ աս մեծ ու փառաւոր բա-

Ներուն վրայ ինքը անփոյթ եղաւ :  
 Եմենսեին իր հոգը չէր եղած ուրիշնեւ  
 լուն հոգեոր աղէկութեանը ու յաւի-  
 տենական օդտին համար : Իրեն առ  
 իր պարտքը զանց ընելուն և իր ան-  
 ձը սիրելուն վրայ կըտրտմի ալ ին-  
 քը : Եստուծոյ կըխոստովանի իր մեծ  
 յանցանքը : Ել կարթընայ իր ապա-  
 շութենէն՝ աղօթելու ու Փրկիչին ծա-  
 ռայելու ջանալու համար :

Ինքը նաև կըջանայ որ իր կեցած  
 տեղը, կամ իր ընտանեաց մէջը՝ ու  
 բարեկամներուն ժողովին մէջը, ամեն  
 մեղաւորները Հիսուս Քրիստոսի  
 առաջնորդէ՝ անոր վարդապետու-  
 թիւններուն հնագանդելով : Ինքը  
 պատեհ ժամանակներ կըդտնայ ա-  
 նոնց հետը խօսելու համար, և անոնք  
 կըսորդորէ որ ղեղջի դան՝ ու յոյսեր-  
 նին Փրկիչին վրայ դնեն : Եմէն օրվան  
 իր աղօթքին մէջը անոնք կըսիշէ,  
 Եստուծմէ խնդրելով՝ որ անոնց իր  
 Սուրբ Հոգին տայ, և անոնց ցուցը

նէ զինքը սիրել ու իրեն հնազան  
գիլ :

Մէկ ուրիշ հարկաւոր ճամբռվ  
մըն ալ ջանք կընէ որ Քրիստոսի  
թագաւորութիւնը բոլոր մարդոց սրբ-  
տին մէջը հաստատէ, այսինքն՝ իրեն  
քարի օրինակ ըլլալովը : Կը ջանայ՝  
որ ցուցընէ թէ ինքը Քրիստոսի հո-  
գին ունի, և որ՝ ինքը կըցանկայ ու  
բիշները աղէկ ընել, անոնց վրայ  
խանդակաթ ու բարերար ըլլալով իր  
ամէն օրվան ըրած կենցաղավարու-  
թեանը մէջը ու գործքերուն մէջը :  
Ինքը շատ կաշխատի, որ բոլոր իր  
գործքերուն մէջը համարձակ ըլլայ՝  
համեստ ու արդար ըլլայ : Կուզէ եվել  
լօք՝ որ ուրիշներուն շահ ինէ, քան  
թէ իր անձին վերաբերեալը նայի .  
և շատ աղէկ խղճիմունքով կընէ ու  
բիշներուն նոյն բանը՝ ինչպէս որ ին-  
քը կուզէ որ ուրիշները իրեն ընեն :  
Ինքը պատրաստ է օդնութիւն ընելու

խեղճերուն, հիւանդներուն տես երա  
թալու, ու բարեկամ չունեցողներուն  
բարեկամ ըլլալու . և ձեռնտու կը լւ  
լայ իր ընկերներուն անմեղ վայելւ  
չութեանը ու շահուն ու մխիթարու  
թեանը աս աշխարհիս մէջ :

Սակայն եթէ զղջումը մեծ կամ  
պղտի աստիճանի մը մէջ, մարդուս  
սրախն ու գործքին վրայ եղած ասանկէ  
ներգործութիւններուն հետ ընկերաւ  
ցած չէնէ, անիկա աղէկ տեսակ զրդ  
ջում չի կրնար ըլլալ :

Իրեն պատեհութիւն ունեցած ա  
տենը բարիք ընելու աս բարձանքը  
և Քրիստոսի աւետարանին օրհնու  
թիւնները իր ընկերներուն մէջ տա  
րածելուն փափաքը ճշմարիտ ապաշ  
խարող մարդուն վրայ անշուշտ պիտի  
երեայ, և օր ըստ օրէ պիտի մեծնայ :  
և աս մասին մէջ ինքը օր ըստ օրէ է  
վելօք պիտի նմանի Քրիստոսի, որ  
երբ աշխարհիս վրայ էր՝ ամեն բան  
մէկդի ձգեց, որ Կատուծոյ կամքը ըւ

նէ մարդոց մարմիննելուն ու հոգինելուն բարիք ընելովը :

Ուստի սիրելի՝ զաւկըներս, թէ որ դուք մեղքելնուդ վրայ ճշմարտապէս դդ ջալու որ ըլլաք, սոյն աս բաղձան քը պիտի ունեսաք սրտելնուդ մէջը : Պիտի փափաքիք ու պիտի աղօթէք, որ Քրիստոսի թագաւորութիւնը աշխարհիս մէջ հաստատվի : Արչափ որ կը նաք հասկընալձեր ընելու պարտքելնիդ՝ այնչափ պիտի աշխատիք, ու հոգ պիտի ընէք անոնք կատարելու որչափ պատեհութիւն որ ունենաք նէ : Պիտի աշխատիք ուրիշներուն բարիք ընելու, որ տեսնան թէ դուք Քրիստոսի հոգին ունիք, և անոնք ալձեր օրինակովը աս Փրկիչին վրայ յոյսելնին դնեն՝ ու սիրեն ինքը և հնապանդին անոր :

Թէ որ ձեզմէ մէկը ինձի զըուցելու ըլլայ թէ՝ դուք կը ուսաք որ դդ ջում ըրած էք մեղքելնուդ վրայ, բայց ես պիտի տեսնամ որ դուք Քրիստոսի

թագաւորութիւնը՝ նաև մեր ընտանեաց մէջ հաստատելու օգուտ չէք ըներկոր նէ, ես պիտի խորհիմ անտեսն որ դուք էվելօք խարված էք :

Ճշմարիտ զղ ջացող մարդ մը, որ խորունկ տրտմութիւն ունենայ իր բուն մեղքերուն վրայ, ու ամէն բանէն էվել Վատուժմէ շնորհակալ ըլլայ ինքը Փրկիչ մը գտնալուն համար, բայց տակտէն հոգ չունենայ իր եղբօրը կամ քրոջը, կամ իր բարեկամին փրկութեանը համար նէ, և ամենեին անոնց համար աղօթք ըրնէ և կամ անոնց հետ չե խօսի՞ որ անոնք Քրիստոսի ճամբան բերէ, աս մէկ անպատճէ և հակառակ բան մըն է :

Խորհեցնէք տրուաքս աս բաներունե վրայ և աս խորհելը ձեզ օգուտ կը նէ՞ որ ուղիղ դատում ընէք իմանալու ճշմարիտ Զզջումըն ինչ ըլլալը :

## ԳԱՐԱԽՈՅ. ԺԵ:

Ե՞ն որ Օդալուս սկզբանի շարունակ Օդալուս  
մըոյ ողբակ ըլլոյ : Առաջ և ագիկն աղբակ ա-  
պատեհի անհեղ օգնութեան ու պարութեան  
կնոպը ելու որ Աստվածած սկզբ ու անոր ծառ  
առոյէ : Բայլորովէն ինչը Քարեսպասի առշած  
շարունակ նշը ու իր կապակած արդա-  
րութեանը մըոյ իր յոյաը ողբակ դնէ , որ նշ-  
ը սողութեան գործոյ Աստվածած և ընդու-  
նելք ըլլոյ անոր :

Մայր . Տըղաքս , ալ հիմայ գրեթե  
մենք լմընցուցինք մեր աս նիւթին վը-  
րայուլ խօսակցութիւննիս : Աւրախ  
եմ որ ես ձեղ կըրաեսնամկոր այս չափ  
մտադիր իմ խօսքերուս . ուստի քիչ  
մը ատեն ալ ականջնիդի ինձի տըրեք :

Գաղեժար . Մայր , բալոր առ քուկին  
մեղի զրուցած խօսքերէդ կիմանամ  
որ , մէկ մարդ մը իր բոլոր կեանքին  
մէջը դում ընելու վրայ պիտի ըլ-  
լայ :

Անյը . Ե՞ն որ Ճշմարտապէս իր մեղաքերուն վրայ զղ ջում ընելու կըսկըսի , այնչափ ժամանակ զղ ջում ընելու վրայ պիտի ըլլայ՝ մինչեւ որ մէկ հատ ունեցած մեղքն ալ մէկ դի ձգելու ըլլայ : Քանիզի ան պատճառները՝ որոնց համար որ աս զղ ջումը կընէ այսօր , նոյն պատճառներուն համար պիտի պարտաւորի շարունակ զղ ջալու վրայ ըլլալ :

Մեղքը միշտ առելի է բատուծոյ առջեր՝ որ մարդոցը վրայ զըսնը վելու ըլլայ նէ ան թէ ապաշխարող ներուն և թէ անապաշխարներուն վրայ , և ինչ տեսակ բաներու մէջ որ ըլլայ նէ եթէ մեծ ու եթէ պղտիկ : Թէ որ ձեզմէ մէկը եզէկ ինձի անհնաղանդութիւն ըրած ըլլար , և անոյ համար հիմայ Ճշմարիա օդջում ընէց , և ինձմէ ներողութիւն խրնդը ըելու ըլլար նէ , անիկա պատճառ կըլլայ մի որ նորեն վաղը ըրած նուդ վրայ տրտմութիւն մը չունենաք

ներսելնիդ , թէ որ նորէն ինծի ան-  
հնազանդ գտնըվելու ըլլաք նէ : Չէ  
ամենևին չէ . Ճշմարիտ օղջում ընող-  
մարդը էվելօք պատրաստ կըլսոյ սը-  
դալ իր ըրածին վրայ՝ ինչու որ ինքը  
կիմանայ ու կըդգայ թէ ինչպէս մէկ  
մեծ գէշ բան մըն է մեղքը : Եւ ան շր-  
նորհքը որ Վատուած իրեն ցուցըներ  
էր Ք.րիստոսի ձեռքովիր առջի մեղ-  
քերուն թողութիւն տալը , աս զար-  
մանալի սէրը Վատուծոյ ու Փրկիչին  
զինքը խորունկ տրտմութեան մէջ պի-  
տի դնէ , երբոր ինքը տեսնայ որ փոր-  
ձութեան մէջ ինկեր էր , ու ասանկ  
բարութեան ու զթութեան դէմ մե-  
ղանչեր էր :

Կաւ ինքը կիմանայ ներսիդին թէ  
որչափ դիւրին է իրեն մեղքի մէջ իյ-  
նալը :

Ճշմարիտ օղջման մէկ ուրիշ նը-  
շանն ալ աս է : Ճշմարիտ զդջացող  
մարդը զիտէ որ եթէ Վատուած զին-  
քը իրեն գլխուն ձգելու ըլլար , ինքը

մեղքի մէջ օրէ օր պիտի առաջ քա-  
լէր երթար : Ինքը օրէ օր մեղքի մէջ  
պիտի կարծրընար , ու յաւիտենական  
կործանման ճամբուն մէջը պիտի մը-  
նար :

Անիկա գիտէ թէ չողին Առւրբն  
էր՝ որ իր աչվրները բացաւ՝ իր միտ-  
քին աչվրները , որ տեսնայ իր յան-  
ցանքը ու վտանգը . նաև նոյն ինքն  
էր որ իրեն առաջնորդեց մէկ ամեւ-  
նակարող զօրութիւնով ու ներզոր-  
ծութիւնով մը , որ դառնայ ինքը առ-  
Վստուած՝ իր մեղքերը ապաշխարելու  
ու իր յոյսը Տէր ՀՅառուս Քրիստոսին  
վրայ դընելու : Արզգայ ինքը թէ նոյն  
չողին է՝ որ պիտի օդնէ ու զօրու-  
թիւն տայ իրեն իր պարտքը ընելու  
Փրկիչին մէկ հաւատարիմ աշակեր-  
տին պէս : Ինքը կիմանայ ներախոյին  
որ՝ թէպէտ պիտի ջանք ընէ ինքիրմէն  
յաղթելու ան բոլոր մէ դքերը , և ան  
եկած ամէն փորձութիւնները յաղթե-  
լու , բայց իր զօրութիւնը տկար է :

ինքը Պաւղոսին ըստածին պէս կըսէ ,  
“ Վրիստոսի ձեռքով՝ որն որ իս զօ-  
լացուց , ամէն բան կրնամ՝ ընել ” .  
Փել . դ . 13 :

Ամէն իժիր ինքը աս աստուածային  
օգնութեանը համար աղօթք կընէ :  
Կիմանայ որ ինքը Եստուծոյ վրայ կա-  
խումունի , բայց երբ կըսկըսէ ըդ-  
գալ իր զօրութեանը շատ երեխլը՝  
և կըմունոյ իր Եստուծոյ վրայ ունե-  
ցած կախումը , ինքը կիմանայ որ նոյն  
ատենը փորձութիւնը իր վրայ մեծ  
զօրութիւն ունի , և թէ՝ ալ ինքը  
մեղքի մէջ իյնալու մեծ վտանգին  
մէջն է :

Ասկէց ինքը իմաստութիւն կը-  
սորվի , և որչափ ատեն ապրի՝ էվե-  
լօք ջերմեռանդ կըլլայ իր շարունակ  
աղօթքը . որ “ Եստուած զօրութիւն  
տայ իր Հոգիովը հաստատվելուներ-  
քին մարդուն վրայ ” ; ( Ափես . դ .  
16 : ) իր բոլոր խորհուրդներուն վը-

բայ , պդացումներուն վրայ , բաղա  
ձանքերուն վրայ , առաջադրութիւն  
ներուն վրայ :

Աշխիշէնաև Վատաւծոյ խոստմունք  
ները իր քաշած փորձութիւններուն  
ու նեղութիւններուն ժամանակը :  
« Վճռնք որ Տէրոջը վրայ յոյսերնին  
դրած ունին , իսկոց զօրութիւնը պիտի  
նորոգվե ” : Եսայ . իւ . 31 : « Ո՞՛  
վախնաը , ինչու որ ես քու հետոք  
եմ . մի զարհուրիւ ինչու որ ես քու  
Վատուածդ եմ . ես քեզ կը դօրաց  
ունեմ ու քեզի օգնութիւն կընեմ :  
ու ես քեզ կը բռնեմ իմ արդարութեան  
աջ ձեռքովս ” : Եսայ . իւա .  
10 :

Վերջին բանը որ պիտի ցուցը  
նեմ որ միշտ ճշուարիտ ապաշխարութեան  
հետ կերթայ , ան է որ Քը  
բիստոսի քաշած բաներուն վրայ ըուլոր սրտանց մէկ ապաւինութիւն մը  
ըլլայ մեղքի թուլութեան համար ու  
Վատուծոյ ընդունելի ըլլալու համար :

Շամարիտ ապաշխաբողը կըդգոյ  
 թէ իրեն օղջումավը չի կրնար իր  
 մեղքերուն համար հատուցումը ըստ ըս-  
 տել լուսուծոյ : Ինքը պիտի որ իր  
 առաջ թողութիւնը լուսուծոյ շնորհ-  
 քովը պիտի ըլլայ : Ինքը իրաւամբքը  
 թողութիւնը չի կրնար խնդրել . կամ  
 ինքը չի կրնար ըստել որ ապաշխարե-  
 լովը անանկ բան մը ըրած էր որն որ  
 իրեն ներողութիւն տալ տար :

Ինքը ան ներողութեանը արժանա-  
 ւոր ըլլալու մը պէս չի կրնար խնդրել  
 ան իրեն մեղքերը ապաշխարելովը  
 աղէկ բան մը ընելուն պատճառաւը :  
 Քանզի ապաշխարելը ուրիշ բան չէ,  
 միայն թէ իր պարտաւորութիւնն է .  
 որ իրեն արժան է որ ինքը պիտի ը-  
 նէ թէ որ ինքը շնորհք մըն ալ լո-  
 տուծմէ չընդունի նէ . իրաւցունէ իր  
 պարտաւորութիւնն է թէ որ ինքը իր  
 մեղքերուն համար լուսուծոյ սպառ-  
 նացած ամէն պատիժները ընդունելու  
 ալ ըլլայ : Ուէ որ մէկ մարդ մը գէց

բան մը ըրած ըլլայ՝ թէ դուլութիւն  
ըրած ըլլայ՝ կամ մէկ մը սպանած ըլլայ՝  
ու ըլլածին համար պատիժ մը  
քաշէ որն որ օրէնքը սպառնացած է  
ասանկ անիրաւութեան մը դէմ, ալ  
պէտքը չէ՞ Փի իրեն՝ որ ճշմարտապէս  
Օղջում ընէ իր յանցանքին վրայ :

**ՏԵՂԹՔ** շատ անգամ դուք դիտէք  
որ՝ ես պարտաւոր եղեր եմ ձեր ըրած  
յանցանքնուդ համար ձեղ պատժէլու՝ թէպէտ դուք շատ տրտմած  
ըլլալ կերևաք անոր համար, ու բնաւ  
մէյմալ անանկ բան մը չընել կը-  
խոստանաք : Այս ձեր տրտում ըլլալը  
իմ պատիժէս խալքսէլու իրաւունք  
մը չի տրւաւ ձեզի . և ձեզ պատ-  
ժէլս իմին մէկ յանցաւոր ու անիրաւ  
ըլլալս չի ցուցուց : Կաեւ ձեր տրտ-  
ում ըլլալն ալ տեսնալով ձեղ  
պատժէլս չի ցուցուց՝ որ ես անբարի  
ալ էի :

Քանզի կարելի է որ՝ ես տեսայ թէ  
ընտանեաց աղէկութեանը համար կա-

տարելապէս հարկաւոր էր ան ձեր  
պատժըլիլը , թէպէտ և դուք ցաւ  
ունեցաք ու աղէկ ըլլալ ալ խսուսա-  
ցաք :

Թէ որ ալ ես ատեն մը ձեղինե-  
րում ըրինէ անիկա մէկ կատարեալ  
շնորհք մըն էր ձեզի : ‘Զեր տրտում  
ըլլալը իրաւունք չի տրւաւ ձեղի’ որ  
ներողութիւն պահանջէք ինծմէ ի-  
րաւամբք :

Այս մեղքերնուս թողութիւն ըլլա-  
լըկիլը Կոտուծոյ կողմանէ մէկ սոսկ  
շնորհաց գործ մըն է : Թէ որ ինքը  
մեղաւորներուն աս շնորհքը ցուցը-  
ցած ըլլար , մենք տրտունջ ընելու  
իրաւունք մը չի պիտի ունենայինք :  
Դուք տրտունջ ընելու իրաւունք մը  
չունիք թէ որ ձեր յանցանք գործած  
ատենը ես ձեզ պատժեմնէ . քանզի  
գուցէ կրտեմնամ որ ընառնեաց բա-  
րութեանը համար հարկը կըպահան-  
ջէ որ ես ան բանը ընեմ :

Թէ որ Կոտուած վՃռէր , որ իր  
ընդհանուր ատեղծած ըոլոր արարած-

ներուն մեծ գերդաստանին բարու  
թիւնը կըպահանջէ՝ որ առանց մէկ  
ներողութեան մը պատժըվին ան ամէն  
իր օրէնքը կոտրողները, մենք անաւ  
տեն ամենեւին չենք կընար գանգատ  
ընել թէ՝ աս մէկ անիլաւ ու անբարի  
